Հ9-2
87,2

ՊԵՏՀՐԱՏԻ ԵՎԱՆԳԵԼԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

№ 104—107

№ 104—107

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՀԵՂՆԱՐ ԱՂԲՅՈՒՐ

Ցերկրորդ հրատարակությամբ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1956

49

891.99
Ա-91
01 JAN 2009
ՊԵՏՀՐԱՏԻ ԵՐԱՆԱՓԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
19 NOV 2010

№ 101—107

№ 101—107

Арм.
Հ-12694ա

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՀԵՂՆԱՐ ԱՂԲՅՈՒՐ

Ցերկրորդ հրատարակություն

Գос. Публичная библиотека

ՊԵՏՀՐԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1935թ

22774

26 FEB 2013

Գետերաբի տպարան
Գլավլիտ 257, պատվեր 1062
Հրատ. 3376, տիրաժ 5000 (4001—9000)

ՀԱՍՐ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍՀ-Ի Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՐ

3947-87

Ամենասիրելի վարպետ
Ավետիք Իսահակյանից

ՆԱԽԱԲԱՆ

1

Լենինականի հին թաղերից մեկում,— Զորի Բողազում,— վորն ամենայն իրավամբ դեռ կարող է կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում եր աղբյուրների հոչակավոր վարպետ ուստա Միքայելը:

Թեև նա արդեն վաթսունհինգ տարեկան եր, բայց ծերությունը չեր նրա մեռնելու պատճառը, վորովհետև նա դեռ ամրակազմ եր և առողջ: Այնքան ամրակազմ եր նա և այնքան առողջ, վոր թվում եր, թե ահա վեր կկենա, կհագնի իր ավանդական արխալուղը, կդնի իր ավանդական չուխան և մի անգամ չմելով իր պայծառ ճակատը՝ դուրը բաց կանի և նորից դուրս կգնա դեպի աշխարհ...

Սակայն նա պատրաստ եր և մեռնում եր մահվան դատապարտվածի անխռովությամբ և անհետաձգելի մահով: Նա մեռնում եր, վորովհետև հասել եր իր նպատակին,

վորովհետև վերջացրել եր իր հաշիվները աշխարհի հետ: Նա դրսում այլևս վոչինչ չուներ անելու:

Իր վարպետության վողջ քառասուն տարիների ընթացքում նա ճիշտ այդպես էլ համոզված եր, վոր յերբ ավարտի իր քառասուներորդ աղյուսը՝ պիտի մեռնի: Նա դիտմամբ եր նպատակ դրել այդպիսի մեծ թիվ, վորպեսզի հնարավորին չափ հեռու հրեր յուրաքանչյուր կյանքի վերջում կանգնած մթին ստվերը,— մահը... Յերբ նա դեռ քսանվեց տարեկան եր և ավարտեց առաջին աղյուսը, քառասունը նրան թվաց այնքան չատ և այն իրականացնելու վերջին կետն այնքան հեռու... Կառուցելով ևս չորս աղյուս, նրան նույնիսկ թվաց, վոր ինքը յերբեք էլ չի հասնի վերջինին, վոր իր նպատակը կմնա կիսակատար: Յեվ նա սկսեց դղջալ, վոր իր վայելուչության չեմքի վրա յերդվել եր քառասուն աղյուս կառուցել և վոչ թե յոթ կամ տասներկու...

Սակայն տարիները ու աղյուրները անկասելի կերպով չարվեցին, և նա մի որ մեծ զարմանքով նկատեց, վոր արդեն կառուցել է քսաներորդ աղյուրը, ուրեմն և, արդեն կիսով չափ կատարել է իր նպատակը:

Յերեսունչորսերորդի վրա հիվանդացավ և հույսը կորեց: Կարծում եր, թե դա վերջինը կլինի: Բայց հետո առողջացավ: Իսկ յերբ առողջացավ՝ ամենայն պայծառությամբ դիտակցեց, վոր այժմ արդեն կառուցելու քիչ բան եր մնացել, և վոր այլևս չտատալու վոչ մի կարիք չկար:

Յեվ նա փորձեց չչտապել: Փորձեց, բայց վոչինչ դուրս չեկավ: Յերեսունչորս աղյուրի վրա նա միակերպ արագությամբ եր չարժել իր ուղեղն ու ձեռքերը և այժմ անհնար եր չարժման արագությունը վոխել: Ինչպես անցյալում, այնպես էլ ապագայում, նա պետք է տարեկան մի աղյուր կանգնեցներ՝ իրրև դեպի մահ տանող իր ճանապարհի ուղենիշ... Յերբ այդ դիտակցեց՝ նա ընկավ ֆատալիզմի մեջ: Տեսավ ու զղաց, վոր ինքն անկարող եր վոխել իր մահվան ժամկետը.— մի ժամկետ, վորը սակայն, ինքն եր սահմանել իր համար...

Յեվ նա չարունակեց կառուցել ու ախոռտալ, վոր իր կյանքի յերկտասարդ տարիներին նպատակ եր դրել քառասուն աղյուր և վոչ թե յոթանասունյոթ կամ հարյուր ու մեկ: Այժմ նա համոզված եր, վոր յեթե մինչև իսկ յեռապատկեր աղյուրների թիվը, դարձյալ կլրացներ այն: Յեվ նույն ներշնչումը, վորն իրեն դերեզման և տանում դործն ավարտելուց հետո, կըպահպաներ իրեն: Բայց այժմ այդ միտքն այլևս խղուր եր և միայն մի բան եր մնում ուսուա Մկրտչին.— մեռնել: Ու նա մեռնում եր դանդաղ, ախուր և խորհրդաստ մի մահով:

Այդ մահն սկսվեց վերջին աղյուրը կառուցելուց անմիջապես հետո: Յերբ այն լիովին ավարտվեց, ուսուա Մկրտիչը հանկարծ զղաց, թե ինչպես պաղեց արյունն իր յերակներում և այնտեղ,— իր ներսում,— կոտրվեց մի բան.— յերևի կյանքի զսպանակը: Նա յեկավ տուն, հանվեց, պառկեց, վորպեսզի այլևս յերբեք վեր չկենա...

***

Լենինականի հին թաղերից մեկում,— Զորի Բուզաղում,— որն ամենայն իրավամբ զեղ. կարող է կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղբյուրների հռչակավոր վարպետ ուստա Մկրտիչը:

Տանը դանվում էին միայն ինքն ու իր հարսը: Հարսն էր, որ բարձը դրել էր ուստայի մեջքի յեռեվը և այժմ ուստան հենված այդ բարձին, լուսամուտից նայում էր դուրս՝ դեպի աշխարհը, որից ինքը չուտով պիտի հեռանար: Իր տունը չթողած էր այդ վոչ խորը ձորակի մի լանջին և այժմ լուսամուտից յերեվում էին տան առջևի փոքրիկ հրապարակը և յերկարահասակ բարդիները նրա առջևամասում, այնուհետև յերևում էին ցածրում դտնվող յերկու ուրիշ անների տափակ կտուրները՝ ջրհորդաններով և յերևում էին նրանց դռների առջևում տնկված բարդիների արևոտ դագաթները, որ խոյացել էին կտուրներից բարձր և տավերի պատառներ էին դցել կտուրների վրա: Այդ յերկու անների արանքից յերևում էր ձորակի տափակ ու լայն հատակի մի ընդարձակ պատառ՝ այնտեղով հոսող սակավաջուր առվակով: Ցերևում էր մի վին, որ ջրի վրա կառացած՝ կարծես էր լճանում: Ցերևում էին նրա սպիտակ, լիքը վոտները և նուրնիկ ծնկածալերը յերկարավուն զուդ փոսիկները: Ուստա Մկրտիչը նայում էր դրանց և նրա միտքը լցվում էր անվերադարձ մի կարոտով: Այդ առուդ ու դեղեցիկ վոտները հենց ինքը կյանքն էր, որ այլևս չէր վերաբերում իրեն: Անկիրք մի հուղում լցվել էր նրա սիրտը և նա ուզում էր մեռնել իր վերջին հայացքը դրանց ջերմ սպիտակությանը հառած: Բայց ահա և մի ձի, որ արածելով վարձ խոտը, մտնում էր իր տեսողության շրջանակի մեջ: Ձիու յուրաքանչյուր շարժումից խլրտում էին մկաններըը նրա կրծքի և գավակի վրա: Ի՛նչ ձիդ, կլոր և փայլուն մկաններ, ի՛նչ առողջ ձի: Ահա փայլատակեցին նրա սպիտակ առատները: Ահա նա թափահարեց պլուխը վեր ու վար և նրա բաշը ցնցվեց: Ի՛նչ դեղեցիկ բաշ: Վոչ: Վոչ թե հինող վոտներին, այլ այդ ձիու մկաններին պետք և հասել հայացքը մեռնելուց առաջ:

Դիմացի լանջի վրա նույնպես աներ են: Վերևում նրանք ձգվում են յերեք յերկար փողոցներով, իսկ ներքևում կանգնած են առանձին-առանձին և նրանցից յուրաքանչյուրի առջև ուստա Մկրտչի տան նման՝ կա մի փոքրիկ հրապարակ,— մեկական անապատ, բայց հայաթներ: Այդ բաց հայաթների առջևամասերում նույնպես, կանգնած են բարձր, վոսկեգագաթ բարդիներ: Այդ բաց հայաթներից յուրաքանչյուրում նույնպես, մի ծայրում ջրհորն է, մյուսում՝ հավաքատը, իսկ յերկար չղթայով մի ծառից կապված՝ նիրհում է հավատարիմ, սպիտակ գամփռը: Նայում է ուստա Մկրտիչը մորմոք կարոտով այդ աշխարհին: Ահա և մի աղբյուր.— իր կառուցած առաջին աղբյուրը: Նա կանգնել է մի հովասուն ուռենու տակ, այն ճանապարհի յեզրին, որը ձորի ներքևից, հենց առվակի մոտից, դիք բարձրանում է դեպի փողոցները: Մի մեծ խորանարդ քար կազմում է աղբյուրի գլուխը և խողովակը դուրս է գալիս նրա մեջից: Կարճ, լայն, փայլուն խողովակ, որից ահա

***

Լենինականի հին թաղերից մեկում,— Զորի Բուզաղում,— որն ամենայն իրավամբ պետք կարող է կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղքատների հուչակավոր վարպետ ուստա Մկրտիչը:

Տանը գտնվում էին միայն ինքն ու իր հարսը: Հարսն էր, որ բարձը դրել էր ուստայի մեջքի տակը և այժմ ուստան հենված այդ բարձին, լուսամուտից նայում էր դուրս՝ դեպի աշխարհը, որից ինքը չուտով պիտի հեռանար: Իր տունը չինված էր այդ վոչ խորը ձորակի մի լանջին և այժմ լուսամուտից յերեվում էին տան առջևի փոքրիկ հրապարակը և յերկարահասակ բարդիները նրա առջևամասում, այնուհետև յերևում էին ցածրում գտնվող յերկու ուրիշ անների տափակ կտուրները՝ ջրհորդաններով և յերևում էին նրանց դռների առջևում տնկված բարդիների արևոտ դաշտերը, որ խոյացել էին կտուրներից բարձր և սուլելի պատառներ էին դնել կտուրների վրա: Այդ յերկու տների արանքից յերևում էր ձորակի տափակ ու լայն հատակի մի ընդարձակ պատառ՝ այնտեղով հոսող սակավաջուր առվակով: Ցերևում էր մի կին, որ ջրի վրա կռացած՝ կարպետ էր լվանում: Ցերևում էին նրա սպիտակ, լիքը վոտները և նուրնիկ ծնկածալերի յերկարաձուն գուդպի փոսիկները: Ուստա Մկրտիչը նայում էր դրանց և նրա սիրտը լցվում էր անվերադարձ մի կարոտով: Այդ առուդդ ու պեղեցիկ վոտները հենց ինքը կյանքն էր, որ այլևս չէր վերադառնում իրեն: Անկիրք մի հուշում լցվել էր նրա սիրտը և նա ուզում էր մեռնել իր վերջին հայացքը դրանց ջերմ սպիտակությանը հառած: Բայց ահա և մի ձի, որ արածելով կարճ խոտը, մտնում էր իր տեսադաշտության շրջանակի մեջ: Ձիու յուրաքանչյուր շարժումից խլրտում էին մկանները նրա կրծքի և գավակի վրա: Ինչ ձիգ, կլոր և փայլուն մկաններ, ինչ առույգ ձի: Ահա փայլատակեցին նրա սպիտակ առամները: Ահա նա թափահարեց պլուխը վեր ու վար և նրա բաշը ցնցվեց: Ինչ դեղեցիկ բաշ: Վոչ: Վոչ թե հինող վոռներին, այլ այդ ձիու մկաններին պետք է հառել հայացքը մեռնելուց առաջ:

Դիմացի լանջի վրա նույնպես տներ են: Վերեվում նրանք ձգվում են յերեք յերկար փողոցներով, իսկ ներքևում կանգնած են առանձին-առանձին և նրանցից յուրաքանչյուրի առջև ուստա Մկրտչի տան նման՝ կա մի փոքրիկ հրապարակ,— մեկական անապատ, բայց հայաթներ: Այդ բայց հայաթների առջևամասերում նույնպես, կանգնած են բարձր, վոսկեղազաթ բարդիներ: Այդ բայց հայաթներից յուրաքանչյուրում նույնպես, մի ծայրում ջրհորն է, մյուսում՝ հավաթունը, իսկ յերկար շղթայով մի ծառից կապված՝ նիրհում է հավատարիմ, սպիտակ գամփռը: Նայում է ուստա Մկրտիչը մտմտոք կարոտով այդ աշխարհին: Ահա և մի աղբյուր.— իր կառուցած առաջին աղբյուրը: Նա կանգնել է մի հովտաձոն ուռենուտակ, այն ճանապարհի յեղերին, որը ձորի ներքևից, հենց առվակի մոտից, դիք բարձրանում է դեպի փողոցները: Մի մեծ խորանարդ քար պաղում է աղբյուրի գլուխը և խողովակը դուրս է գալիս նրա մեջից: Կարճ, լայն, փայլուն խողովակ, որից ահա

քառասուն տարի չէ, որ հորդ հոսում է ամենամեծ ջուրը և թափվում իր առջևի դուռն մեջ: Դլխաքարը մարդկանց ձեռների չփումից և դուռը ջրի հպումից, հղկվել են և փայլում են ճյուքաճի պես: Դլխաքարը կարմրավուն լեռ քար է և թվում է, թե պյումրու-հինների ձեռների ջերմությունից է նա կարմրել, իսկ դուռը կապտավուն լեռ քար է և թվում է, թե ջրի սառնությունից է նա կապտել... Ուստա Մկրտիչը չի կարող ասել, թե ինչն է տեսնում և ինչն է հիշում, բայց ահա այդ ամենն իր աչքի առջևն է՝ վառ ու կենդանի...

Դիմացի լանջի վերևում, փողոցներից մեկում, փոշի բարձրացավ: Բարձրացավ փոշին և արագ առաջանում է դեպի այն կողմ, ուր ձորի ծայրը հետզհետե ցածրանում է, անհետանում, աննկատելի կերպով ձուլվելով քաղաքի փողոցներին: Ինչ փոշի չի դա, երբ քամի չկա և հանդարտ են բարդիների գագաթները: Այդ խճարկե ավտո է անցնում այնտեղով: Ցեվ իրոք, ահա լսվեց նրա հռնդյունը, որ նախազգուշացնում է փողոցի մեջտեղում խաղ անող յերեխաներին.— հեռո՛ւ... կնկնեք ավտոյի տակ... կմեռնեք... կորչի մահը... հեռո՛ւ...

***

Լենինականի հին թաղերից մեկում,— Ձորի Բաղում,— որն ամենայն իրավամբ դեռ կարող է կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մենում էր պղրյուրների հռչակավոր վարպետ ուստա Մկրտիչը:

Նա դեռ անթարթ նայում էր լուսամուտից դուրս և նրա աչքերի առջև դեռ աշխարհն էր, յերբ դռան-ում,— իր տան մի ջանցքում,— լսվեցին խոսակցության չտասպ ձայներ և անմիջապես դրանից հետո տնյակ լցվեցին իր հին ընկերները:

— Մկրտի՞չ...

Ուստա Մկրտիչը նայեց նրանց:

— Ա՛յ մարդ, ես ի՞նչ կենես: Ընչի՞ յես պառկե...

— Վերջի պառկն է, ներող եղիք,— ասաց ուստան և ավելացրեց.— Նստեք: Հարս Ջան, աթոռ տուր:

Հարսն աթոռները մոտեցրեց անկողնին և ինքը նորից դուրս գնաց: Ըստ յերեւույթին նա միջանցքում կամ մյուս տնյակում աշխատում էր:

— Դուն իմ քովս նստի, հալի,— դիմեց ուստան մեկին, ով պատրաստվում էր նույնպես նստել աթոռի վրա:— Դուն մեր բոլորի ապիղ ախպերն ես...

Տիրեց հանկարծակի լռություն: Բոլորը հասկացան, որ իրոք, ուստան մեռնում է, յեթե ներեց այդ մարդուն և հրավիրեց իր անկողնու վրա: Ցեվ յերբ հալին նստեց, ուստան դիմելով բոլորին, ավելացրեց.

—Եղ մասին էլ հեչ խոսք չեղնի... Ե, ի՞նչըղ ե ձեր քեֆը, ախպեր տղեք...

— Մեր քեֆն ի՞նչ, դուն քուվդ ըսա,— պատասխանեց Սվետիքը, որի կյանքն անցել էր կամուրջներ կառուցելով:— Ըսել է՝ պառկար, ելի, Մկրտիչ ախպեր... ե՛, մենք էլ ահան կլսենք ուշի նստոցը: Գուշա, որ եզվան էլ մեր գառնը չոքի...

— Պառկա... Նալատակս կատարված է... Մնալն ավելնորդ է...

Ուստան վերմակի տակից հանեց սպիտակած ձեռքը, որ նկատելորեն դողդողում էր, և շարունակեց.

— Ցես հըլը չեմ վախտս յերջմունք եյի կերե, որ քառասն ախպուր պիտի չինեմ: Սեդրակը տեղակ եր.—լուս իջնի ենոր դերեզմընին: Գևևորն եյ եր տեղակ.— տոպած ողորմի աղիդ Ղևևորիս հոգուն: Միխակն եյ դիտեր.—Ֆռնճոնց Միխակը: Սիմավոնին եյ եյի լսե...

Հանկարծ ուստան հենվեց մի թևի վրա ու վեր բարձրացավ:

— Ի՞նչ բան է: Հմ՞չ մեկը չե մնացե: Բոլորն եյ մեռա՞ն...

— Ցես եյ եմ տեղակ,— չընչաց մեկը:

Ուստան հանդստացած իջավ դեպի բարձը:

— Դուն եյ ես տեղակ, Սվետիք: Ձլմարիտ է...

Նա լռեց մի քիչ, ապա ավելացրեց.

— Ու եսպիսով, իմ ախպուրս եյ ցամքավ...

Սարդիսը ծանր հառաչեց ու խոսեց.

— Աչխըրքի պրենքն եղավես ե, Մկրտիչ: Բոլորինն եյ մե որըմ պիտի ցամքի: Հըմը մարդ կա, որ իրան նանեն հիչատակ ունի, մարդ կա՝ որ չունի: Քու ախպուրդ ցամքավ, հըմը քառասն հատ կա քու տեղակդ: Ենոնք քեղի կորչնեն քառասն բերնով: Ջրեդ խմող ամմեն մարդ քեղի պիտի հիչե հուբ ամիսան...

Սակայն ուստա Մկրտիչն այլևս չեր լսում նրան:

Անչարժ հայացքը մի կետի հառած և ուշադրությամբ ուրիշ տեղ վերացած՝ նա կրկնեց ինքն իրեն.

— Իմ ախպուրս եյ ցամքավ Հեղնար-ախպուրի պես...

Բոլորը քար կտրվեցին: Տիրեց հանկարծահաս, բացարձակ լռություն: Լսելով Հեղնար-աղբյուրի անունը, նրանք զարմացան, Թե այդ ի՞նչպես եր պատահել, որ բոլորովին մոռացել եյին այդ: Հեղնար-աղբյուրը... Նա չեր մտնում ուստայի կառուցած քառասուն աղբյուրների շարքը, և չեր եյ կարող մանել,— այնքա՛ն արտասովոր, այնքա՛ն զարմանալի և այնքան անհասկանալի յեր նա... Ճիշտ և, սուրբ գործերն ու հոգսերը վանել եյին այդ մարդկանց աղեղնակից բոլոր հին հուշերը, բայց և այնպես զարմանալի յեր, որ նրանք մոռացել եյին նույնիսկ այդ,որը, թվում եր, Թե անհնար եր մոռանալ: Դուցե պատճառն այն եր, որ Հեղնար-աղբյուրն այլևս համարյա Թե դադարել չուներ աշխատելի վրա: Համենայն դեպս, նրա հրաշքը, որ տեղի եր ունեցել քսան տարի առաջ, վերացել եր հենց նույն որը, և այնուհետև եյ ջերմանք չեր կրկնվել:

— Հեղնար ախպուրը,— չընչաց Սվետիքը,— հասատատ որ, ախպերտինք, Հեղնար-ախպուրը...

Նրա պատկերը բոլորի ուղեղներում հանկարծ վերակենդանացավ պայծառ ու վորոշակի և նրանք բոլորը զարմացան: Ցավ դուցե զարմացան ավելի շատ, քան այն որը, յերբ հրաշքը տեսնում եյին իրենց աչքերի առաջ... Այն ժամանակ մարդիկ հավատում եյին դերբնական յերևույթների և հրաշքի

հայտնվելը քնական էլին համարում: Իսկ այժմ դա թվում էր այնքան անհավանական....

Աղասին վեր կացավ աթոռից և նստեց մահճակալի վրա, հանդուգն մոտ:

— Մկրտիչ ախպեր,— ասաց նա,— մենք ամմենքս էլ քու ախպերը տղեքն ենք, ու ոտար մարդ չկա եստեղ: Իսկ դուն, վո՞վ դիտես, գուցե թե իսկապես, ալիսուր նստիս դուռնդ չոքած ուղտի վրա ու երթաս խաղողվիս հավիտենական քյարվանին: Ըստ մեզի, Մկրտիչ ախպեր, գոնե հիմի ըստ, թե եղ ի՞նչըղ եզավ, որ հրաչքը պատահավ: Չէ՞ որ դուն ինքդ էյիր չէիր հեղնար-ախպուրը: Իսկ հրաչքն ախըր ստապածային բան է...

Ուստա Մկրտիչը նկատելիորեն մոայլվեց: Ու մինչդեռ բոլորն անակընթարթի սպասում էյին, նա սկսեց յերկար, շատ յերկար մտածել: Ցնդավ մի րոպե, յերբ թվաց, թե նա բոլորովին էլ չի մտածում և յերբեք էլ ոչդ հարցին չի պատասխանի: Բայց նա նորից վերմակի տակից հանեց իր ձեռքը, վորն այժմ ավելի յեր դողդողում, և ասաց.

— Ախպուրը ձեռացպործ է, հրաչքն՝ անձեռացպործ: Իմ չինածս մեննակ սովորական ախպուրն եր, իսկ անսովոր հրաչքն ստապած ինքն եր դրե ենոր մեջ: Ցես ի՞նչ ըսեմ ձեզի, ախպեր տղեք, յեթ սր յես ինքս էլ մեննակ եղբանը դիտեմ: Վոնչ ստապած վրնա ախպուր չինե, վոնչ մարդը հրաչք: Ցես հոդածին եմ: Ցես կրնամ պարզե մեննակ իմ ախպուրս, ստապած էլ թող պարզե իրան հրաչքը՝ թե որ կկամենա:

— Ու թե որ մենք արժանանանք ենոր տեսութենը,— ավելացրեց Ալեքսիքը՝ հառաչելով:— Ամմեն

մեկիս մե ուսի վրա մե բեռըմ մեղք կա կամա, մեկել ուսի վրա մե բեռըմ մեղք՝ ակամա...

— Իսկ իմ մեջքիս վրա մեննակ մե բեռըմ մեղք կա,—ծանր արտասանեց Հայկին, վորը մինչ այդ լուռ եր և այժմ զարմանալի կերպով դունատվել եր,— հըմը եղ մե բեռն աչխըրքի մեղքը կկշռքե...

Ուստա Մկրտիչն իր ձեռքը դրեց նրա ձեռքի վրա.

— Մեղավորը յես եմ, հայկ: Ցես ինքս ըսի, որ եղ մասին էլ խոսել հարկավոր չէ, հըմը յես ինքս էլ բացի ես խոստակցութենը: Ներող եղի...

Այստ հանկարծ թախիծով ժպտաց և շարունակեց.

— Մարդու սիրտը տան պես է: Ընձի իմաց են տվե, որ չուտով տունս պիտի քանդվի: Իմաց են տվե, որ երեխոցս դուս հանեմ: Ե՛, յես քառասուն երեխա ունեյի, ենոնք էլ դուռն են: Էլ վո՞վ է մնացե նեսը: Նես աշեմ, տեսնիմ՝ լիքն են: Եդոնք իմ խոսքերս են, որ հնարք չեմ ունեցե դուս բերելու:—Դուս հանե երեխոցդ,—կսեն ընձի,—տունդ պիտի քարուքանդ եղնի, ուստա Մկրտիչ... Ե՛, յես վորի՞ն դուս հանեմ, ժամանակ չէ մնացե: Տե՛, յես էլ դուս հանեցի իմ ամմենքեն սիրած, ամմենքեն լավ երեխա: Ներող կեղնիս, հայկ...

Վորպեսզի խոսակցությունը մի այլ կողմ թեքի և հայրն դուրս հանի իր ծանր վիճակից, Սարգիսը հարցրեց.

— Երեխա ըսիր՝ միտքս ընկավ.— աղեղ չկիսի՞ աբժանանա քու տեսութենդ...

— Հարսս հեռուիկիր եր տվե: Պատասխանն ստացանք: Ձամբա և ընկե: Կհասնի՞ թե չի հասնի՝ ասպած

պետ: Մասկվայից մինչեւ եասեղ չորս որվա ճամբա է, հրմը եասից մինչեւ յերկինք՝ չորս րոպե:

— Մկրտի՛չ,—հանդիմանական և հարցական կերպով դիմեց նրան Աղասին:— Ինչ ես պլուխդ քցե՝ մեռնիմ, հա՛ մեռնիմ: Մե դուցդ ասպած ավել, վեր ելար...

Ուստան անհույս կերպով ձեռքը թափահարեց և անչարժ մնաց: Նրա չնչառությունը հաղիվ էր նկատվում: Մի քանիսը վեր կացան, մոտեցան լուսամուտին, բայց արեւն այն և սկսեցին ծխել: Հետո կիսաձայն խորհրդակցեցին, փորձելով վորոշել, թե յերբ կմեռնի ուստա Մկրտիչը: Իսկ հետո Սարգիսը դնաց դեպի դուռը և հարցրեց կանչեց:

— Լսե, աղիկ ջան,— ասաց Աղասին նրան, բայց հանկարծ նկատելով նրա կարմրած աչքերը, ընդհատեց ասելիքն ու խրատեց.—Լաց ջիչ եղի: Աչերդ որենքն եդպես և, իսկ Մկրտիչն էլ մենծ մարդ է: Ընչի՞ վատնջվիս: Գնա: Գնա լվացվի, արի հվալընդի քովը: Մենք հիմի կերթանք: Իրիկվա կողմը նորից կուգանք, հրմը, բան և, յեթե մինչեւ մեզ ուստի պրուեթունը դեչըցավ, պրկեցի մռնչու հետ մեղի իմաց առ: Մենք բոլորս էլ ենտեղ ենք,—չինուվհան վրա...

* * *

Լենինականի հին թաղերից մեկում,— Ջորի Բաղդադում,— վորն ամենայն իրավամբ դեռ կարող է կրել Գյոամբի անունը, իր վոքրիկ տան մեջ մեռնում եր աղբյուրների հաշվակալող վարպետ ուստա Մկրտիչը:

Յերբ այցելության յեկած նրա ընկերները դնացին, նա դեռ պառկած եր անդդա, անշարժ: Թեև նա չեր կորցրել իր գիտակցությունը, բայց անտարբեր եր դարձել դեպի աշխարհը: Այլևս վոչ մի միտք չեր հուզում նրան, վոչ նույնիսկ Հեղնար-աղբյուրի հուշը: Այժմ նրա ուղեղի փակվող դարբասներից ներս եր սպրդում միայն այն, ինչ վոր գոնվում եր անմիջական իր տեսողության դաշտում, իր աչքերի առջև: Իսկ այնտեղ գոնվողն այժմ արդեն վոչ թե դրսի ամբողջ տեսարանն եր, այլ չգիտես ինչու՝ լոկ աղբյուրը,— իր ուղեղի և ձեռքերի այդ առաջին գործը...

Նա հոսում եր զարմանալի վճիտ,— ավելի վճիտ, քան յերբևիցե: Թվում եր, թե ջրի փոխարեն ուստա Մկրտչի կյանքն եր հոսում այնտեղ, և ահա հենց այդ եր պատճառը, վոր ուստան պատռվել եր ու մեռնում եր... Բայց փակել խողովակը՝ նա չեր ցանկանում նույնիսկ այդ րոպեին:

Իսկ հետո թվաց, թե այնտեղ հոսողը բոլորովին էլ իր կյանքը չեր, այլ յերկրի արյունն եր, վոր նշանակված եր նրա զավակների յերակները կյանք լցնելու համար, իսկ ինքը, ուստա Մկրտիչը, մի ավորական դյումբեցի յեր, վորին սակայն, վիճակված եր յեղել բաց անել իր յերկրի քառասուն աղբյուրներն իր ժամանակակիցների համար, իր յերկրակիցների համար: Ցավ նա դոհ եր այդ մեծ, այդ բարձր պատվից...

Վերջնականապես փակվելուն արդեն բոլորովին մոտ՝ հանկարծ նորից, դուցե միայն մի քանի րոպեով, յետ դնացին ուստա Մկրտչի ուղեղի դարբասա-

ՀԱՅԿՈՄԵՍԿԱՎԿԱՍ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ГНКР-Арм.ССР

վեղկերը և նա, իր առաջին աղբյուրից հետո, հիշեց նաև Ճամբակեսի քսանմեկերորդ աղբյուրը և վերջին, քառասուներորդ աղբյուրը, որոնք իր կյանքի համար ունեցել էին վճռական նշանակություն....

Քաղաքի գլխավոր փողոցներից մեկի վրա, փողոցի այն մասում, ուր միայն միհարյանի բնակարաններ կային, գտնվում էր մի չենք՝ մյուսներից տարբեր: Մինչդեռ բոլոր մյուս չենքերը կանգնած էին միահավասար չարքով, այդ մեկի ճակատը դռնվում էր մի քիչ ավելի յետ,—խորն ընկած: Մայթի և չենքի միջև դետինը փորված էր մի հարկի խորությամբ և մայթի պատնեշից քարե սանդուխքն իջնում էր ներքև, դեպի պատի հիմքը: Սակայն այդ ներքին հարկը բնակարան չէր կամ նկուղ: Պատն այնտեղ խուլ էր ամբողջովին և նրա վրա կար միայն մի խողովակ: Դա ուստա Մկրտչի քսանմեկերորդ աղբյուրն էր: Այդ խորության հատակն ամբողջովին աղբյուրի գետն էր՝ ջրով լի, որը մշտապես թրջում էր սանդուխքի վերջին աստիճանը:

Ցերեկ ջուր խմելու համար ներքև իջած անցորդը նայեր վերև՝ նա իրեև առաստաղ կտեսներ տախտակե պատշգամբը, որ լինելով մայթին հավասար, տան պատից մեկնվել էր դեպի մայթը, կիսով չափ ծածկելով իր տակի խորությունը՝ հավերժահոս աղբյուրով: Աղբյուրի ճակատին, տան սև պատի մեջ, դրված էր մի կարմիր քար՝ փորագրված տառերով: Այնտեղ տան տերը, որ վաղուց էր ապրել ու մեռել, թողություն էր խնդրում իր մեղքերին և աղերսում էր անցորդներին՝ բարեմաղթել իր հոգու համար: Աղերսի տակ, աղբյուրի վտյուն, գեղին

խողովակն էր, միրի ներքև արծաթավուն էր՝ կարծես ջրով գոծված: Հակառակ սովորականի, խողովակն իր արմատի և բերանի մոտ ավելի նեղ էր, իսկ մեջտեղում՝ ուռուցիկ: Բերանի վրա սակայն, նրա պռունգները լայնանում էին ու յերկմզքվում՝ խողովակը նմանեցնելով գոյություն չունեցող կենդանու բերանի: Ջուրն այնտեղից թափվում էր դուրը և լցնում այն: Զգացվում էր, թե ինչպես ջրի հետ միասին, խողովակից դուրս էր գալիս նաև մի ցուրտ թարմություն:

Դա՝ միակ աղբյուրն էր, որի կառուցման համար հետազոտում այնքան ղղջացել էր ուստան: Կառուցելիս նա չէր ըմբռնել, թե ինչ էր կառուցում, որովհետև տան և աղբյուրի ճիշը հնարել էր մոչ թե ինքը, այլ տան տերը: Իսկ յերբ ըմբռնել էր՝ այլևս ուշ էր յեղել: Ցեխ ուստային մնացել էր միայն անիծել, որ աղբյուրի ջրի նման յերկար լինի տանտիրոջ մոչ թե կյանքը, այլ կյանքի դառնությունը, որ անցորդներն աղբյուրի ճակատին կարդան մոչ թե աղերսի խոսքեր, այլ հայհոյանք, որ առաված լսի մոչ թե բարեմաղթություններ, այլ նզովք... Իսկ յերբ իջել էր ուստայի բարկությունը՝ նա դադարել էր անդադար անիծելուց և թքելով այդ տան ճակատին, այլևս չէր անցել նրա մոտով...

Ցեխ իրոք, ջուր խմելու իջնող ամեն անցորդի այնպես էր թվում, թե ինքը մտնում է այդ հանգիստավոր տան հովանավորության տակ: Ջուր խմելու իջած ամեն անցորդի այնպես էր թվում, թե ինքը խոնարհվել է յերկրպագության: Ջուր խմող ամեն անցորդի այնպես էր թվում, թե ինքը ծծում է հնագան-

դության թուլյնը։ Ցեվ Ջուբ խաած ամեն անցորդի այսպես եր թվում, թե ինքը դատապարտված է՝ անդադար նալի կերպով։

Հեղափոխությունից հետո, աղատագրության հենց առաջին որը, ուստան վերցրել եր իր սրածայր մուրճը և չտապել այնտեղ՝ աղբյուրի դլխադիրը վոչնչացնելու։ Բայց հասնելով տեղ, նա տեսել եր, թե ինչպես իրենից առաջ, ո՞վ դիտե ովքեր, արդեն վոչ միայն ջնջել եյին աղբյուրի դլխադիրը, այլև կըտրել, անհետացրել եյին տեսլի սլատչվամբը։ Տասնըհինդ տարուց հետո առաջին անդամ՝ արվը խաղում եր վոսկեդեղին խաղովակի հետ։

Ցեվ ահա այդ եր յեղել պատճառը, վոր ուստան, աղատագրության հենց առաջին որվանից, գնացել եր ուր վոր կանչել եյին իրեն և աչխատել... Աչխատել եր, կառուցել եր իր մնացյալ աղբյուրները, և մի որ, հարմիր քարախոչով ծածկված կաչվի գոդնոցը կապած, իր փոքրիկ մուրճը ձեռքին, ներկայացել եր տեքստիլ գործարանի վարչության։

Տեքստիլ գործարանի թաղամասում բոլոր բնակարաններն ունեյին իրենց ջրի ծորակները, բոլոր հիմնարկներն ու խանութները նույնպես, ունեյին իրենց ջրի ծորակները։ Ուստա Մկրտիչն ինքն եր կավե լայն խաղովակներով ջուրը բերել թաղամաս և թողել, վորպեսզի ուրիշ,—նոր,—արհեստավորներ, յերկաթե նեղ խաղովակներով բաժանեն այն՝ բոլոր չենքերին։ Ցեվ բոլոր չենքերը լի ու լի ատացել եյին իրենց բաժինը։ Սակայն չնայած դրան, ուստան մխոք եր հղացել մի սովորական աղբյուր կանգնեցնել դըրսում, փողոցներից մեկի վորևե անկյունում։ Վար-

չությունը, աչխատելով չվիրավորել սիրված վարպետին, զգուշ մերժել եր նրա առաջարկը՝ աղբյուրը համարելով բոլորովին ավելորդ։

— Ավելորդ վո՞րն է,—պնդել եր ուստան։—Թող Ջուրն ինքնիրան վազե։ Ձեղնեն ի՞նչ կերթա։ Ձամբորդ կանցնի՝ կխմե, վառ մարդ կանցնի՝ կխմե, վառված սիրտհար կանցնի՝ կխմե։ Եղոնք խո չե՞ն կրնա ամեն բոպե մոնի տները՝ ժանդոտ ջուր խմելու...

Վարչության մեջ ժպտացել եյին ուստայի հայտնի առելության վրա՝ յերկաթե ծորակների հանդեպ, բայց նորից եյին մերժել, առարկելով, վոր ավելորդ գումար չկա՝ ճամբորդների, վառ մարդկանց և սիրահարվածների համար աղբյուր կառուցելու։ Այն ժամանակ ուստան հայտնել եր, վոր ինքը կաչխատի մեն-մենակ, արտաժամյա, առանց վորևե վարձատրության, բայց աղբյուրն անպայման կկառուցի։

Ցեվ սկսել եր աչխատել կեսորներից հետո, մինչև մութն իջնելը, և աչխատանքի ընթացքում ավելի և ավելի համոզվել, վոր այդպես ավելի լավ է, վոր այդ աղբյուրն անպայման պետք է կառուցվեր միայն իր ուժերով, բոլորովին ձրի, իրրև նվեր։ Ձե՞ վոր դա իր վերջին, իր ամենավերջին աղբյուրն է...

Ինչպես իր բոլոր այն աղբյուրների վրա, վորոնք մակագրություններ եյին կրում, այնպես էլ այդ վերջինի դլխաքարին, ուստան իր սեփական ձեռքով եր քանդակել բառերը։ Մի քառակուսի, զարդաքանդակ քվանտակի մեջ, նա վիմագրել եր.—«Կառուցավ հաղթյուրս այս ի արտա ժամու, վասն չնչո փրկության՝ ուստա Մկրտիչը»։ Գործարանի դիրեկտորի այն խոր-

հըրդին, թե քանվորները այդ չեն հասկանա և ավելի լավ կլիներ աշխարհաբար դրել, ուստան խրատաբանո–հանդիմանական խիստ տոնով պատասխանել էր.

— Թող եղ մե երկու խոսքն էլ դրաբառ սորվին. բերըննները չէ ցավի: Իրանց պապերու լիզուն է:

«Վասն ընչս վերկութեան»–ը նույնպես, ուներ իր պատմությունը: Ինչպես բոլոր նման դեպքերում, ուստան պատրաստվում էր դրել «վասն հոգվո վերկութեան», սակայն տաղնապով վրա հասած բազմաթիվ յերևոյթները ու քանվորները չէին թողնում նրան՝ այդ բանը չանել: Նրանցից մեկն ասել էր բացատրել, վոր հոգի չկա, վոր մարդու մեջ յեղածը չունչ է, և դա բնությունից է, վոչ թե աստծուց: Ուստան լսել էր ուշադիր, և ապա, առանց հակաճառելու, թախիծով պատասխանել.

— Մարդու մեջ մե բանըմ կա, որ իրան հետ չպիտի մեռնի, որ մեռնելեն ետև պիտի վերկըվի: Կուզեք՝ հոգի ըսեք եղոր, կուզեք՝ չունչ, կուզեք՝ անուն, կուզեք՝ դործ... Ըչտը յես ախպուրըս կչինեմ եղ բանի վերկութեան հըմար...

Ցեվ հենց այդտեղ, բոլորի ներկայությամբ, ավանդական հոգու վոխարեն քանդակել էր իր չունչը...

Բոլորը զարմացել էին նրա համաձայնվելու վրա և առավել ևս զարմացել, վոր ուստայի մտքերում այժմ չկար վոչ աստված՝ վորին պետք էր աղոթել, վոչ սատանա՝ վորից պետք էր վերկվել...

Ցեվ ահա, ուստայի պահվելուց մի այն մի որ առաջ, բոլորովին պատրաստ կանդնել էր նրա վերջին, թվով քառասուներորդ աղբյուրը: Կյանքի ճանապարհը, վոր անցել էր ուստան և ավարտել, լուսավորված էր յեղել քառասուն ջահով,—իր քառասուն անսպասելի աղբյուրներով, վորոնք այնքա՛ն պատմել էին և դեռ այնքա՛ն պիտի պատմեյին հուշակալոր ուստայի մասին, վորոնք պիտի վառ պահեյին նրա դործն ու անունը:

Բայց հանկարծ նրան այնպես թվաց, թե իր մահվան հետ միասին, մեռնելու եյին թե՛ իր դործը և թե՛ անունը, և դրա պատճառը լինելու յեր մի փոքր, շատ փոքր բան: Այդ միտքն այնպիսի ուժգնությամբ չանթեց անցավ նրա ուղեղով, վոր նա ցնցվեց, *թաւվվեց, և տաղնապով ձայն տվեց դեպի դուռը.

— Հա՛րս, ա՛յ Հարս:

Հարսն արագ մտավ ներս:

— Ի՞նչ, հայրիկ:

— Արի՛:

Հարսը մոտեցավ և վախն աչքերի մեջ՝ կանդնեց նրա մահճակալի մոտ:

— Նատե. մարդ խո չկա՞ են սենյակը:

— Գետնին մերն է:

— Եկել է՝ որ մենանակ չմնաս.—յեղրակացրեց ուստան:—Լավ է երե: Ըսկը խմ քովս ընչի՞ չէ գա:

— Դուն քնած եյիր: Կուզե՞ս՝ կանչեմ:

— Ինած չեյի, հըմը եյ մե կանչե: Ցես քեղի բան պիտի ըսեմ:

Հարսը նստեց ուստայի մահճակալի վրա, լարված, ապաստակական: Իսկ միևչ այդ, ուստայի դեմքի վրա ակնհայտ նկատվում էր անվճռականություն.—խոսե՞լ թե վոչ: Դուցե դեռ կդա իր տղան:

— Ձեկա՞վ,—հարցրեց նա յերկար լռությունից հետո:

— Հլուը դնացքի վախտը չէ:

— Իսկ իմ դնացքիս վախտն է: Ե՛, չեղավ, հարս...

Դուռը կիսաբաց յեղավ և մի պառավ գլուխ թեքվեց դեպի ներս: Հարսը ձեռքով նշան արեց նրան՝ վոր չմտնի, վորից հետո դուռն խակույն փակվեց: Ուստա Մկրտիչը չարունակեց:

— Դուն չատ լավ դիտես, որ յես նեղեցած եմ իմ տղիցս ու քուռ մարդուցդ: Ենիկ դառոդ եղավ: Ենիկ չհալնավ իմ դիտուքյանս: Գնաց, որ ախպուր չինելու արեստն ուրիշներին սորվի, վոնչ թե ընձանեն: Լավ չերավ...

— Հայրիկ, ախպեր ենտեղ պրոֆեսորները դաս կուտան ենոր:

— Պրոֆեսորնե՞րը...

Ուստան ձեռքը դուրս հանեց վերմակի տակից և դողդողացող մատները քունջք հավաքելով, ուժեղ խփեց իր կրծքին.

— Ձե՛ս եմ ամենամենծ պրոֆեսորը: Թող սորվի ոմեն որ կուզե, հլմը առանց իրան հոր դիտուքյանը՝ ենոր ուստան արժինք չունի:

Ուստան նկատելիորեն հուզվեց, վակաղեց և խոսքն ընդհատեց: Ըստ յերևույթին նա դժվարանում եր չարունակել, վախենալով ծանր խոսքեր ասել վորդու հասցեին: Ցեվ յերբ բավական ժամանակ յուռ մնաց,—նրա դեմքը խաղաղվեց և դեմքի հետ ել՝ հոգին: Մյն ժամանակ նա նորից խոսեց և այժմ արդեն նրա ձայնը խաղաղ եր, վախեցնելու չափ խաղաղ.

— Թե որ գար, թե որ հասներ, յես լինքա կիսատայի հետը, կսորվեցնեի ամմեն բանը: Թող հիմի բանի տեղ չդներ, հլմը եզվան առանց եղոր յուռ ներքալ չպիտի կրնընար... Ժամի քաշնիան է, հարս...

Հարսը վեր կացավ և մոտեցավ կամոդին, վորի վրա, ընտանեկան հին լուսանկարների և թղթե ծաղիկների միջև, տիկնում եր սեղանի ժամացույցը:

— Ցե՛տ արի, հարս, հարկավոր չե,— չտալ կանչեց ուստան:—Ցես լմացա ժամը: Իրեք րոպեն յե պակաս...

Ցերբ հարսը վերադարձավ ու նստեց՝ չհասկանալով հվմանդի խոսքերի իսկական իմաստը, նա չարունակեց.

— Տղիս կըսես, որ յեթե, վո՞վ դիտե, մե դժվարությանըմ հանդըպի, թող քանդե իմ քառասուն ախպարներես վորն որ կուզենա, ու թող սորվի ենոր հնարքները: Կսես, որ թող չխնդա իրան հոր վրա ու թող մտեհան չենե ենոր: Կսես, որ մեռնելուս րոպեին իմ սիրտս խռոված չեր իրան հետ: Վերջի մնաս բարովս ու պռոշտիս մտեհան չենես...

Ուստան լուեց: Հարսը սարսափած նայեց նրան, բայց նա դեռ չեր մեռել: Նա մտածում եր: Ցեվ հանկարծ, քոլորովին անսպասելի դժգոհությամբ, նա նստեց, տազնապով լի աչքերն ուղղեց հարսի վրա և ամուր բռնեց նրա ձեռքը.

— Հարս... Պարտականությունն իմնեմ վրեդ: Տղիս ըսա, որ ինչքան դեչ բան ենե աչխըրքի վրա, յես ենոր կներեմ... Հլմը իմ ամբոխնական եղովքս ու անեծքս կուտամ, յեթե մե որըմ ձեռք տա հեղնար-ախպարին..

— Ի՞նչ կըսես, հայրիկ,—սարսռաց հարսը:

— Թող քանդե Թեկուզ իմ քառասուն ախպուրները էլ,— եղոր մեջ սրբապղծուԹուն չկա,— հըմը Հեղնար-ախպուրն ուրիշ ե.— ենոր տակը դերեզման կա...

— Սրար սըխալըք դիտե եղ բանը: Ընչի պիտի քանդե, հայրիկ...

— Վո՞վ դիտե... Գուցցե Թե հրաչքի համար քանդե... Իմ ժամանակս մարդ եղպես բան մտքեն էլ չեր անցընե, հըմը հիմի... Հիմի մարդն ատպածային հրաչքն ստուգել կուզե:

— Ախբըր հրաչք չկա, հայրիկ, սուտ բան ե:

— Հրաչքը կա ավարտցողի հըմար: Եղպես էլ կսեե իրան: Հըմը չավարտցողը հրաչք չի տեսնի: Կսես տղես, որ Հեղնար-ախպըրի հրաչքը վոնչ Թե չոր քարի կամ Թաց հողի մեջն եր, այլ իմ ժամանակվա մարդոց հավատացյալ հոգու մեջ... Իսկ քեզի, աղիղ հարս ջան, հաղար մնաս բարով...

Նույն վայրկյանին, դրսում աղմուկ լսվեց: Հարսն արագ դուրս վազեց, միջանցքում լսվեց տղամարդկային մի ձայն, հետո հարսի լացակումած ձայնը, վոր չատ լինչ վոր բան եր հաղորդում նրան, վորից հետո դուռը շրխկալով բացվեց ու սենյակ մտավ ուստա Մկրտչի տղան:

Ուտտան արդեն մեռած եր:

2

Աղաղ ու բաց կապույտ՝ բացվեց առավոտն ուստա Մկրտչի սենյակում: Առավոտվա պես հանդարտ ու անշշուկ՝ Գալուստն արթնացավ.— կարծես քնի մեջ նա յերկար ժամանակ ունկնդրել եր լռությանը: Այն սենյակից, ուր մի որ առաջ իր հայրն եր մեռել, նա նայեց դեպի լուսամուտները, ապերախտ կապույտը: Յերեկյան Մանանը մոռացել եր վեղկերը փակել և Գալուստն այժմ գոհ եր այդ մոռացության համար.— այսոր առանձին առաջ կ'նկատե եր տեսնում Զորի Բողպի առավոտը.—առաջին առավոտը, վոր այլևս չեր տեսնելու իր հայրը...

Հայացքի պռունգին, աղջամուղջի միջից, դժգոհ գըլխել եյին քարտինների սպիտակ բները: Բներից այն կողմ,—վերևում,— ուր դիմացի լանջի ամենաբարձր փողոցն եր, լուսացող յերկինքն ատամնավոր հորիզոնով իջել եր դեռ մութ բնակարանների չարքի վրա: Նրանց դռների վերևում դեռ պլպլում եյին փողոցը լուսավորող նավթի լամպերը, իսկ փողոցում դեռ կատարյալ դիշեր եր: Բներից այն կողմ,—ներքևում,—ուր յերկու տների արանքից յերևում եր ձորի տափակ ու լայն հատակը, դեռ լրիվ խավարի մեջ հոսում եր տակավաղուր առվակը՝ չարժուն խավարով:

Նայում եր Գալուստը սենյակի տաք կիսախավարից և զգում, Թե ինչպես քարտինների զազաթներից կ'ջնում եր առտնությունը և առվակի ջրից բարձրանում եր սառնությունը:

Մանանի մահճակալից լսվում եր քնածի հանդարտ շնչառությունը: Թվում եր, Թե դրանից եր սենյակի և՛ հանդարտ կերմությունը, և՛ հանդարտ կիսախավարը: Յեվ սենյակն իր պատերի զորգերով, ու հատակի զորգերով, ու դունատ կապույտ և գունատ կարմիր վերմակներով, անկյան փոքրիկ սեղանի վրա դեռ պլպլացող դիշերաճրագով, հանգարծ Գալուստին Թվաց դրսի հետ այնքա՛ն չառնչվող, այնքա՛ն ներփակ: Յեվ առաջին անգամ, սրտի ծանր ճնշումով, նա

ղջաց ա՛յն խոհ կարոտը, որ ղջացել եր իր հայրը մի օր առաջ՝ նույն սենյակից նայելով դեպի լուսամուտից այն կողմը: Գալուստան անմիջապես վեր կացավ, անչշուկ հագնվեց, և բաց անելով դուռը, դուրս չելավ դեպի աշխարհ:

Հազիվ դուռը բաց արած՝ նա լսեց ծառերի ու ջրի համատարած մեղմ խշշոցը գոլ լուսթյան մեջ: Առավոտը, որ սենյակից երևում եր բաց կապույտ՝ այժմ գունաթափ եր և իրական: Այստեղ ու այնտեղ, լուսաբացի սառնության մեջ, դեռ փայլում եյին փոքրիկ լամպերը՝ արդեն անճառագայթ և ինքնամիտ: Մի քարձր այան վերևում, մխայնակ վառվում եր ևլեկտրական մեծ լապտերը: Նա թեթև որորվում եր: Ցերեկի քաղաքի վրայով անցնում եր սահուն, դուրեկան քամի:

Լուսամուտասփեղկերը, դռներն ու դարբասները դեռ փակ եյին: Հայաթներում ու փողոցներում դեռ վոչ վոք չկար: Ծառերի ու ջրի համատարած մեղմ խշշոցը, որ լսվել եր առաջին վայրկյանին, այժմ աննկատելիորեն դարձել եր անլսելի: Ամեն ինչ լուռ եր: Միայն փողոցներից մեկի անկյան յետևում, մեկն ավլում եր մայթը: Մի կառապանի կոուրիկ հսատակ քուրում եր խոսի դեղը, որի մի կողմում դեռ կծկվել եր վերջացած գիշերը:

Ինչ որ հեռու, շատ հեռու փողոցում, հնչեց քայլող դարբասի սրաղ չանդալի ձայնը: Վերահաստատված լուսթյան մեջ լսվեց դասուլի անչտապ, ընդհատ կտկտոցը: Վաղ լուսաբացի մեջ անդամ, այդ ձայնը վտիտուկ եր ու դուրեկան, որովհետև դասուլչին մատներով եր խոհում նվագարանի ձիգ, որովհետև դասուլչին մատներով եր խոհում նվագարանի ձիգ, որովհետև դեղնավուն—կխսաթախտանց մաչկին: Ձայնը մոտենում եր դանդաղաքայլ կառքի ընթացքով: Ցտեսնելով անդամ՝ կարելի յեր տեսնել վարպետին՝ կառքում նստած կարմիր կողերով դուսլն իր գործն առած:

Մի քիչ անց, հազիվ ըմբռնելիորեն՝ լսելի դարձավ նաև դուռնաների ձայնը.—դամ պահողի մեղմին և դրա յեղանակային վոլորտում՝ բուն դուռնայի յելևեջը: Ցեվս մի քիչ անց, փողոցի սալահատակի վրա լսվեցին ձիապատերի մաքուր հնչյունները.—կլանչ... կլունչ... Ըստ յերևույթին, քայլում եյին յերկու կառքեր: Ցերը նրանք ավելի մոտեցան,—ձիապատերի ձայները հանկարծակի խլացան, իսկ դասուլի կակոցը տեղի տվեց դուռնաներին՝ չրջապատվելով նրանց քաղցրալուր հնչյուններով: Անկյան յետևից յերևաց առաջին կառքը, մի վայրկյան հետո յերևաց նաև յերկրորդը: Նրանք դալիս եյին կողքկողքի: Մեկում նստած եյին դասուլ-դուռնաչիները ու յերկու այլ մարդիկ, իսկ մյուսում՝ ևս յերեքը: Բայ կապույտ, հաստ ղեհտ հագած վառապանները ղվարթ նայում եյին լուսաբացին: Կառքերի յեկած փողոցներում, անշուշտ, քաղցր կիսաբթնացել եյին մարդիկ և այժմ հեռացող կառքերի յետևից կրկին քնում եյին նրանք՝ նվագով որորված:

— Կայնի՛...

Կառապանները սանձերը ձղեցին: Այն կառքից, ուր նվագողներն եյին նստած, մեկը վար իջավ ու մոտեցավ մի տան լուսամուտներին, որոնց վրկ վեղկերը բաց կապույտ եյին՝ վաղ լուսաբացի նման:

— Ոնե՛ս...

Նա ձեռքով թխկթխկացրեց տախտակը: Մի վայրկյան դեռ պատասխան չեղավ:

— Ահե՛ս,—բղավեցին կառքչի միջից։ Ապա մեկը դիմաց ներքևում գոռոզին...

— Սո՛ւր գարկ, Աղասի։

Նույն րոպեին, սենյակում չշշոց լսվեց, ապա լուսամուտափեղկի չանգալը՝ վորի ծայրն ամրացված եր ներսում՝ չարժվեց։ Աղասին դուրս քաշեց այն և փեղկերը յետ ծալեց։ Արձակ, սև մաղերով մի կին չրջանակներից մեկը բացեց և դլուխը մոտեցրեց յերկաթամանղակին։

— Բարի լուս, քուր,— վողջունեց Աղասին,— Ոնեսը տո՞ւնն է։

— Գո՞ւն ես, յեխպայր, ասում բարին, տունն է,—չչնջաց կինը նոր արթնացածի խաղաղ, լուսաբացային չչունչով և հեռացավ դեպի սենյակի խորքի մթությունը։ Ամառվա լսվեց, թե ինչպես նա արթնացնում եր ամուսնուն ցած ձայնով՝ մյուս քնածներին չխանգարելու համար։

— Ոնե՛ս, դարթի՛, Ոնե՛ս, Աղասի յեխպայրը քեզի կհարցնե։

— Ջեկա՞մ,—անհամբերացան կառքերում։

— Կուդա,— հայտնեց Աղասին,— մեկել վողքի վրա դարձավ։

Ախիտակեղենով, լուսամուտին մոտեցավ Ոնեսը քնաթաթախ աչքերով և խռպոտ հարցրեց։

— Վո՞վ է...

— Ոնե՛ս, յես քու հոդուդ մեռնիմ,—աղմկեցին կառքերից։— Ոնե՛ս ջան, դո՛ւս արի, ապիզ չան։ Տո՛ւշ... Տո՛ւշ՝ Ոնեսի հըմար։

— Արիաչայ կերթանք,— բացատրեց Աղասին։— Հագի։ Իրիկվընան Ավետիքենց տունը քեզ կհենեյինք։

Ոնեսը յերկաթամանղակից նայեց դուրս։

— Ավետի՛ք։

— Ջա՛ն,— բացականչեց նվագողների մոտ գրված մյուսը՝ ձեռքով անելով.— չուտ երա։

Ոնեսն սկսեց հագնվել՝ լուսամուտից չհեռանալով։

— Եվ վո՞վ կա, Աղասի,—հարցրեց նա։

— Սարգիսն է, Կարոն, Բաղրատը։

— Բոլորդ եդտեղ եք,—յեղրակացրեց Ոնեսը։

Սպասելով իրենց ընկերոջը, կառքում սկսեցին նվագել մեկն այն յեղանակներից, վորոնցով բացվում է լույսը Գյումրիում։ Դաուլն այդ նվագի ընթացքում լուռ է մնում և յեղանակը ծորում է զարմանալի մեղմ ոճ անուշ։ Կարծես մեկը քթի տակ յերգ է սուում՝ առանց բառերի և հրաչալի։ Ճերմեն դուռնան մի քիչ ավելի յե բարձրացնում ձայնը և նույն սահունությամբ նորից իջեցնում, վորից հետո յեղանակն ավելի խորն է թվում և կարծես ներհում է։

Նվագի ընթացքում Ոնեսը հագնվեց, լվացվեց ու դուրս յեկավ։

— Բարի լուս,—դիմեց նա բոլորին։

— Աստու բարին, նստի, Ոնես ջան, ուշացանք։

Բաղրատը վար ցատկեց, գրկեց Ոնեսին, համբուրվեց և տարավ կառք։

— Արի՛ ապիզ ընկեր, արի՛,—հրավիրեց Կաջոն՝ տեղ անելով նրան վարիուկ նստելատեղում։ Ապա կանգնեց կառքի մեջ և ձայն տվեց.—քշե՛ք։

Կառքերը չարժվեցին։ Նվագը ցնցվեց և տեղահան լինելով սկսեց իջնել։ Մի րոպե թվաց, թե բոլորվին էլ չի գնում կառքը, թե նա կանգնած է իր տե-

գում, և այդ՝ ժամանակն է, որ կուլ է տալիս գառը-գուռնայի հարազատ, անխոխարինելի նվագը... Գալուստը դուրս չեկավ իր ինքնասույզ վիճակից, նայեց կառքերի չեռևից և տեսավ, թե ինչպես հեռանում էին նրանք ու հեռանում էր նվագը, և նրա սիրտը սեղմվեց վշտի ծանր ղպացումից.—չի՞ որ այդ գնում էին իր հոր ամենամտերիմ և ամենավերջին ընկերները...

Ցերը վերջապես մեղեդին տուզվեց լռության մեջ,—Զորի Բողազի վաղ առավոտը դարձավ ավելի խաղաղ, ավելի անձայն: Նայեց Գալուստը բարբենների համարյա անշարժ դաղաթներին և չլսեց նրանց սոսափը, նայեց ջրին և չլսեց նույնիսկ նրա կարկաչը: Ցեղ չհամարձակվելով խախտել լուսարացի այդ հրաշալի պահը, վախենալով անգամ իր վոտնաձայներից, նա զգուշ քայլերով լքյալ ջրափ, անցավ սակավաջուր առվակը և բարձրացավ դեպի իր հոր կառուցած առաջին աղբյուրը:

Նա հոսում էր զարմանալի վճիտ.—ավելի վճիտ, քան յերբևե: Ջուրը, վոր անշարժ կամարով ձգվել էր փայլուն խողովակից մինչև դուռի անցքը, թվում էր, թե ուստա Մկրտչի կյանքն է՝ անհայտությունից յեկած և դեպի անհայտություն գնացած...

Զորի Բողազում դեռ վոչ վոք չէր յերևում: Ներքևում առանձին կանգնած տները և վերևում յերկար փողոցները՝ դեռ անշշուկ քնած էին:

Ինչ վոր տեղում, լսվեցին ճնճղուկների խուռն, գործունյա կանչերը, ապա լսվեցին նրանց թևերի մանր, բայց բազմաթիվ փոռոցները.— նատեցին ար-

դյոք նրանք դեռ դատարկ փողոցներից մեկում՝ ելքերով անցած ոտյերից դեղին յերիզով կաթած գաբին հավաքելու, թե՞ թռան... Զրափից մի քիչ բարձր գտնվող տներից մեկի բակ հայթայթում գնգաց ակխատակ չան շղթան և ապա իր տախտակե բնի մեջ չունը լայն հորանջեց և առատների ամուր շրխկոցով բերանը նորից փակեց: Այնտեղ, ծառերից մեկի տակ, յերեկոյից ի վեր, ինչ վոր յերեխա մոռացել էր իր խաղալիքը: Ջրհորի վրա ամրացված ճախարակին անշարժ էր, բայց պարանի կախ ընկած ծայրը թեթև ոլորվում էր մարդու համար աննկատելի մի հովից: Տան դուռը բացվեց, իր մոր վոտնամանները վոտները դցած՝ դուրս յեկավ կիսահագնված, արձակ մազերով մի հասած աղջիկ և լուսամուտների կարմիր վեղկերը յետ ծալեց: Ցերկաթավանդակների և ապակիների յետևից ժպտացին ծաղկամանները՝ բացված ծաղիկներով: Աղջիկը դնաց ներս:

Հանկարծ ամենաարագ բարդիների գագաթները պայծառացան: Ըստ յերևույթին, ձորից այն կողմ, քաղաքից էլ այն կողմը, մի ինչ վոր տեղում ծագեց արևը: Սաղարթների վրա ընկած նրա լույսի տակ, տերևները, վոր թաց էին, փայլեցին բազում վոսկիների պես: Իսկ յերբ արևածագի պահին արագորեն փչող և խոլույն ընդհատվող քամու տակ չարժվեցին տերևները, և արևի լույսը փոխնեփոխ ընկավ նրանց այլևայլ բաշխությունների վրա,—թվաց, թե բարդիներից վոսկի յե թափվում աշխարհին,—վոչ սովորական վոսկի, այլ արհպիսի, վորը յեղել է բոլոր ձորերի բազդղիների յերազը: Ձորի լռությունը, վոր թևեր դեռ չէր խախտվել, այժմ լի յեր ինչ վոր անբնական

նելի խլրտումով.— զգացվում եր, վոր ընակաբանները բում արդեն արթնացել եյին կամ արթնանում եյին մարդիկ:

Աննկատելի կերպով անցնում եր ժամանակը: Այժմ արևը ղաղաթներում լինել եր ավելի վաղ, վոսկեզոծելով համարյա բոլոր սաղարթները: Ցնծ ահա նորից, հանկարծ, նա ընկավ կատուրներից մեկի պռունգին կանգնած կարմիր ու դեղին փետուրներով աքաղաղի վրա: Աքաղաղը վառվեց հրդեհի պես: Տների դեռ տավերատ ֆոնի վրա նա մինակ պայծառ կետն եր: Ցերբ տաք ճառագայթներից աչխուժացած՝ նա հեռացավ կուտ վորոնելու, թվաց, թե արևն ինքն եր, վոր մտավ ամպերի տակ: Փողոցն իսկույն կորավ համատարած տների մեջ: Բայց աքաղաղը յերևաց հարևան կատուրի վրա՝ ավելի պայծառ, հետո յերբորդ կատուրի վրա, չորրորդի... Կարծես մի խուրձ բոց՝ նա շրջում եր արևով հրդեհելու Զորի Բողաղը:

Ցեվ ահա հանկարծ, անսպասելիորեն մոտիկ և բոլորովին անակնկալ՝ վորոտաց զրնգարանայինն չէսակը: Նա չվալով անցավ ձորն ի մեկ՝ վերջնականապես արթնացնելով ու ղաղատացնելով այն: Առավոտը վերջացավ:

***

Հոսում եր Նվիրական Արևաչայն իր հավիտենական խաղաղությամբ: Վոչ խորն եր նա՝ մարդակուլ խորությամբ, վոչ լայն եր՝ անանցանելի լայնությամբ և վոչ սրընթաց՝ զահավեժ արագությամբ: Նա յերբեք չեր աղմկում և յերբեք դուրս չեր գալիս իր

ափերից: Լուռ, ծանր ու մտածկոտ՝ ձգվել եր Նվիրական Շերտակի դաշտով նրա վճիտ ջուրը: Նա առաջ եր չարժվում դանդաղ ու հանդիսավոր՝ իր հեռավոր ակունքը խրած հին հաղարամյակների մեջ և իր վողջ ընթացքում ձգվելով դեպի նոր հազարամյակները:

Նա հոսում եր քաղաքի արևմտյանում՝ մի յերկարանիստ բլուրով քաղաքից թաղնված: Բլուրը մի տեղում ճեղքված եր և այդ ճեղքով անցնում եր քաղաքից դեպի Արփաչայ տանող ճանապարհը: Ցերբ խրամճանքի գնացողների կառքերը հասնում եյին բլուրի այդ կտրվածքին՝ վորտեղից անակընկալ կերպով բացվում եր նվիրական գետի տեսարանը,—ձիերը կանգ եյին առնում իրենց տեղում մեխված նման և մարդիկ կառքերից նայում եյին լուռ, հիացած...

Բլուրի լանջի մոտից անմիջապես, մի լայն դաշտ աննկատելի վայրէջքով ցածրանում եր հեռու, մինչև դիմացի փոքրիկ և տափակ բլրակը: Այդ բլրակը չատ կարճ եր և ընդամենը մի քիչ տեղ եր վանկում տեսարանը: Բլրակի ներքևի ծայրում,—հարավում և հարավ-արևելքում,— փռված եր արևով վողողված լայն դաշտը: Դաշտի պայծառության վրա՝ տեղ-տեղ կանգնած եյին վանաչ ծառախմբերի մեջից տները՝ իրենց մոտի դյուղերով: Թե մոտիկ, թե հեռու, թե ավելի հեռու, իրարից անջատ՝ վայրում եյին ջրի արծաթե կտորները: Ջրամբարի վրա, արևով վողողված՝ յերևում եյին մոտ ու հեռու բազմաթիվ բոստանները:

Բլրակի վերևի ծայրում,— հյուսիսում և հյուսիս-արևելքում,—կանգնած եյին բազմակուտակ լեռ-

ներ ու ձորեր՝ կապույտով ղողջուված: Բայց այդ կապույտը թվում էր ոչ թե տարածության, այլ ժամանակի կապույտ: Թվում էր, թե այնտեղ կանգնած էր պատմությունը, ոչը նայում էր դարերի միջից: Այդպիսի լեռնաստան չկար ուրիշ ոչ մի տեղ և նա թողնում էր հին մադաղաթի վրա նկարված աշխարհի տպավորություն:

Սակայն մարդիկ կառքերի միջից նայում էին ոչ այդ կապտավուն լեռնաստանին կամ ոլոսկեպայծառ դաշտին, այլ ուղիղ դեպի առաջ, ուր դիմացի բլրակի վեջը քերելով, անցնում էր արծաթափայլ ջուրը:

Այն ափի վրա կար դաշտի մի ոչ լայն շերտ՝ դեղնածուփ հասկերով: Հասած արտերը ջրափի մոտից կիսլ մոտենում էին բլրակին, ոլորի վրա մի պյուղ էր փռված: Գյուղի տնակները չինված էին լանջի վրա, մեկ-մեկուց վերև: Տնակների դորշ շարքերի մեջ, թե լանջի ներքևում, թե վերևում, այստեղ ու այնտեղ ցրված, դոնդոում էին կաղները՝ պայծառադեղին չեղջերի կլոր չրջանակներով: Աչք կուրացնող պայծառ դեղնության մեջ, արևով վողոզված, քայլում էին դեղնին ու կապմիր յեզների զույգերը՝ իրենց յետևից կամեր քաշելով: Կամերի վրա կանգնած՝ վոտաբոբիկ աղջիկները՝ ոոր սպիտակ լաչակներ ունեյին կապած, ճկլատների ծանր ճոճումով չտապեցնում էին յեզներին:

Տնակների դորշության մեջ, այստեղ ու այնտեղ վեր էին բարձրացել բարդիները, ոոր գոմ խչչում էին: Նրանց խիտ տաղարթների մուգ կանաչը և նրանց ներքևի մուգ տուներն ավելի պայծառ էին դարձնում վոսկեղեն կալերի վոսված տեսարանները: Դյուղի մի ծայրում, ամբողջապես ուռիների թանձր տակերում թաղնված, դոնդոում էր դյուղի ջրաղացը...

Նվիրական գետի ափերն անծառ էին, ցերեկնային արևի տակ պարզորեն ճգված, բայց տեղ-տեղ, նրա յերկու ափերին կանգնած էին վոզբրիկ ծառատառնները, ոոր կարծես կանաչի, տավերի ու զովի կըղզիներ լինեյին չրջապատի արևային լույսի և չերմաստիյան մեջ...

Ցեղ դանդաղ մարակում էին կառապանները իրենց ձիերին, ոորոնք ծանրաքայլ իջնում էին սրբելիք հովիտը:

* * *

Կառքերը վերադարձան քաղաք, իսկ արհեստավորները տվոտց բաց արեցին մի հոլ ուռենու տակից: Ջուրը հոսում էր տվոտցի մոտով, թրջելով նրա արևտո ծայրը:

Դասալ-դուռնաչիների նստելու համար դառն-բերեցին յերեք քար: Նրանց առջև դրեցին ուտելիք, ողի և քաժակներ: Իսկ իրենք քոլորվեցին տվոտցի չուրջը՝ ծալապատիվ, տափակ: Ուստա Մկրտչին հատկացրին ամենալալ տեղը՝ տվոտցի գլխին, ծառի քնի տակ: Նրա վողքերին նստեցին Ոնան ու Կարոն, տվոտցի մի կողմում՝ Բաղրատն ու Սարգիսը, մյուս կողմում՝ Ալեքսեքն ու Աղասին: Շարեցին յոթ քաժակ, ողի լցրեցին: Ուստա Մկրտչի քաժակի մատ դրեցին խորոված և այլ խորտիկների ամենալալ պատառները: Մնացին լուռ, դլխահակ: Դլխահակ

լսեցին դաուլ-դումնայի լացող յեղանակը, ապա յերբ նվագի վերջին հնչյունները մարվեցին ծառերի գոմ սաղարթներում, Սպասին վերցրեց իր բաժակը, խփեց ուստայի բաժակին և ասաց.

— Սմմեն անդամվա պես՝ առաջի կենացը կենացդ եղնի, աղիզ... կյանքդ երկար եղնի, ինչքան որ,—ախոռս,—մահն ե յերկար...

Ընեսը նույնպես բաժակ վերցրեց.

— Մշտական մեր սուփրի զվարճությունը եղնիս, ախպեր: Զեննեցս կարենք, լսենք քեզի, լսենք ու չվշտանանք...

Կարոն նույնպես բաժակ վերցրեց.

— Կյանքի մեջ մեղնեն մենծը դուն եղար, Մկրտիչ: Մահվան մեջն ել մեղնեն մենծը դուն եղար: Կենացդ:

Բոլորը բաժակ բաժակին տվեցին ուստայի բաժակի հետ և ողի խմեցին: Հետո Սվետիքը վերցրեց ուստայի ողին, չպրտեց նվիրական դետը: Ջուրն ողին տարավ:

Բաժակները նորից լցրեցին:

— Ախպերտինք,— դիմեց Սարգիսը նվագողներին.— ուստիս սիրական յերգը յերգեք...

Ցեվ նորից խոնարհվեց իր բաժակի վրա:

Շուրջը, դետնի վրա, բուրում եր գոմ կանաչը: Հեռուն, արևի տակ, ջուրն եյին մտել Թուխ յերեխաները: Ցերը նվագը լռեց՝ լինչ վոր տեղից լսվեց Թռչունի յերազկոտ կանչը և իսկույն մարվեց.—Հո՛-պո՛...

Ցերը ել նայեյին նվիրական դետին, ջուրը գնում եր ու գնում՝ անկանգ, անվերադարձ: Ցերբեմն նա իր հետ բերում եր մի կանաչ տերև, յերբեմն տյուղից դուրս եր նետում մի պսպղացող, վոսկրիկ ձուկ և նորից ընկնում յետ: Դիմացի ափից մի ծառ իր տակերը կախել եր ջրի արևոտ հոսանքի վրա...

Բազրատը նորից ողի լցրեց և լուռ մնաց: Ընոսք վերցրեց Սվետիքը, վորի կյանքն անցել եր կամուրջները վառուցելով.

— Ցես ել, Մկրտիչ ջան, քեզի պես նպատակ եյի դրե, որ կյանքիս մեջ տաճարկու կարմունջ սիրտ չինեմ: Եդ բանը քեզի ել ե հայտնի, ես ախպերտանցս ել... Հիմի տաճարկը չինել եմ, հըմը տաճարկուսին ձեռքս չի երթա... Ախր կյանքն անուշ ե, յես վերջի կարմունջն ի՞նչըղ չինեմ...

Բոլորը լուռ եյին անձայն, քարացած:

— Ես ափի վրա կյանքն ե: Ցես դիտեմ, թե են մեկել ափի վրա լինչ կա ընճի հըմար: Կարմունջն որ չինեմ՝ ուզեմ թե չուզեմ, առաջի անգամ յես սիրտ անցնելմ վրայեն...

Նա չխնդց ճակատը և չարունակեց.

— Եղիկ իմ հին սովորութքս ե, Մկրտիչ ախպեր: Առաջի կարմունջս որ չինեցի՝ հենց մարդ չվրատահացավ՝ անցնի: Գերդաստանս նստեցուցի կարմընջի տակը, յես ել Փայտոն նստած, անցա վրայեն: Տաճարկ կարմնջի վրայեն խնդումով անցա, հըմը ես վերջինը սիրտս մահվան դող ե գցե...

Նա անակընթարթ նայում եր ողուն:

Դանդաղ կողքին նստել էին յերեխաները՝ խելոք, ուշադիր,—կարծես վերջալույսի պահից տագնապած. Դյումրուհիները, ուշադրությունները արդեն դեպի դործվոզ գուլպան՝ չրթունքների մեքենայական չարժումով պատմում էին յերեխաներին հին պատմություններ, ավանդում էին հռչակավոր դյումրեցիների կյանքն ու վարքը:

Պատմում էին, որինակ, մի դյումրեցու մասին, վորն իր տունը կառուցելիս, հիմքի չորս անկյուններում դրել էր ուրախ, ողի, մատանի և խաչ: Պատմում էին մի այլ դյումրեցու մասին, վորը քառասուն տարի չարունակ ապրել էր մի մեռած աղջկա սիրով և այդպես էլ մեռել: Ցեվ պատմում էին մի դյումրեցու մասին, վորը հավիտյան չրջում էր իր պատանի ուսի վրա դցած՝ մտախոհ ու համրաքայլ: Ցեվ պատմում էին մի դյումրեցու մասին, վորը վաղուց ի վեր պատրաստել էր տվել իր դերեզմանաքարը: Ցեվ պատմում էին մի դյումրեցու մասին, վոր յեղել էր քաղաքի ամենաբարձր յեկեղեցու խաչն ամրացնողը, վորի հա-

մար տասնել եր տղայոց կոչմամբ: Ճեվ պատմում եյին մի դյումբեցու մասին, վոր բաղմաթիվ անգամներ մերձմահ ընկած, հազնվել եր մի կերպ, դուրս եր յեկել տանից, դնացել եր ողետուն, խմել եր խեղդվելու չափ ու վերադարձել բոլորովին առողջ: Ճեվ պատմում եյին մի դյումբեցու մասին, վորի յեղբայրն աքսորված եր, և վորը յերեսուն տարի չտրունակ, ամեն յերեկո, տեղան եր պատրաստում, վառում եր տան բոլոր լամպերը, դնում եր կայարան՝ յեղբորը դիմավորելու և վերադառնում եր մենակ: Ճեվ պատմում եյին մի դյումբեցու մասին, վորը յեղել եր նշանավոր վորմնադիր և տեղծել եր համատարած հռչակ: Թագավորը Գյումբի այցելելիս, հիացել եր նրա պատերով ու ցանկացել եր նրան տեսնել, բայց յերբ դնացել եյին նրա յեռևից՝ նա յեղել եր սարսափելի հարբած ու քնած: Ոչ վերադարձել եր Թագավորը, իսկ բախտն ու յերջանկությունն անցել եյին վարպետի մասով՝ տանից նրան դիպչելու...

Պատմության այդ կետում, կանայք նկատում եյին չտսկայից տան վերադարձող իրենց ամուսիններին կամ աղանեերին և վեր եյին կենում նստած տեղերից: Ճերբ աղամարդիկ մտնում եյին ու բոլք յերեկո մաղթում, նրանք պատասխանում եյին բարևին և նրանց յեռևից մանկտյ տան, գուռը փակում:

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

1

Բռատանչին, վորի աղբյուրն այժմ հոսում եր ուղղահատ ու միշտ, նստել եր փողոցում, իր դարբոցի մոտ և նայում եր անցնող մարդկանց: Պայծառ կիրակի յեր և հեռավոր դյուղերից չատ սայլեր ու դյուղացիներ դալիս-անցնում եյին դեպի չուկա: Իսկ քաղաքից, դեպի դերեզմանոց եյին գնում սև հագած կանանց խմբեր: Նայում եր բռատանչին բոլոր նրանց,—և յեկողներին և գնացողներին,—բայց ըստ յերևույթին նրան վռչինչ չեր հետաքրքրում, նրա միտքը վոչ վոք չեր գրաղեցնում:

Կիրակի որով ինչո՞ւ յեր մնացել նա այդտեղ: Ոչ վոր նա կարող եր գնալ քաղաք, ուր իրենց փակ խանութների դռների մոտ հավաքված կամ դայիխանաներում նստած, գրույց եյին անում իր ծանոթ արհեստավորները: Նա կարող եր գնալ քաղաքի հյուսիսում գանվող Ձիթաղյոնց Ջաբոր գրատավայրը, ուր կի-

բակի արևը շատ ժողովուրդ էր լինում: Նա կարող էր դնալ Եվրեական Ասիայի ամբը, ուր հավաստուն ծառերի տակ քեֆ էին անում իր հասակակից արհեստավորները և լողանում էին դեղեցկամարմին մատղաշ տղաները: Վերջապես նա կարող էր դնալ տուն, ուր իր ընտանիքն իրեն էր սպասում: Բայց չէր դնում, և նրա ճակատը մռայլ էր: Ըստ յերևույթին, նա ծանր մաքեր ուներ և ուզում էր մենակ մնալ:

Բաղաքի կողմից մահվան թափոր յերևաց: Ժողովուրդը բոստանների դուրդ պատերի մեջև սեղմված, դանդաղաքայլ առաջ էր գալիս և բերում էր մի թանդարժեք դագաղ: Թափորի առջևից գալիս էին չորք քահանաներ՝ կարմիր և դեղին չուբջառներով, վորոնց վրա, մեջընդմեջ դործված էին վոսկեթել նախշեր: Յերկու սիրացուներ բուրվառում էին, շատ այլ սիրացուներ բերում էին խաչվառներ, կրոնական դանապան նկարներ:

Բոստանչին ուշադրությամբ նայեց այն կողմ և փորձեց հիշել, թե ո՞վ պիտի լիներ արդյոք այդ հարուստ մեռելը: Յերբ հիշեց, արհամարհանքով չարունակեց նստած մնալ և չափիսան նույնիսկ չհանեց գլխից: Գլխավոր քահանան, վոր մյուս քահանաների հետ սաղմոս էր յերդում, աչքերը չուց դեպի բոստանչին և ավելի բարձր յերդեց: Կողքից դնացող սիրացուն բուրվառեց դեպի նա և բարևացած առաջ անցավ: Բոստանչին վոչ մեկի վրա ուշադրություն չդարձրեց: Իսկ յերբ նրա մոտով անցավ դագաղը, նա բարձրաձայն հորանջեց և «փառք աստու» ասաց՝ ինչպես ասում են բոլոր հորանջողները:

Դագաղի յետևից գալիս էին լացող տիկիններ՝

վուաշներով ու մինչև արմունկները հասնող ձեռնոցներով, գալիս էին վոդպատավոր պարոններ՝ ձյապաններ դրած: Նրանց յետևից գալիս էին դործակատարներ և ընդհանրապես հասարակ ժողովուրդ: Թափորի յետևից գալիս էին մուրացկաններ՝ չղաբաղած կաշվե տոպրակները թևերով մեջքներից քաշ արած: Իսկ ամենից վերջում, դուդ-դուդ գալիս էին քաղաքային կառքեր:

Յերբ կառքերի առաջին զույգը հավասարվեց բոստանչուն, նա աթոռից վեր կացավ և բղավեց մուրացկանների յետևից.

— Մելքոն, Ալեխս, Առաքել հայրիկ...

Մի ծեր և յերկու խեղանդամ յետ նայեցին:

— Ձեզի հետ եմ: Են ախպորս ել խաց տվեք: Ին քուրջը ել: Յետ դարձեք եկեք, բան պիտի ըսեմ:

Մուրացկանները մոտեցան և բարևեցին:

— Ամոթ չե՞, ախպերտինք: Մարդ ել եղոնց դադաղի ետևեն երթա՞...

— Ի՞նչ եննենք, Յերանոս ախպեր,—արդարացավ յերկու աչքով կույր ու ծաղկատար մի ջահել տղա:— Ուրախության որը մեղի մտեհան կենեն, կանենք գոնյա ադի վախտը մաքերն ընկնինք:

— Հատատա որ ջանել ես,—ժպտաց բոստանչին:— Տե, ախպերտինք, եսոր դուք իմ դոնախտ եք: Մտեք նես, քաղեք ինչ որ ստեղը կուզե: Ում տոպրակն որ լիքը լցված չեղավ՝ դուս չեմ թողնե:

— Ասպած քեզի յերկան արև տա, Յերանոս վորդի,—օրհնեց ծերը:—Զուխտ ապրես... Մե բարձի ծեր չենաս...

Բոստանչին ծանր հառաչեց.

— Եղպես մի ըսե, հայրիկ: Դուն ել, քուրրիկ, եղպես մի ըսե: Դուք ամէնդդ ձեր արդար բերնով մեմե բերան ասասն աղաչեք, որ մաւրազս կառարե: Ուրիշ բան չեմ ուզե: Տե մտեք նես...

Մուրացկանները մտան բոստան, իսկ Ցերանոսը մնաց նորից իր տեղում վանդնած, աչքերը դեպի պետին խոնարհած: Փողոցի դեղնավուն փոշու մեջ խորը խրվել էին բազմաթիվ մարդկանց ու ձիերի խառնիխուռն վոտնահետքերը: Ցեվ հանկարծ, այդ փոշու վրա ընկավ տրաք առաջացող մի սավեր: Ցերանոսը ճանաչեց սավերը, ցնցվեց և նայեց վեր: Գալիս եր Թրքուհին:

— Բաջի՛...

Ցեվ Ցերանոսը կտրեց նրա առաջը:

Թրքուհին չադրայի մեջ խուլ կերտով փաթաթված, կտրուկ կանգ առավ, ապա նույն վայրկյանին արագ ու բարկացած չարժումով առաջ անցավ: Հոդապես ջանջալաված՝ Ցերանոսը վերադարձավ դեպի պատը և փլվեց աթոռի վրա:

Ֆիչ հետո դարբասի դռնակը բացվեց և մուրացկանները դուրս յելան:

— Ձեղի էըսի՛ որ տոպրըկներդ լիքը լցնեք...

— Լավ, Ցերանոս ախպեր, ըղը նամո՛ւսն ինչ կըսե: Մենք չնորակալ ենք քեզնեն: Եաքանն ել մեղի շատ շատ ե: Սապած Թող...

— Ցես ել եմ չնորակալ, բարով երթաք: Հըմը տապած, կերևնաւ, վրես շատ և հերստած: Ձուր տեղը մի՛ք որչնե:

Մուրացկանները տարակուսած նայեցին միմյանց և դանդաղաքայլ հեռացան դեպի քաղաք:

2

Շուկայի փակ խանութների առջևից, ըստ սովորության՝ անցնում եր բարձրահասակ ուստա Մկրտիչը: Նա իր կապույտ կատոր չափխան թևքով եր դեպի ծոծրակը, բայց անկով իր լայն ճակատը: Խանութների մոտ հավաքված մարդիկ բառի կենդ վրա ընդհատում եյին խոսակցությունը, ակնածանքով բարևում եյին նրան՝ չափխանները գլխներից արագ հանելով և գանդաղ ծածկելով: Ուստան պատասխանում եր գլխի աննկատելի չարժումով, համարյա առանց նայելու նրանց: Նրա լայն ճակատի վրա կային քրտնքի մարգարիտներ: Նա չուխայի փեշը յետ տարավ, ձեռքը մեկնեց դեպի դռան, վերցրեց այնտեղից կոփված և իր ներքևի ծայրով համարյա գետնին քաշվող մեծ, մուգ-կարմիր բաղդադի թաշկինակը, որբեց ճակատը և նորից իր տեղը կախեց: Ապա կանգ առավ, չուխայի գրպանից հանեց չիբուխն ու թութունի քիսան, թուլացրեց քիսայի դայթանը և չիբուխի գլուխը կոխեց թութունի մեջ: Դիմացի դայֆախանայից մարդիկ հետևում եյին նրա չարժումներին: Նա չիբուխը լիքը լցրեց թութունով, բթամատով սեղմեց, տեղավորեց, և հետո բարակ ծխափողի ծայրն առավ բերանը: Անմիջապես դայֆախանայից դուրս թռավ մոտ քսանհինգ տարեկան մի չիբխատարած և դեռ փողոցի մեջտեղում լուցկին վառելով, մոտեցավ ուստային: Ուստան նրա վրա ուշադրություն չդարձրեց: Նույն քիսայից հանեց չախմախն ու չախմախաքարը, հանեց խավաթելը, դրեց քարի վրա և պողպատը խփեց քարին: Թելի ծայրը մխաց. ուստան այն դրեց թու-

թանի վրա և փսոփսոցներով, ողջը ներս քաշեց: Թուխումնը վառվեց: Նույն վայրկյանին, լուցկին այրվեց-վերջացավ յերիտասարդի մատների մեջ և ծուխը խանձեց: Նա առանց ցանկ արտահայտելու, կամացուկ վայր դրեց այրված լուցկին և չարունակեց մնալ անշարժ կանգնած:

— Ո՞ւմ տղեն ես,—չափազանց խիստ տոնով հարցրեց ուստա Մկրտիչը՝ գործը վերջացնելուց հետո:

— Ոսկերիչ Վաղինակի:

— Վարոս մա՞նչն ես:

— Հրաման կենես:

— Ի՞նչ կենեյիր գայֆախանեն:

Տղան ձայն չհանեց:

— Սմոթ ե, ամբնչէ: Հորդ հարստութիւնը կէ-լար: Եզեռ մարդն ավուր հայր կարու պիտի մեռնի: Հերիք չե՞ գայֆախանեքն ու միկիտրնները քաշ գաս...

— Հորյեղբայր,—փորձեց արդարանալ Վարոսը,—յես միկիտան վուռք չեմ դրե: Գայֆախանեն ել՝ գործով մատ: Դուան քովը նստած, աչքս ճամփեն կպած եյե՝ ընկորս հանդըպելու...

— Սո՛ւս...— Յեվ ուստան չերուխը բերանից հանեց:—Սալախանա՛: Սխոտ են հերը, որ դուն ունես:

Վարոսը գլուխը կախեց: Գայֆախանայում տիրեց լռութիւն:

— Ի՞նչ արեստ ես:

— Արեստ չունիմ, հորյեղբայր:

— Աբրիա: Ոսկերչութիւնը թեզ կցավցնե՞:

Վարոսն ամենայն խոնարհութիւնով նորից լուռ մնաց:

— Քեզի հարկավոր է դամբրչի բաղդասարի քովը

դրիել, որ ոսկըռնեըդ ընչիես: Համ արեստի գաղրը կիմանաս, համ փարի... Տե ոդի եղի աչքես, ոնա-ռակ...

Յեվ ուստան չարունակեց ճանապարհը:

Բարկութեամբ գլուխը ցնցելու ժամանակ, նրա չերուխի արծաթե կափարիչը փակվել եր: Ուստան միայն այժմ նկատեց այդ և բաց արեց: Չերուխի գլխի մասից կարճ շղթայով կախված ճողիկը ձեռքն առնելով, նա սկսեց թուխումնը խառնել: Յերբ նորից կրակը բորբոքվեց, ուստան թողեց ճողիկը և թեքվեց դեպի բուտանների մեջտեղով անցնող ճանապարհը:

Նա գնում եր Յերանոսի բուտանը:

3

Վորքան վոր խուլ ու անգմված և բուտանների մեջտեղով անցնող ճանապարհը, այնքան ազատ և լայնահոլիզոն են բուտանները: Մտնելով նրանցից մեկի դարբասից, մարդ լրևն անմիջապես կդդա քոլորովին ուրիշ աշխարհում, ուր չկա դեղին, թանձր փոշի և ուր չկան յերկնքի կապույտը ահմանափակող բարձր պատեր: Բացվում է բուտանների մի ընդարձակ տեսարան, վոր տարածված և հեռու, մինչև դաշտերը: Բուտաններն իրարից սահմանազծված են մխայի խոպան հողի չայն չերտերով, վորոնք միաժամանակ իշատյալների ճանապարհներ են: Այդ ճանապարհների յերկու յեզրերին, ցանցառ կերպով չարված են հովատավեր ուռիներ և թարձրահասակ բարդիներ: Ուռիները և բարդիները կան նաև բուտանների մեջ՝ այստեղ ու այնտեղ, իսկ բուտանների պատուհանների վանդակած հովիկները յերեք կողմից խիտ շրջապատված են ծառերով

և նրանց մեկն ճակատը կոշտն է բաց: Ճանապարհորդ հովիվն յեռանում կանգնած է մի փոքրիկ ոտյակ, որի մեռ կտրված, արածում է մի եչ: Ծառերով շրջապատված՝ հոսում է ջրի արիւը և գնում է դեպի հեռուն բոստանները: Իսկ պատերի՝ և վոչ մի հետք: Պատերի փոխարեն, բոստանների յեռանում, հեռու, շատ հեռու՝ խոպան գաշտն է սկսվում, ուր մարդկի կուտակով թափում են քաղաքի աղբը: Այնտեղ արևի տակ պպզում են տպակու մանր կտորներ: Մի քանի տարի հետո, աղբով պարարտացած հողի վրա նորանոր բոստաններ ու ծառեր կաճեն, իսկ աղբի սակրավորների ճակատը ավելի կերկարի:

Ցեղ ոտյակով, բոստանների միակ պատերը նշանակված են ճանապարհն անջատելու համար, որպեսզի այնտեղով անցնող դյուղացիները բոստանները չմանեն: Ահա նորից անցան այդ դյուղացիները: Նրանք իրենց ոտքերով վերադառնում են դյուղ: Դեռ հասիլ և կտրվել կեսորը և նրանք իհարկե արևով տեղ կհասնեն: Ահա նրանցից մեկը վար ցատկեց ոտյլի վրայից, մոտեցավ պատի մեջ չինված մի աղբյուրի, դյուղացու տհաճին կումերով չոտոտ կուլ տվեց ջուրը և վազեց՝ գեռնադործ չալե չուխայի թևքով սրբելով նը թաց բեխերը:

Ցերը վերջին ոտյլը պատերի վրայով անհետացավ՝ յերևաց ուսուա Միքոիչը: Դեռ հեռվից, նա տեսավ պատարի աթոռը Ցերանոսի դարբասի մոտ: Մոտեցավ, վերցրեց, իր հետ ներս տարավ և դրեց պատի տակ: Հետո գնաց դեպի հեռու հովիվը:

— Բարի օր, Ցերանոս:

— Աստու բարին, ուսուա Միքոիչ,— ոտքոտնկով

բոստանչին և սրազ դուրս յեկավ՝ մի ձեռքին դանակ, մյուսին՝ բահի կոթը:—Ես ի՞նչըղ լավ բան երիր, որ եկար: Համմեցի, համմեցի...

— Գործդ երա, գործդ երա,—ասաց ուսուան, տեսնելով, որ Ցերանոսը դանակը վար և գնում:

— Ամենամինդ գործը քու հրամանքիդ ծառայելն է, ուսուա Միքոիչ:

Ուսուան նստեց հովիկի պատի տակ գրված թախտին և չալեխան հանեց: Լայն ճակատի վերևում նա ուներ խիտ, սև մազեր:

— Ես ի՞նչըղ մխաքդ գցիր, ուսուա ջան: Բանձր նստի: Կեցի բարձ բերեմ:

— Բարձ չեմ ուզե: Ես ճամբեն թողը հոգի հանեց:

Ցեվ նա վտաքերից հանելով չուստերը, թախտ ավելց նրանց մեջ լցված հողը, ապա բրդե գուլպանների կապերը չալվարի փողերի վրա ամրացնելուց հետո, վոտնամաններըը նորից հագավ:

— Ի՞նչ բանի ես, Ցերանոս:

— Ուսուա ջան, մե խորոված եմ եմե:

— Ձեմ ուզե, յես չնորակալ եմ:

— Ուսուա ջան, օրեցն մե որըմ բոստանս ես եկե, ձեմ մի եղնի:

— Թե բախի ունիս՝ բե: Ուրիշ բան պետք չե:

— Բախին իրան կտրվին: Ըսը գակուսկի՞:

— Բոստանդ կուտենք:

Ցերանոսը նեռսից բերեց գավով լիքը ադի և կավե գավաթներ, ապա մատավ վարունգի և պամիդորի մատղերը: Ջաղեց, բերեց:

— Մե քանիմ հատ ել կծու սաքսեղ բե:

— Աչքիս վրա, ուսուա:

Ցերանոսի դնալուց հետո ուստան վերցրեց դանակը, վոտով բոստանչին բահի կոթին եր տաչում, և սկսեց վարունգերն ու պամիդորները կտրատել: Վարունգի կլեպները վռնց և պակուսկին դրեց ներանց վրա:

— Ես տարի լոլիկ ի՞նչդ ե,— հարցրեց նա մոտեցող Ցերանոսին:

— Շատ լավ ե:— Ցելվ բոստանչին կանաչ պղպեղները դրեց գալուսկու մոտ:—Հըմը, ուստա Չան, դուր տեղը չիմողիր մե խորոված էնեյի:

— Նատի, բանը մե անդամ կանե:

Ցերանոսը ժպտաց.

— Բարձի խո՞սքն ել չենեմ:

— Չե:

Ուստան վերցրեց պղպեղներից մեկը, կխեց: Պղպեղը կխմլեց չրխկալով և նրա միջից, սուր կծու հոտով ցնդեց դոլորշանման նոսր գազը:

— Լավ տաքսեղ ունիս:

— Շնորհակալ եմ: Իմ հողը տաքսեղի ու լոբու հող ե:

Ցերանոսը նատեց, ողի լցրեց և վերցրեց իր գավաթը.

— Տե, ուստա Չան՝ կենացդ: Շատ եյի իմացե քու մասիդ, լավն էյի իմացե: Հըմը հետդ ծանոթությունն չունեյի: Ծանոթացա՝ լավեն ել լավը տեսա: Ցես մե յերջանիկ մարդ եմ, որ ախպուրս սարքելեն եամ դուն չդնացիր ու դնացիր, այլ եսոր մխոդդ քցիր ու եկար: Հիմի յես մե նպատակ ունիմ, որ մերբարեկամությունն ես բախու պես կարճ չեղնի, այլ ևն սխպուրի պես յերկան: Սաղ եղնիս, ուստա Չան, հազար տարի ապրիս, հազարն ել հազար բարիքով ապրիս:

Ցերանոսը մի ումպով ողին դատարկեց և վերցրեց մի կտոր վարունգ:

— Ցես, Ցերանոս Չան,— սկսեց ուստա Մկրտիչը,— շատ մարդու չեմ հավնիր: Վո՞վ գիտե, մարդն ինչքա՞ն լավ սիրտ եղնի, որ յես հետն երթամ-գամ: Հըմը ուղիղն ըսած, են որն որ դուն ընճի կանչիր, թե՝ ուստա, իմ ախպերիս Չուրն ու բոստընիս Չուրն իրարե Չոկ երա, դուն ընճի գուր եկար: Ֆանի՞ տարեկան ես:

— Ցեուաբնինը:

— Ցես յեուրնհինդ դիտեյի: Ինչորա. ելի քեզնեն վեց տարով մենծ եմ ու դուն ընճնեն չպիտի նեղենաս: Ըսելս են ե, որ քու մե բանըդ հնչ դուրըս չեկավ: Եղ են եր, որ դուն ընճի ենքան առաչ վճարեցիր: Ցես կվերցնեմ, իմ թևիս չի ցավի, հըմը ավլողն իրան փարի դաղրը պիտի իմանա: Քնճի կենես՝ բան մի խնայե, բայար կենես՝ լիզու-բերան մի խնայե.— մենծանաց խոսք ե: Հիմի, թե ասպած տվեց՝ դուն իմ ըսածս մարդը դուս եկար,— ուստա Մկրտիչը քեղի ծառա: Թե որ փուչ դուս եկար՝ ասպած քեղի հետ, ասպած ել ընճի հետ: Սաղ եղնիս...

Ողին խմելուց հետո ուստան վերցրեց մի պըղպեղ, թաթախեց աղի մեջ և առանց կոպն անդամ թարթելու՝ կերավ:

Թևև բոստաններն ու դաչտերի լայնարձակ տեսարանի վրա դեռ պայծառ արևն եր, բայց թախտին վռնած ջնջիմի պայծառ նախշերի վրա արդեն ընկել եր հովիկի պատ լայն տոլերը: Ցերանոսը նորից ողի լցրեց:

— Ուստա Չան, հրամանք տու՝ պատմեմ քեզի, թե ընչի բոստընիս Չուրն ու ախպերիս Չուրը Չոկ եննել

ավի: Որ պատմութիւնս լմանայ, էլ ընձի չես մեղադրեր չուայլութեան համար: Երածս՝ մատղի պես բանդմ եր: Իսկ մատղի համար, դուն ընծնեն լավ գիտես, որ վարա չեն խնայե...

Ուստա Մկրտիչը չէրուխը հանեց դռտկի յետևից և Թուխանի քիսան դրպանից, դրեց կողքը և ակսեց քսել:

— Ուսանիս որ ըսեմ, մե որմ,—որն էլ ցորեկ եր,—աչեմ տեսնիմ՝ կոտեմս Ջրել և հարկավոր: Տե, դուն ընծնեն լավ գիտես, որ մենք բոստաններեն վաղող աբխի Ջրեն մեննակի կարտոֆիլը, լոբին, դդումն ու եղ տեսակ բաները կվրենք: Հերը կոտեմի ու առհասարակ ուսելու կանընչի համար, թե որ կուզես կանանչեղ լամն եղնի՝ լմնելու Ջուր և հարկավոր: Մե խոսքով, դընացի որ ախպուրըս դարձնեմ դեպի մարգը: Հերը նոր եյի Ջուրը փակե, յեր որ դսեն մեկը ճչաց: Դուս Թոա: Տեսնիմ՝ մե Թուրքիմ կնիկ, դույնը դցած, կայնե ու ցամաք ախպերին կաչե: Վո՞վ լմանար, ի՞նչ կանցներ մտքեն: Դուն լավ գիտես, որ եղ Թուրք մելլաթը, մեղնեն չատ չեղնի՝ մեղի չափ կրոնապաշտ և: Գուցե կմտածեր, Թե ես ախպուրն որ կտրավ՝ ասսանից եր: Ըսել և՝ ասպած իրան վրեն նեղեցեր և: Եղավեղ, ուստա Ջան, յես մե տեսակի եղա: Ջուրը մարդեն և կտրե, հերը ենիկ ասսու երածը կհաշվե: Մեղաքսորը յես եյի...

Ուստան, վոր չիրուխ եր պատրաստում, ընդհատեց դործը.

— Սխալ ես: Մարդու Ջուր կտրելն էլ ասսու կամքով կենդնի: Կրնա եղնի, որ եղ բոսպեչին ասպած ինքն եր քու ձեռքով հրամանք ենողը:

— Մենք, ուստա Ջան, մեղավոր մարդիկ ենք: Թե ասպած մե անդամըմ մեր ձեռքին ճամբա ցուց տա, սատանեն տասս անդամ կուտա: Կրնա եղնի, որ ինքը սատանեն եր եղ դործն ենողը, որ անմեղ կնիկը վախեննար:

Ուստան չսխմախ խփեց:

— Մտածեցի.— ավելի լավ չի՞ եղնի, որ Ջուրը միչա վաղվե ու մարդու մեղավոր ձեռքը չդիպնի ենոր: Թե ասպած չուզենա՝ որ մե մարդմ իրան Ջրեն խմե, Թող ինքն իրան հրաչքով կտրե եղ Ջուրը:

Ուստան ծուխը ներս քաշեց, ասպա մտածկոտ կերպով դուրս փչեց և սկսեց յերկար մտածել: Յերանոսն անթարթ նայում եր նրան:

— Վերցուր Թասդ, Յերանոս: Ես էլ Թող քու կենացդ եղնի: Թող ասպած քու բարվդ հիշե, չարըդ մոռհան ենե: Ասլիս չատ, չապրիս վատ: Քու երածիդ նպատակն ընձի հեչ դուր չեկավ: Տա ասպած, որ հիսխալմունքդ վերջի սխալմունքդ եղնի: Յես քսան տարվա ուստա եմ, քսան ախպուր եմ չինե, հերը հեչ չեմ տեսե, որ ասպած իրան սեփական ձեռքով Ջուր կտրե: Քու եղ մտածմունքդ աստուն փորձել կնչանակե: Ասպած կդործե մարդու ձեռքով: Ճիշտ և, սատանեն էլ կդործե մարդու ձեռքով, հերը ենտեղ էլ աստու մատը խառն և: Ենպես որ, եղ բոսպեչին քու Ջուր կըտրելըդ մե գերբնական նչանմ եր: Ասպած չե ուղեցե, որ եղ կնիկը Ջուր խմե: Տա ասպած Թողութուն Թե ենոր մեղքերուն, Թե քու, Թե իմ ու Թե առհասարակ աշխըրքի: Կենացդ:

Ուստան խմեց, կերավ մի պղպեղ և չարունակեց ծխել:

— Շնորհակալ եմ, ուստա Ջան,— սկսեց Ցերանոսը,— որ դուն ընձի խրատ տվիր, որ դուն իմ կենաց խմիր: Քու ըսածդ խոսքն իմ գլխուս ել պահակ: Ճիշտ է, ես սխալմունք եմ երբ, հըմը ախպուրն առաջ տասերկու ժամ կվազղեր, հիմի քսանչորս ժամ կվազղի: Առաջվա տասերկու մարդու տեղակ հիմի քսանչորս մարդ կիմաև ենոր ջրեն: Առաջվա տասերկու բերնի տեղակ հիմի քսանչորս բերան Թողութիուն կինդրե իմ մեղքերուս հըմար: Տա ասպած, որ ենոնց բարեմաղթութիունն իմ եդ մեղքս ել ջնջե:

— Ամմեն,— մրմնջաց ուստան:

Ցերանոսը գավաթը վար դրեց և մի մտոր սամիզոր կերավ: Հետևյալ յերեք գավաթը նրանք խմեցին լուռ, ամեն մեկն իր մտքերի հետ: Արդեն արևն իջնում էր դեպի վերջալույս:

— Ի՞նչ գերդաստան ունիս, Ցերանոս:

— Երկու պղտի ախպերտինքս, նշանածս, վեց տարեկան աղջիկս: Մե որըմ մեր տուն համմեցի, ուստա Ջան: Ասպած սաղ պահե՝ դո՞ւն ինչ ունիս:

— Մեկս, նշանածս, ութ տարեկան տղես: Ցես ել ինձնե գերդաստան չեմ:

— Ասպած մենծըցընե:

— Ամմեն:

4

Խմիչքը նկատելի կերպով ազդել էր Ցերանոսի վրա: Նա դարձել էր ավելի թախծոտ, բայց միևնույն ժամանակ աշխուժացել էր: Շուտ-շուտ ոտի էր լցնում, վերցնում էր իր գավաթը և յերկար նայում էր հեռու հորիզոնին, ուր իջնում էր արեգակը: Մի անգամ, այդպես նայելով, նա իր գավաթն իջեցրեց դեպի Թախտը, չոշափելով գտավ ուստայի գավաթը, չրխկացրեց և սկսեց խոսել՝ կարծես ինքն իր հետ, կամ դիմելով արեգակին.

— Ցես չատ կզարմանամ աշխարքի վրա... Ցերանընիննը տարի է՝ որ կապրիմ, հըմը ելի կզարմանամ: Ես փո՞ղ տեսակ հրաշք բան և աշխարքը, ո՞ւրտից և ծագե: Կանն ասպած և ստեղծե: Տե, յես ենոր զորութեանը մատաղ եղնիմ, հըմը ասպած և ստեղծե խոսքը չատ կարճ է, յես ել անհասկրցող մարդ եմ: Կուզեմ, որ մեկը նատի ու ընձի յերկան-բարակ բացատրե, թե վո՞վ ենք մենք, ընչի՞ կապրինք ու եդոր մեջն ի՞նչ տեսակ նպատակ կա: Ընչի՞, որինակի հըմար, իմ ծնողքս ընձի այսինչ աղջկա հետ նշանեցին, վոնչ թե այնինչ: Ինչո՞ւ է, որ հայ ու թուրք կա ու ենոնց մեջ խըզրութիուն կա: Ինչո՞ւ է, որ մարդու սիրտը մեկին չկըպավ՝ չի կպնի, կպավ՝ չի պոկվի: Ինչո՞ւ է, որ աղաթ կա, որենք կա ու մարդ իրան ուզածի պես ազատ չե...

Նա գավաթը վար դրեց, նայեց ուստա Մկրտչին, վոր լուռ ծխում էր և ուշադիր լսում:

— Մարդը, ուստա Ջան, կրնա ամմեն բոպպե ընկնի մեռնի: Որինակի հըմար, բահի կոթը տաշել ես ու գանակը դրել ես մարդի թմբին: Մեկ ել՝ վոտքդ քարին դիպավ, կամ թաց հողի վրա սլըքտաց, ընկար, մտավ սիրտդ: Աստու դործն է: Հըմը յես չատ կուզեմ ապրիլ ու խմանալ, թե, որինակ, մարդն ի՞նչըղ պիտի ապրի

մե յեսուն-քառասուն տարի եռեվ, վո՞վ սլիտի նստի ես թախտի վրա, ո՞ւր սլիտի աչե, ի՞նչ սլիտի մտածե... Մեկ ել կսեմ՝ աչես են վախտ սլիտի եղնի՞ն ես թախտը, ես հուլիկը, ես բոստանը, ես ագաթն ու ոբննքը...

— Ամմեն բան կեղնի, Յերանոս, դուն թաղ դարտրկե:

Հանկարծ բոստանչին դիմեց ուստային.

— Դառը-վուռնա բերել տա՞մ, ուստա Ջան:

— Չե, ուչ ե: Երթըրու վախտ ե:

— Խաթրս մի կոտրե:

— Չե, Յերանոս ախպեր: Մուքն ընկավ: Երթամ:

— Լավ, ուստա Ջան, հըլը չատ վախտ կա: Մե քիչ ել նստինք:

Յերանոսը գավի մնացած ողին դատարկեց գավաթնևրը և մտավ հուլիկ:

— Յերանո՛ս:

— Համմե:

— Ել չբերես:

— Մե գավըմ, ուստա Ջան, մեննակ մե գավըմ:

— Խո չպիտի՞ հարբինք, այ Յերանոս: Պետք չե:

Բոստանչին կոտրված դուրս յեկավ հուլիկից: Նա մի քիչ որորվում եր:

— Ես անղամ ել խաթրս կոտրեցիր, ուստա Ջան:

— Պտի ախպոր խաթրը մենձի ծառան ե: Նստի:

Աբեն ամբողջովին իջավ: Անմիջապես դարձավ յերեկո: Ուստան գավաթը վերցրեց, նայեց բոստանչուն,

հետո հանկարծ նայեց ավելի ուշադիր ու յերկար, և գավաթը նորից տեղը դրեց:

— Տխուր ես, Յերանոս:

Բոստանչին ձայն չհանեց:

— Դարդ ունիս:

Բոստանչին նորից ձայն չհանեց: Նա խոնարհեց գլուխը:

— Բախու մեջ թաթխած դարդը էն խեղդի: Դարդըն ստեղծված ե ընկոր հետ կիսելու հըմար: Ցես քու մենձ ախպերդ եմ...

Յերանոսը դարձյալ լուռ մնաց, բայց այս անգամ արդեն, ըստ յերևույթին, պատրաստվում եր խոսել: Շուռ յեկավ դեպի ուստան, ուզից սկսել: Նրա դեմքի վրա խաղում եր անվճռականությունը:

Ուստան գավաթը խփեց նրա գավաթին և խմեց:

Յերանոսն իր ողուն ձեռք չտվեց:

— Սեր ե ընկե սիրտս, ուստա...

— Ի՞նչ...

Պղպեղը ցած ընկավ ուստա Մկրտչի ձեռքից: Նա արագ վեր կացավ, չափխան դրեց, վերցրեց չիբուխն ու թութունի տոպրակը:

— Թքել եմ քու աղ ու հացիդ վրա:

Ցնվ չտալ քայլերով դիմեց դեպի հեռու պատի ճաղմը:

— Ուստա՛ Մկրտիչ...

Յերանոսը կտրեց նրա առաջը:

— Հեռո՛ւ քաշվի, աննամուս: Թյո՛ւ... Ըպը տալ՞ քըդ, կնի՞կդ, երեխե՞դ... Ե՞ս ինչ եր՝ լսեցի...

Ուստա Ջան, յես քու հոգուդ մատաղ, մի նեղենա, ներե: Իմ ուղածըս ել ըշտը են ե, որ դուն ընձի

մե խրատըմ տաս, թե ի՞նչըղ եղ սատանական սերը պակեմ սրտես, քցեմ դիչերվա քամուն, որ չտեսնիմ ել, թե ուր տարավ... Ցետ երթանք... Շատ կխընդրեմ...

— Ելի յես պիտի համբերեմ,— ասաց ուստան տրտունջած և յետ դարձավ դեպի հոլիկը:— Տես հըլը ինչ դուրս եկավ: Ցես ել գիտեյի՝ պատվով, նամուսով մարդ ես:

— Ուստա Ջան, առ ես դանակն ու սիրտս խրե, հըմը եղպես մի խոսի: Ամմեն մարդ աչխըրքի երևսը դոնյա մե անգամըմ սիրելու իրավունք ունի: Ում սիրտն որ սեր կա, ել ուրիչ կինկարմատ չի կրնա մանի ենտեղ: Հըմը ում սիրտը սիրուց դարտակ է,ենոր սիրտը քու խավաթելիդ նման բան է.—կայծ ընկավ՝ կմխա...

— Ըսըը նչանա՞ծդ,— չընջաց ուստան, կարծես ինքն իր ձայնից անգամ վախենալով:

— Ասպած ողորմի ծնողացս հոգուն: Ցես ենոնց խոսքին չհակառակվելու հըմար եմ առե ենոր:

— Լավ ես արե:

— Հըմը աղջկաս աղիղ արևը վկա, ուստա Ջան, առասը տարվա մեջ յես ենոր հետ մե որըմ չեմ սխրե...

— Սուս, Ցերանոս, ամոթ է, չսել տղա չես: Սերս վո՞րն է: Քուրըս ծնողացդ կամեցածը չե՞: Սուրբ պսակով հետդ կապվածը չե՞: Են մատաղ անտասունի ծնողը չե՞: Տասը տարի քու առաջըդ ծառայե՞լ է, թե չե: Ըսիր, որ քեղնեն պղտի ջուխտ ախպեր ունիս: Ենոնց չհետե, պահե՞լ է, թե չե: Հետի իրանից աչքը խո

դուսը չե՞, կամ բնութունը խո փուչ չե՞: Թե եղպես բան կա՝ ըսա:

— Ջե, ուստա Ջան, յես յերկընքեն-գետին չնորհակալ եմ թե ենոր բարքեն, թե բնութենեն:

— Ել ի՞նչ կուզես:

Ցերանոսը ձայն չհանեց:

— Մարդը, որ հետի լսողոց, լիրք կնիկ ել ունենա, ելի պիտի սիրե ու հետն ապրի, քանի որ պեչ կընիկն ել աստու տվածն է: Սուրբ պսակն անքակտելի յե: Գե՞չ է կնիկը՝ խրատ տու, ծեծե, հըմը ենիկ ելի քուկդ է: Ուղղվավ՝ չատ լավ: Ջուղղվավ՝ պիտի քաչես աստու պատիճը: Որենք եղ է: Լավ է թե պեչ է՝ կնիկը մարդու բախտն է: Մեննակ մահն փրավունք ունի ենոնց բաժնելու, իսկ մահեն ետեվ, մարդ լավ կինե, որ նորից աչխարք չմտնի: Դուն մենձ մարդ ես, ես ամմեն բանը պիտի դիտնայիր...

— Գիտեմ... Ըչտը եղոր հըմար ել սիրտս արուն կուլա:

— Ամոթ է, Ցերանոս, խոսած ես՝ չիտես ինչ կըխոսես: Որ այդեղնաս,գետինը պիտի մանիս ըսածիդ հըմար:

Նրանք լռեցին: Հեռվում,— հարևան հոլիկների լուսամուտներում,— յերևացին կրակներ: Բոստաններից մեկում մի եչ կանչեց յերկար և աղեկտուր: Ցերը նա լռեց, լսվեց չատ հեռու մի չան անընդհատ, միալաղաղ հաչոցը: Հետո դարձավ դարմանալի կերպով լուռ ու խաղաղ:

— Իսկ ի՞նչ լրբի վրա ես սեր քցե:

— Եղպես մի ըսե, ուստա Ջան, յես քու հոգուդ

մատաղ: Մի կտոր օչրաս: Խեղճ անասունը հետս լինելու էլ չի թաթխե...

— Ո՞ւմոնից է:

— Պատմածս Թուրքի վնիկն է, ուստա...

— Թուրքի՞ վնիկ է...

Ո ւստան կատաղեց. նրա լայն ճակատի վրա ուռեցին յերակները: Նա համարյա գոռաց.

— Են էլ Թուրքի՞ վնիկա վրա ես սեր քցե: Ա՛մոթ քու քրիստոնեութանդ էլ, հայութանդ էլ: Թքա՛ծ բիսաուռ աչքերդի՛ վրա, թքա՛ծ բիսաուռ մարդու վրա: Թյո՛ւ, հազար անգամ...

— Ուստա՛...

— Սո՛ւս, Ցերանոս, վոտքս կոտրիր, յես քու չեմքեղ նես չղնեյի: Ասի՛, ասի դարբապղ ցուց առ՝ երթամ: Մութն է:

Ցերանոսը թախտի վրայից վերցրեց դանակը և ղրեց ուստայի ձեռքը.

— Ահան դարբապը...

Ցեվ նա քանդից կրծքի կոճակները:

— Բաց երա, դնա, ուստա ջան, ձեռքդ դադրի...

Ուստա Մկրտիչը դանակը ղրեց թախտի վրա:

— Թաղումուն կննես, Ցերանոս ախպեր: Ցես քու քոստրնիդ մեջ քու հետդ եդ տեսակ խոսելու իրավունք չունեյի, հըմը մեղքն իմս չե: Ցես չլսած բաներ լսեցի, չտեսած բաներ տեսա... Բարի գիշեր:

— Ուստա՛...

— Համմե...

— Եդ ծանոթ խոսքերո՞վ կհետևնաս...

— Ի՞նչ կուզես...

— Խորուրդ չունի՞ս տալու, ուստա ջան: Զի՞ որ յես խորըրդի հըմար բացի ես խոսքը: Դուն իմ մենծ ախպերս ես...

Ուստա Մկրտիչը կանդ առավ:

— Խորո՞ւրդ...

Ցերանոսի խոսքերը հասան նպատակին:

Տիրեց յերկարատև լռություն: Խավարի մեջ վոչինչ չեր յերևում: Հանկարծ չիչխակց ուստայի չախմախաքարը և մանր կայծեր թռան: Ուստան ծխեց:

— Լավ ըսիր, Ցերանոս: Բեղի խորուրդ և հարկավոր: Ցես իրավունք չունիմ ես տեսակ հետևնալու: Հըմը իմ խորուրդս սլիտի են գլխուց քեղի հայտնի եղներ: Սիրտդ խաղկե եդ ազատ:

— Ի՞նչըդ խաղկեմ, ուստա:

— Գերդաստանդ հետու մի մնա, մեննակ մի մնա, պատվով, նամուսով բարեկըմարիք ունեցի, լավ ընկերտանք ունեցի, ուրիշի սերը տես՝ բարի նախանձով նախանձե, ինդ էլ սիրե, ազաթ ու որինք ձանձըցի: Գալով Թուրքին, իհարկե Թուրքն էլ մեղի նման աստու ստեղծածն է: Ենոր աստվածն էլ են և, ինչ որ մերը, հըմը կրոնքն էլ և ուրիշ, ազգն էլ: Ի՞նչըդ կրնա եղնի, որ քրիստոնա միլլաթը մահմեդականի հետ կապվի: Եդ բանը վոնչ հայը կննե, վոնչ Թուրքը, վոնչ էլ ուրիշը: Թե որ մեկն ու մեկն իրան կրոնքն ու ազգը փոխե, եռև նչանվի՝ եդ հըլը կարելի յե: Հըմը վո՞վ կփոխե: Հայը փոխե՝ հայերն ենոր կսըպանեն, Թուրքը փոխե՝ Թուրքերը...

Թեև ուստա Մկրտչի վերջին խոսքերը հնչեցին շատ դաժան, բայց նրա ձայնը մեղմ եր և ըստ յերևույթին նա այլևս բարկացած չեր Ցերանոսի վրա:

— Գեղի ոսկորը գեղի շանը պիտի հասնի: Հին ո-րենք է,—շարունակեց նա:— Թուրքը թուրքի հըմաք է ծնվե, հայը՝ հայի:

Ցերանոսը կանդնել եր ղլխիկոր և ընկճված:

— Լավ, այ ախպեր, հայն ու թուրքն որ իրար առնեն, ենոնց զավակն ինչ ազգ պիտի եղնի: Դուն ինձի ըսա...

Բոստանչին լուռ եր:

— Առանց ազգի մարդ կեղնի՞...

Ցեվ մի քանի վայրկյան պատասխանի սպասելուց հետո, ուստան նորից հարցրեց.

— Առանց կրոնքի մարդ կեղնի՞...

Նա չերուխը թիկթիկացրեց Թախտի ծայրին, Թափ տվեց մոխրից և դրեց դրպանը: Այժմ նա ուղ-ղակի խղճաց իր առջևում կաղնած այդ վշտաբեկ մար-դուն: Ցեվ նայելով մթնըթյամբ պարուրված նրա կեր-պարանքին, ուստա Մկրտիչը հանկարծ ժպտաց իր սե-փական չերջանկությյան գիտակցությունից: Ինքանե-րից ավելի ահա Թե ինչը կարող եր ազդել Ցերանոսի վրա: Ցեթե նա տեսներ արբազան ավանդների պահա-պան իր մորը, ամուսնացած հինգ հրաչալի տխպոր իր Հեղնարին և տան ուրախություն ու դարդ հինգ տարե-կան իր Գալուստին, չեթե նա դոնե մի անգամ լիներ իր ընտանեկան խաղաղ հարկի տակ և տեսներ, Թե ինչ-քան բախտավոր կարող է լինել մարդը,—անպատման հնախանձներ իրեն՝ բարի նախանձով և կպատրաստվեր այդ չլսված կախարդանքից: Ցերանոսը լավ մարդ է և տխուր է նա:

— Երթանք, Ցերանոս, չես քեզի դինի պիտի պատվեմ:

— Ուստա Ջան, չես չատ չնորակալ եմ: Հիմի ախ-պերությաս կուգան: Ընճի որ ետեղ չտեսնին, անհան-դիստ կեղնին: Մարդ է, մտքերեն հազար բան կանցնի: Եղավ չորս որ՝ որ տուն չեմ գնացե: Մնա մե ուրիչ անգամըմ կուգամ...

Ուստան հանկարծակիի չեկավ.

— Պատիվըս չե՞ս ընդունե:

Բոստանչին ղպաստացավ, ղպաց, վոր վիրավորում է ուստային և ստիպվեց համաձայնվել.

— Լավ, չես մե քիչ ետև կուգամ, մենծ ախպեր: Ներող եղի...

— Եղ կարելի չե: Իսկ Թուրքի կնիկա վրա ըսածդ խոսքերն անցած հաշվենք: Հարբած եյիր: Տունս Զորի Բողազն ում որ հարցընես, քեզի ցույց կուտան...

Հաղիվ Ցերանոսն ուստա Մկրտչին ճանապարհ եր դրել ու վերադառնում եր, յերբ իր հոլիկում վաուվեց նավթի լամպը: Ցեկել եր միջնեկ յեղբայրը:

— Եսոր ընչի՞ տուն չեկար, ախպեր Ջան,— հարց-րեց նա մոտեցող Ցերանոսին:

— Մարդ կար քովըս: Ի՞նչ կա-չկա տունը:

— Ինչ պիտի եղնի. լավ է: Մեննակ Թե, հարս-խանումը չատ անհանդիստ եղավ: Կիրակուր եմ բերե:

— Ցես կուշտ եմ, անուշ Ջան: Իսկ հիմի տեղ պի-տի երթամ: Դուն եատե՞ղ կքնես:

— Ջե, կանանչ պիտի տանիմ քաղաք:

— Հոլիկը հարուր դատա Թարխուն կա՝ են ել տար: Տե, արի դարբաղը վակե: Բարի գիշեր:

— Բարի գիշեր, ախպեր Ջան:

Ցերանոսը գնաց:

Ցերանոսն արագ-արագ քայլեց, վորպեսզի հասնի ուստայի յետևից: Ճանապարհը կորած եր մթության մեջ և այնտեղ վոչ վոք չեր յերևում: Տեղ-տեղ, մերթ այս կողմի պատի խոռոչում, մերթ այն, խաղաղաճայն հոսում եյին աղբյուրները: Դարբասները փակ եյին և պատերի յետևում հանդիստ եյին ծառերը:

Ցերանոսը քայլերն ավելի արագացրեց: Հասնելով այն անկյունին, վորտեղից ճանապարհը թեքվում եր դեպի Թուրքական չուկայի վողոցը, նա հանկարծ նկատեց իր առջևից դնացող մեկին: Հարբածությունից՞ եր, թե խավարից՝ նրան այնպես թվաց, թե դա Քրքուհին եր: Նա արագ քայլեց, վորպեսզի մոտենա և ստուգի, թեև առանց այն էլ համոզված եր նրա ով լինելու մեջ: Բայց դեռ մի քանի քայլ չարած, իր առջևից դնացողն արագ նայեց յետ, և տեսնելով, վոր մարդ է գալիս, չաղրան վար առավ դլխից և անհետացավ մի դարբասի յետևում: Ցերանոսը նույնպես նետվեց այնտեղ: Դա քաղաքի պանդոկներից մեկն եր: Նրա բակում, մթության մեջ, կանդնած եյին հայ դյուղացիների սայլերը, Թուրք դյուղացիների արաբաններ, ռուս դյուղացիների Ֆուրդոններ, անկարդ, խառնիխուռը: Վոչ վոք չեր յերևում: Այդ կողմի պատն իր ամբողջ յերկարությամբ ախոռն եր՝ յեղներով ու ձիերով լցված, իսկ ձախ կողմի պատը՝ չայխանան եր և դիշերելու մեծ սենյակն իր հասարակ թախտերով: Պանդոկում իշխարհի վոչ մի կին չեր լինում և Քրքուհին,— վորքան էլ վոր նա չաղրան վար առած լիներ դղուշության համար,—իսկույն կնկատվեր տղամարդկանց մեջ և բնականաբար զարմանք կառաջացներ: Բայց Ցերանոսը դիտեր, վոր նա պանդոկ մտավ վոչ թե թաղնվելու, այլ մի ուրիշ անցքով դուրս պրծնելու համար: Ցեվ վորովհետև նա լավ դիտեր ինչպես քաղաքի բոլոր պանդոկները, այնպես էլ այդ պանդոկը, ուստի և, իսկույն նկատվեց դեպի նրա յետևի դրոնակը, վոր բացվում եր մի այլ վողոցի վրա: Այնտեղից դուրս գալով վողոց, րոպտանչին արագ նայեց չուրջը:

Փողոցը դատարկ եր: Վոչ վոք չկար:

Ո՞ւր կարող եր անհետացած լինել Քրքուհին այդքան արագ: Փողոցի յերկու անկյուններն էլ պանդոկի դռնակից բավական հեռու եյին և դժվար թե նա արդեն հասած և թեքված լիներ նրանցից այն կողմ...

Հանկարծ Ցերանոսը մտածեց, վոր կինը կարող էր մտած լինել յեկեղեցի, վորը դտնվում եր պանդոկից վոչ այնքան հեռու: Նա չտապ առաջ անցավ փակ խանութների միջարկանի չարքերի միջով և մոտեցավ յեկեղեցուն, բայց և իսկույն աղբրագարձավ, վոր յերեկոյան ժամերդությունը չատ չուտ և վերջանում և այդ ժամին վոչ մի յեկեղեցի բաց չի լինում:

Մթության մեջ, խանութների դեղին, կապույտ, կարմիր կամ կանաչ փեղկերը յերևում եյին միանման սև դույներով: Ցերանոսն չտապց դուրս գալ նրանց ոտղտուկ պատճառող չարքերի միջից դեպի դլխավոր փողոցը:

Այնտեղ վառվում եյին ելեկտրական հատ ու կենտ լույսեր և բաց խանութներից գալի լամպերի պայծառ չողերը դուրս եյին հորդել դեպի փողոց, առատ լուսավորելով այն: Փակ խանութները տախտակե փեղկերը չունեյին, այլ յերկաթե ճաղեր, վորի պատճառով և

գլխարկ տպավորություն էին թողնում: Շատ խանութների վրա կային յերկրորդ հարկեր, վորոնք բնակարաններ էին՝ պայծառ լուսավորված ու դեղնցիկ լուսամուտներով: Փողոցն ընդհանրապես չքեղ եր, խանութները՝ ճոխ և տները՝ հարուստ: Մայթերով անցուդարձ էին անում շլյապավոր ու փողպատավոր տղամարդիկ՝ ռեդինգոտավոր ու կրթահատավոր կանանց հետ թևանցուկ արած, գրոսնում էին ռուս, յերբեմն նաև հայ սպաներն իրենց սիրուհիների հետ, որովհետև էին տուն վերադարձող հարբած դյումբեցիները, փողոցի մեջտեղով անցնում էին կառքերը՝ մերթ կենտկենտա, վոր սլանում էին արագ և մարդկանց տանում կայարան, յերեկույթ կամ այլ տեղ, մերթ դուդդուդդու և յերեք-յերեք, վոր դնում էին դանդաղ, կողք-կողքի: Ներանցում նստած էին լինում քեֆ անողներ և անպայման նվագում եր դաուլ-դուռնան ու բացականչում եր մեկը՝ մի ձեռքում բաժակ բռնած, մյուսում՝ շիշ: Անկյունում կանգնած ռուս վոստիկանը բեխերն եր վոլորում բավականությունից, ապա լրջանում եր և խիստ տոնով դիմում կառապանին՝ պահանջելով լռեցնել նվագն ու բացականչությունն այդ վայելուչ փողոցում:

Յերանոսը նայում եր կանանց՝ թրջուհուն դանելու հույսով: Թեև նա միայն մեկ անգամ եր տեսել նրա դեմքը և այն էլ մի քանի վայրկյանով, բայց կասկած անգամ չուներ, վոր խակուլն կճանաչեր նրան: Բայց կինը, վոր շարունակ չադրայով խուլ կերպով վարթևված, նույնպես մի անգամ եր տեսել իրեն և այն էլ այնքան չփոթված վիճակում,—այժմ հազիվ թե ճանաչեր: Ուստի և, բոստանչին վատահ եր, վոր նա իրենից խույս չեր տա:

Բայց նա չկար:

Յերանոսը, վոր մութ փողոցում կնոջ խուսափելու ժամանակ չեր կարողացել վորոշել, թե նա ինչ հագուստ եր հագել, այժմ իզուր եր չտապում այս ու այն մենակ կնոջ յտևից և դեմքին նայում: Անցորդները զարմանում էին նրա վրա, յերբեմն և վախենում:

Իզուր փնտրելով նա կտրեց-անցավ գլխավոր փողոցի լուսառատ ու բազմամարդ մասը: Այժմ նրա յերկու կողմերում կանգնած էին միայն միհարկանի բնակարանները, վորոնց լուսամուտները դրսի կողմից ուներին կարմիր կամ կապույտ փեղկեր՝ այդ վոչ ուշ ժամին արդեն ծածկված: Միայն մի բնակարանի լուսամուտներն էին բաց, և այն էլ, հենց վոր Յերանոսը մոտեցավ՝ փակվեցին: Կինը, վոր փողոց եր դուրս յեկել փեղկերը ծածկելու, վրա բերեց չանգալներն ու զարմացած նայեց բոստանչուն:

Յերանոսն ղռաց, վոր լինքը հուղված կամ չփոթված տեսք ունի և ղռաստացավ: Դիմացը յերևում եր Զորի Բողազը և հավանաբար ուստա Մկրտչի տունը մոտ եր: Պետք եր դեմքի վայելուչ արտահայտություն ունենալ:

Յերևաց մի կառք առանց ձիերի՝ կառապանի դռան առաջ կանգնած: Մի դարբասի դռնակից դուրս յեկան յերկու մարդիկ: Մեկը բարի դիշեր ասաց ու գնաց, իսկ մյուսը նորից մտավ ներս: Հանդիպեց ու. յետ մնաց փողոցի անկյունում կանգնած մի աղբյուր՝ նույնպես ուստա Մկրտչի չինածը: Լսելի դարձավ Զորի Բողազով հոսող գյումբրի-չայի մեղմ խշշոցը: Հասնելով այն տեղին, ուր դիմացից յեկող գետակը մտնում եր կամրակապ ստորգեռնյա անցքը և այդպես հոսում վողջ

քաղաքի միջով, տների ու փողոցների տակով, մինչև քաղաքի մյուս ծայրը, մինչև բոստանները, Ցերանոսը տեսավ իր աջ ու ձախ կողմում,—ցածրում, և մանավանդ բարձրում,—պլպլացող բազմաթիվ կրակներ, նկատեց մի դեղ խոտ կտուրներից մեկի վրա և լսեց ինչ-որ չան տխուր, միալար հաչոցը:

Սկսվում էր Ջորի Բողազը:

6

Ցերանոսն ուռիներից մեկից մի ճյուղ պոկեց՝ շների հնարավոր հարձակումներից պաշտպանվելու համար և առաջ անցավ: Ցերկու տնից այն կողմ, մի նեղ քարե սանդուղք ուղիղ ջրափից բարձրանում էր դեպի ձորի բարձրը,—դեպի ամենավերին փողոցը,—վորտեղ իր չրջակա չենքերից ցայտուն զանազանվելով, կանգնած էր մի յերկհարկանի տուն՝ կապույտ ներկած պատերով և ամբողջ յերկրորդ հարկի յերդյակությամբ վայտե դեղեցիկ պատշգամբով: Դա պատկանում էր վոսկերիչ Վաղինակին: Ցերանոսը դիտեց այդ տունը, ուստի և բարձրացավ դեպի այն՝ ուստա Մկրտչի տան տեղն այնտեղից իմանալու համար: Տան առաջին հարկի մի անկյունը մանրավաճառքի խանութ էր, վոր նույնպես պատկանում էր վոսկերիչ Վաղինակին: Խանութը դեռ բաց էր,— այնտեղ պայծառ լույս կար,—ուստի և բոստանչին իր քայլերն ուղղեց դեպի այնտեղ: Ներսում, դախլի յետևում, նստած էր վոսկերչի կինը:

— Բարի իրիկուն, հարս-աբլա,—ողջունեց Ցերանոսը:

— Աստու բարին, ախպեր:

— Ուստա Մկրտչի տունը վո՞րն է:

Վոսկերչի կինն ըստ յերևույթին իր արժանապատվությունից ցած համարելով այդ հասարակ ուստայի տան տեղն իմանալը, դեմքը ծռմռեց.

— Մեր տան դուռը ձեձե, Վարոսին հարցուր: Ցես չիտեմ:

Նույն րոպեին խանութի մտավ ինքը՝ Վարոսը:

— Վարոս ջան, ուստի տունն ես ախպորը նչանց տու,— դիմեց մայրը նրան:

Վարոսը վոտքից գլուխ չափեց բոստանչուն և առանց խանութից դուրս յելնելու, բացատրեց.

— Կիջնես, կերթաս ուղիղ, մինչև Ջուխտ-ախպուրը: Ենտից են կողմ՝ վրա չորս տունն է:

Ցերանոսը դուրս յելավ և գնաց: Խանութում վառվող թևև նավթի, բայց մեծ լամպի լուսավորությունից հետո, այժմ հեռու և մոտիկ պլպլացող կրակները թվացին այնքա՛ն մանր և նրանցով լուսավորված Ջորի Բողազն այնքա՛ն մութ...

7

Ուստա Մկրտիչը դուռը բաց արեց:

— Նես համմեցի, Ցերանոս ախպեր: Տունս խո դժվար չգտա՞ր:

— Չե, ընչի՞:

Փոքրիկ միջանցքում, դեմ-դեմի, դտնվում էին յերկու դռներ: Ուստան բաց արեց դրանցից մեկը և հյուրի հետ մտավ ներս: Նա յերկու ձեռքով յետ տարավ կանաչ մահուդե ծանր վարագույրները և նորից կրկնեց.

— Համմեցի:

Բոստանչին չափիան դրեց անկյունի կլոր սեղանին, նարդու մոտ, և նստեց:

— Ցա՛, զարմացավ ուստան,—եղ չեղավ: Առաջին անգամ աթոռքի վրա նստող ղոնախը վերջին անգամ թանաքիրոջ դլխուն կնստի: Համմեցի թախտի վրա:

— Լավ ե, նեղուլուն մի քաշե, ուստա Ջան:

— Ե՛, յե՞ս եմ տանտերը, թե դուն,—կատակեց ուստան:—Իմ տանս մեջ ուրիշ կարգադրութուն չեղնի:

Ցերանոսը ծիծաղեց և տեղափոխվեց թախտին: Հենվեց մութաքաներից մեկին և գրպանից թաշկինակը հանելով, ճակատը սրբեց:

— Շուն խո վրա չհասա՞վ:

— Չե, լավ սրծա:

Ուստան դնաց դեպի դուռը, կխարաց արեց, ձայն տվեց իր մորը, ապա պատասխանի չսպասելով՝ դուրս ցելավ:

Մենակ մնալով, Ցերանոսը չուրջը նայեց:

Սենյակի մեջտեղում գրված եր մեծ, ծալուվի սեղանը, վորի մի թևը բաց եր: Նրա վարդադույն նախշերով սպիտակ սփռոցի վրա առատ լույս եր հորդում առաստաղից կախված չուգունե դեղեցիկ լամպը՝ սպիտակ, մեծ լուսամփոփով: Լուսամփոփից վերև, ամբողջ սենյակում հաճելի կխսախաւար եր: Իր դիմացի պատի վրա, յերկու լուսամուտների մեջև, ամրացված եր պատի լամպը, վոր հանգած եր: Լուսամուտները ծածկված եյին ժանյակավոր սպիտակ վարագույրներով, իսկ անմիջապես պատկինները՝ դունատ վարդագույն քողով: Դուռը ծածկված եր կանաչ մահուդե ծանր վարագույրներով: Դռան պատի խորքի անկյունում դանվում եր կլոր սեղանը՝ կարմիր չալե ծածկոցով, վորի վրա Ցերանոսն իր չափիան եր դրել և վորի կող ընկած ծոպերի հետ լուռ խաղ եր անում տան կատուն: Մյուս պատի խորքի անկյունում դրված եր բուֆետ-պահարանը: Բոլոր պատերը ծածկված եյին գրքերով և նրանց վրա խփված եյին դանազան ընտանեկան լուսանկարներ և այլ նկարներ: Սենյակում կային նաև ուրիշ առարկաներ, շատ մանր-մունր բաներ, վորոնք դեղեցիկ և հաճելի եյին դարձնում այն, բայց Ցերանոսը չդրաղվեց դրանցով: Դրսում լսվեց ուստա Մկրտչի ձայնը, վորն լինչ վոր կարգադրություն եր անում: Հետո մեղմ ճռռաց մյուս սենյակի դուռը: Ցերանոսը գրպանից հանեց իր հորից հիշատակ մնացած սև, փայլուն թութունի տուփն աստղ ու լուսնի արծաթագույն նկարով և պատրաստվեց ծխախոտ քաթաթելու, յերբ սենյակի դուռը բացվեց ու ծածկվեց, կանաչ վարագույրները հանդարտ յետ գնացին, և նրանց միջև, վորից դլուխ նույնպես կանաչ դույն հագած, յերևաց ուստայի կինը:

Ցերանոսը ցնցվեց անակնկալից կայծակնահար յղաց.— ուստայի կինն անսահման նման եր թրքուհուն...

Մի վայրկյան բոստանչուն թվաց, թե դա տեսիլք է, մի կանաչ տեսիլք՝ հայտնված դռան կանաչ վարագույրների միջև: Սակայն կինն առաջ չարժվեց, և վորովհետև դեռ Ցերանոսի հետ ծանոթ չեր, ապա մի այն անցողակի բարևեց ու մոտեցավ պահարանին: Ցե թե մի վայրկյան նույնիսկ հնար լիներ յենթադրել, վոր նա մի լինչ վոր հրաչքով թրքուհին եր, ապա նա չճանաչեց բոստանչուն, իսկ նրա չվոթմունքն ամենայն

հավանականությամբ վերադրեց իր անթերի դեղեցկության թողած տպավորությանը:

— Չար ես՝ խափանվի,—մռայնեց Ցերանոսը աչքերը սառած: Նա չատ եր լսել, որ սատանան ինքը, չատ հաճախ հրաչալի Թրքուհու կերպարանք առած, գալիս է մարդկանց խելքից հանելու, բայց յերբեք իր աչքով չեր տեսել այդ բանը և յերբեք էլ չեր հավատացել: Սակայն այժմ ահա նա իր աչքի առաջ... Թե՞ հարբածությունից և այդ իրեն թվում և սենյակում վոչ վոք չկա: Ցեթե չար ես՝ խափանվիր, խափանվիր...

Բայց յեթե մի վայրկյան հնար լիներ նույնիսկ յենթադրել, որ նա ինչ որ հրաչքով Թրքուհին ինքն եր, ապա քիչ առաջ եր վերադարձել տուն, քանի որ դեռ դրի հագուստով եր: Նա հագել եր վառ կանաչ մահուդից ջուբբա՝ մուդ կանաչ գույնի թավիշ կրծկալով: Գլուխը ծածկել եր մերթ կանաչադույն և մերթ կապտագույն յերևացող մետաքսե թաշկինակով, որի ծայրերը նա թույլ կերպով կապել եր ծոծրակի տակ: Թաշկինակի տակից, նրա լայն ճակատի վրա, յերևում եր վրան բազմազույն մանր թելեր կպցրած կանաչ թավիշե ճակատակապը՝ թանթանան, որի յերկու ուռուցիկ ծայրերը գտնվում եյին նրա համարյա քունքերի վրա: Թանթանայից ներքև,—նրա մի ուռուցիկ ծայրից մյուսը,—գնում եյին մարգարիտների չարքեր, իսկ դրանցից էլ ներքև՝ յերկու չարք վոսկեդրամ՝ այնքան խիտ կերպով մեկ-մեկու վրա յեկած, որ նրանցից յուրաքանչյուրը հազիվ եր յերևում մի նեղ կիսալուսնով: Քունքերի մոտ, վոսկու համահավասար չարքերի տակից կիսով չափ կախվել եյին յերկու մեծ վոսկիներ, իսկ ճակատի մեջտեղում՝ մի յերրորդը,—ավելի մեծը:

Գյումբուհու այդ վոսկե գլխազարդը ծածկել եր նրա ճակատի միայն վերին մասը, վոսկիների և հոնքերի մեջև թողնելով ճակատի մի հրաչալի, լայն չերտ: Նրա վզից վոսկե նուրբ չղթայով կախված եր մի փոքրիկ ժամացույց՝ նույնպես վոսկե: Այժմ, յերբ նա կռացել եր դեպի պահարանը, ժամացույցը կախ եր ընկել և ճոճվում եր: Ինքը չղթան չատ յերկար եր և Հեղնարն ութ-ինն անգամ այն փաթաթել եր իր բարձը, սպիտակ վզի չուրջը: Ցերը նա չարժում եր գլուխը, նրա գլխի մետաքսե թաշկինակը հուրհրատում եր մերթ կանաչ և մերթ կապույտ:

— Իսկ յեթե հանկարծ նա Թրքուհին ի՞նքն է,—անցավ Ցերանոսի մտքով և նա սարսափեց:—Մեծ և զորությունեղ աստված: Այս ի՞նչ մեղավոր բաներ են անցնում նրա գլխով: Նա վաղը կդնա աստվածածնի յեկեղեցին, հինգ մոմ կվառի, տաս մոմ կվառի իր պղտոր մտքերի մեղքը քավելու համար: Ի՞նչպես կաղող և ուստա Մկրտչի ընտանեկան սուրբ հարկի տակ ապրող անբիծ կինը լինել նույն այն Թրքուհին: Չե՞ վոր յեթե այդ այդպես է, ուրեմն նա Թուրքական Թագավոր դնում է գաղտնի բանի համար: Մեղա, մեղա քեզ, աստված...

Բայց ինչո՞ւ նստել-տարակուսել ու մեղանչել: Ցերանոսը կարող է ջուր խնդրել նրանից և փոխանակ «քուր Չան» ասելու, «բալի Չան» ասել: Ցեթե բալի խոսքի վրա նա ինքն իրեն մատնեց, ուրեմն... Մեղա, մեղա քեզ, աստված, դու ինքդ հանիր այդ կասկածը Ցերանոսի սրտից և թույլ մի տա նրան՝ ստուգել իր մեղավոր միտքն ու այդպիսով ավելի մեղանչել...

Կինը պահարանի մոտ իր գործը վերջացրեց և յետ դարձավ։ Ցերբ նա անցավ Ցերանոսի մոտով, Ցերանոսը հազիվ կարողացավ տիրապետել իր դեռ հարբած ուղեղին, վորպեսզի չկտրի նրա առաջը՝ ինչպես ցնրեկով և չըղավի «բալլի»...Լավ եր, վոր կինն իսկույն յետ տարավ դռան կանաչ վարագույրները և կտրավ նրանց յետևում՝ ինչպես կանաչ տեսիլ...

Համարյա անմիջապես դրանից հետո, դուռը բացվեց և այս անգամ ներս մտավ ուստա Մկրտիչն իր ութ տարեկան տղայի հետ։

— Ցերանոս ախպեր, ծանոթացի ժառանգիս հետ, իմ ամենաբանաձիր, ամենամենծ ախպերիս հետ։ Գալուստ, ձեռքդ տուր հորյեղբայրին։ Եղպես... Հիմի, Ցերանոս ախպեր, յես հաստատ գիտեմ, որ դուն լավ մարդ ես։ Իմ Գալուստս մինչև հիմի մե ղեչ մարդում ձեռք չե տվե, քոլը չե դնացե։ Իմ անմեղ երեխես անմեղ հոգին՝ իմ վորոշիչ աստղս ե...

Պարզ չեղավ՝ կատա՞կ եր անում ուստա Մկրտիչը, թե լուրջ եր ասում։ Ցերանոսն այնքան ցրված եր, վոր անկարող յեղավ ուշադրություն դարձնել այդ բանի վրա։

— Հիմի, Գալուստ ջան, քիչըմ խոսի հորյեղբայրի հետ։ Մե քանիմ րոպեն ընձի նորից ներե, Ցերանոս ախպեր...

Ցետ ուստա Մկրտիչը դարձյալ դուրս դնաց։

Ցերանոսը դրկեց յերեխային։ Ուրեմն այն կինը տեսիլ չեր, այլ իրականություն։ Ահա և նրա տղան՝ նրան անչափ նման։ Ցերանոսը ձեռք և տալիս նրա սև մազերին, չոչափում և սլիտակ մորթը, նայում և մուխ աչքերի մեջ։ Ցեթե դոյություն ունի այս փոքրիկ յերեխան, նշանակում և դոյություն ունի և նրա մայրը։ Դրանում կարելի եր բոլորովին էլ չկասկածել, բայց չե՞ վոր այնքան անակնկալ եր հանդիպումը, այնքան կարճատև եր նրա այցելությունը և այնքան մթագնած եր իր դիտակցությունը... Զարմանալի մի լույս սփռվել եր սենյակում, իսկ այդ լույսի մեջ կանգնել եր սքանչելի Հեղնարը...

8

Ուստա Մկրտիչը բացեց մի ճոխ սեղան։ Նրա մայրը նստել եր թախտի վրա, Ցերանոսի կողքին։ Ինքն ուստան նստել եր աթոռին, մեջքը դեպի դուռը։ Ցերեխան կլոր սեղանի տակ խաղ եր անում կատվի հետ։ Սեղանն ապասարկում եր Հեղնարը, վորն ուստայի խնդրանոք, չեր փոխել իր դրսի զգեստը։ Նա հաճախ ներս ու դուրս եր անում, բայց հետո, յերբ սեղանի վրա ամեն ինչ արդեն իր տեղն եր, յեկավ և նստեց ամուսնու կողքին,—ամուսնու և Ցերանոսի միջև։

Վառվում եր նաև պատի լամպը։ Նրա ուժեղ լույսի տակ Ցերանոսն տկսեց ավելի ուշադիր նայել Հեղնարին։ Կինը հագիվ յերեսունհինգ տարեկան լիներ։ Ուներ լիքը մարմին և փոքրիկ, նուրբ ձեռքեր։ Ցերբ խոսում եր ամուսնու հետ, թվում եր, թե նա իր հայրն է, թեև ընդամենը տասը տարով տարբերություն կար նրանց մեջ։ Բոստանչին նայում եր նրան անվայելուչ չափով յերկար, անկարող՝ քողարկել իր հետաքրքրությունը։ Ուստան և իր մայրը կամ չեյին նկատում այդ, կամ չնկատել եյին ձևացնում, իսկ Հեղնարն անկասկած զգում եր նրա հայացքը, սակայն առանց մաղաչափ չփոթվելու։ Ցեվ նա զարմանալի

կերպով նման եր Թրքուհուն, ավելի նման, քան առաջին անգամ ներս մտնելիս:

Ուստա Մկրտիչը դինի լցրեց և վերցնելով բաժակը, դիմեց հյուրին.

— Ցերանոս Ջան, կենացդ: Դուն բարով ես ֆկե իմ տունս: Ցանկանք և հուսանք, որ մեր բարեկամությունը յերկարատև եղնի...

— կենացդ, ախպեր,— ասաց Հեղնարը և բաժակ բաջձրացրեց:

Ցերանոսը նայեց նրա բաժակին, հետո վոսկե մատանիներ հագած նուրբ մատներին, հետո ջուրբայի լայն թևքին, վորի միջից յերևում եր Հեղնարի ձյունանման թևը, դաստակի վրա հագած վոսկե ապարանջանին, վորն իր դունատ դեղինով զարդարել եր մաշկի տպլնտակությունը: Ցերանոսին թվում եր, թե հիմա ինքը վար կչպրտի իր բաժակը, «բաչի» կբացականչի և կնկնի նրա վոտները:

— կենացդ, ողուլ,— լսվեց ուստայի մոր ձայնը:

Բոստանչին սթափվեց և հայացքը չուռ տվեց այն կողմ.

— Ամմենքդ էլ չնորհակալ եմ ձեր քաղցր հյուրասիրության հըմար: Մկրտիչ ախպեր, չնորհակալ եմ քու բանձր պատվիդ հըմար, որ դուն ընձի ցույց կուտաս...

Ցերբ բոստանչին սկսեց խոսել, Հեղնարը հանկարծ լարվեց, կենտրոնացավ: Թվաց, թե նա ուզում եր հիշել հյուրի ձայնը, բայց և իսկույն հանդարտվեց: Խոսելիս՝ բոստանչին մի քանի անգամ նայեց նրան և ասածից, վոր հանկարծ, ով գիտե, դուցե իրոք նա Թրքուհին է: Այդ դեպքում, յերևի չատ չուտով կինը կճանաչի իրեն՝ յերբ ուստա Մկրտիչը վորևե առիթով հիշատակի իր բոստանչի լինելը: Զգիտես ինչու՝ վախեցավ: Նա չեր ուզում ճանաչված լինել: Դուցե այդ բանի համար, վոր իրեն ճանաչելուց հետո կինը կարող եր չվոխվել, մատնել ինքնիրեն...

Ցերկրորդ բաժակն առաջարկեց ինքը, Ցերանոսը: Նա գնաց կլոր սեղանի մոտ, բերեց այնտեղից յերեխային, նստեցրեց իր ծնկանը և սկսեց.

— Ցես ես անմեղի կենացը կխմեմ ամմենից առաջ: Դուն, հարս-արլա, ես տան մենձն ես, քազում տարի քուկդ և ազե ամենամենձ պատիվը, պատիվը հիմի էլ և քուկըդ, հըմը եղվանն ես մարդունն ես: Եգվան մարդիկ բոլորիս մտհհան պիտի լինեն, ասոր պիտի պատվեն: Ուստա Մկրտիչ, թե դուն ասոր մեջ քու չնորքնեդ բան դրած ունիս, ուրեմն դիտցի, որ ասոր հարդաղը քեղի հարդած կեղնի: Հեղնար քուրրիկ, թե դուն քու սիրունությունեդ բան դրած ունիս, ուրեմն դիտցի, որ ասոր սիրողը քեղի սիրած կեղնի: Ծնողքը պիտի ապրի իրան զավակի մեջ: Գալուստ Ջան, յես քու անվանդ մխաքը կսեմ, հըմը մտհհան չենես,—Գալուստ՝ ազ ես և, որ պիտի գա...

Ցերեխան ժպտաց և նայեց մորը: Մայրը խանդաղատանքով թևքվեց և ամուր գրկեց նրան: Ցեղավ մի վայրկյան, յերբ նրա թևը չվնվեց Ցերանոսի ձեռքին: Ցերանոսը ցնցվեց կնոջ ջերմությունից և բաժակը վար դրեց:

— Քուրրիկ...

Նա կարկամեց: Ինչո՞ւ գիմեց նրան և ի՞նչ ուներ ասելու...

— Քուրրիկ,— կրկնեց նա:— Մկրտիչ ախպերս առավոտվան իրիկուն տունը չե, մերս էլ պառավ կնիկ է...

Հեղնարը հանկարծ դունատվեց: Ո՞վ գիտե, ի՞նչ վերջավորություն էր սպասում նա հյուրի խոսքերից:

— Դուն ինքդ պիտի մենծըցնես ես ճուղը,—չարունակեց Ցերանոսը:—Ենպես երա,որ ենիկ միշտ դալար մնա ու պտուղ տա:

Հեղնարը ժպտաց, ընդհակառակ յեղավ և բոստանչուն մոտից վերցնելով յերեխային, ակնածանքով թևքվից դեպի ամուսինը: Ուստան պայծառացավ: Ցերանոսը նայեց նրան և իր ամբողջ հոգով նախանձեց նրա յերջանկությանը, և իր ամբողջ հոգով խղճաց նրա դըժբախտությանը...

9

Ցեվ վերջապես յեկավ ժամանակը, յերբ պետք էր Հեղնարի կենացը խմել: Ցերանոսն ինքը լցրեց բաժակները և մոքի մեջ ընկավ...

Ի՞նչ ասել բաժակի վրա... Ակնարկե՞լ Հեղնարին, վոր ինքն այն բոստանչին է, վորը գիտե նրա դաղտնիքի մի կեսը և գուշակում է մյուս կեսը: Կամ գուցե հասկացնե՞լ տալ ուստա Մկրտչին, վոր իր կինն ունի մի սոսկալի դաղտնիք, չլսված ու չտեսնված մի մութ պատմություն...

Բայց ի՞նչպես թե... Ախր Ցերանոսն ինքն էլ դեռ չի կարող հավատալ այդ բանին, թեև Հեղնարի դեմքը մի կաթիլ ջրի պես նման է Թրքուհու դեմքին: Կարող է պատահել, վոր դա հրաշք է: Հրաշքն ավելի և հավատալի, քան այդպիսի չլսված խայտառակություն...

Բայց ախր ի՞նչպես հավատալ հրաշքի հիմա, յերբ վողջ կյանքիդ մեջ վոչ տեսել ես, վոչ հավատացել:

Գուցե ստուդելն ամենից լավ է...

Սակայն այդ միտքն ավելի սարսափեցրեց Ցերանոսին: Ցեվ նա, դեռ վոչ մի վորոշում չկայացնելով, բաժակը վերցրեց և վոտքի կանդնեց: Մի րոպե մնաց լուռ, աչքերը խուփ, ապա չընջաց.

— Ընտանիքի պատիվը սուրբ է... Հըմը սերն էլ է սուրբ... Վո՞րն է ավելի սուրբ՝ ասպած գիտե... Վով ընտանիքի պատվի հըմար իրան սերը սըպանե՝ իրան կսըպանե...Վով սիրու հըմար ընտանիքի պատիվը սըպանե՝ ընտանիքին կսըպանե:Տա ասպած, որ ամեն տեղ ընտանիքն ու սերն իրար բռնեն, իրար հետ եղնին...

Ուստա Մկրտիչը բոստանչուն լսում էր մեծ դողհունակությամբ, իսկ նրա պատառ մայրը դլխի մերթ ընդ մերթ չարժումներով տալիս էր իր համաձայնությունը:

— Ընտանիքի պատիվն արևստավորի պես է,—չարունակեց Ցերանոսը.— արևստավորի ճակտի պես բաց է, սրտի պես աղնիվ, ձեռքի պես հալալ...

Ցերանոսը հարդանքով լցված մի հայացք դցեց ուստայի կողմը, լռեց մի վայրկյան, ապա նորից չարունակեց.

— Հըմը սերը թուրքի կնկա պես է...

Հեղնարը կայծակի արագությամբ դունատվեց և վողջ մարմնով թևքվեց հյուրի կողմը:

— Թուրքի կնկա պես սերն էլ չադրի տակ է, որ վոնչ տեսնել և կարելի, վոնչ լսանալ...

Վոչ վոք չեր նկատել Հեղնարի դունատվելը: Ցերանոսի վերջին խոսքերից հետո, նա, ըստ յերևույթին տեսնելով, վոր թուրքի կնոջ հիշատակությունն իրեն

չեր վերաբերում, այլ միայն համեմատության համար եր,— հանգստացավ և սկսեց խաղ անել յերեխայի հետ:

— Ուստա Մկրտիչ,—դիմեց բոստանչին նրան.— դուն իմ մենծ ախպերս ես: Թե ըսածիս մեջ սխալմունք եննեմ, ներող եղի: Հըմը ինչքան որ իմ խելքս կհասնի, յես եսպես դիտեմ.— տղամարդն ընտանիքի սունն է, իսկ կնիկն երդիքը: Սունն իրան գլխու վրա պիտի պահե երդիքը, հըմը երդիքն ել պիտի արդիլե, որ վոնչ թե մեննակ անձրևը չկըվի տունը, այլ ոտար աչքը նես չաչե:

— Ճշմարիտ ե, Ցերանոս ջան,—հաստատեց ուստան և դարձավ դեպի մորը՝ հավանության ակնկալությամբ:

Մայրը ժպտաց և գլխով համաձայնության նշան արավ:

Ցերանոսը կորուկ դարձավ դեպի Հեղնարը, գինին մոտեցրեց իր շրթունքներին և ասաց.

— կենացդ, բալի՛...

Մի ուժեղ ճիչ խռովեց սեղանի խաղաղությունը: Ուստան նետվեց դեպի կինը, Ցերանոսը վար դրեց չղատարկված բաժակը, իսկ ուստայի մայրը թափահեց իջյավ վար, չփոթված կերպով վոտքը շոշափեց հատակի վրա՝ փնտրեց բարուքները, հագավ և նույնպես մոտեցավ Հեղնարին: Ցերեխան կանգնել եր մոր մոտ և զարմացած նայում եր:

— Անհանգիստ մի եղնի, Ցերանոս,—դիմեց ուստա Մկրտիչը նրան:—կանցնի: Ես մե ամիսմ ե, որ Հեղնարս եսպես ե.—մեկ-մեկ կճչա ու գուլյը կը քցե: Վախեցած կեղնի: Նստի, յես հիմի կուգամ...

Նա չափազանց մեղմ ու տիրոյ բռնեց իր կնոջ ուսերից, վեր բարձրացրեց նրան ու տարավ: Դռան մոտից, նա յետ նայեց և դիմեց մորը, վորն առանց այն էլ, դնում եր նրանց յետևից:

— Աբի, մայրիկ, վախը բռնե...

... Դատարկված սենյակում մենակ նստած, Ցերանոսը նորից լսեց ննջասենյակի դռան ձայնը, վորից հետո ամեն ինչ լռեց: Կատուն անչշուկ անցավ հատակին փռված գորգի վրայով, դնաց նստեց նրա մի անկյունում և աչքերը կիսախուփ՝ սկսեց մտածել...

Ցերը ուստա Մկրտիչը նորից ներս մտավ, Ցերանոսն արդեն չափխան ծածկել եր:

— Ո՞ւր ախպեր:

— Երթամ, ուստա ջան: Համ ուշ ե, համ ել քուչրիկս...

Ուստան չպնդեց: Ցերը հասան դրսի դռան մոտ, նա բռնեց բոստանչու ձեռքը.

— Ներող կեղնիս, Ցերանոս ախպեր, պատահմունք ե: Մե ուրիշ անգամըմ ավելի ուրախ բարի գիշեր կանենք փրար:

Հեռվում, Զորի Բողազի բոլորովին անլույս մի անկյունում, մի շուն հաչում եր տխուր, խորը և միալար: Թվում եր, թե դա արձագանք ե, և վոչ իսկական հաչոց...

Ցերանոսը դնաց:

Առավոտյան, Ցերանոսին գտան իր հոլիկի դռան առջև, թախտի վրա պառկած, դանակը կրծքի մեջ: Ջրևական և բժշկական քննությունն այդ դեպքն արձանագրեց իրրև անհայտ պատճառներից դրդված ինքնասպանություն:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

1

Իբրահիմի գայֆախանան սովորականի պես բազմամարդ եր և սովորականի պես լուռ: Ովքեր հիվանդ եյին և չուկա չեյին գնացել, ովքեր ծեր եյին և չուկա չեյին գնացել, ովքեր այս կամ այն պատճառով չեյին քացել իրենց արհեստանոցներն ու խանութները և տանն եյին՝ իրենց ամբողջ ցերեկն անցկացնում եյին գայֆախանայում: Ընդհանուր լռության մեջ լսվում եյին մխայն նարդիների գառերի շխկոցները և լվացվող բաժակների ձայնը: Իբրահիմը կանգնել եր դռան յետևում, իսկ դռների վրա շարված եյին վեց-յոթ նարդիլե՝ տարբեր չափի ու ձևի: Կողքի պատերից մեկի վրա խփված եր շահ-աբբասի կոչվող չատ հին և չատ թանդ մի դորդ, իսկ նրա դիմաց խփված եր խոբասանի կոչվող չատ նուրբ և չատ ընտիր մի դորդ: Դիմացի պատի վրա, դռների յետևում, կախված եյին պղնձե ղրահներ և պողպատե թրեր, վորոնցով, հանուն

խալամի, կռիվ եյին գնացել Իբրահիմի պապերի պապերը և նրանց էլ պապերը: Դախլի մի ծայրում, փաթաթված դրված եյին յերկու նամպղլըղ փոքրիկ դրդեր և չարված եյին նամպղի մի քանի կոնքեր: Դխմացի պատը խանութի առջևապատի նման ամբողջովին ապակուց եր և դուրկ եր վորևե զարդարանքից, բայց այնտեղ, դռան վերևում, կախված եյին դաֆ, թառ և քյամանչա: Դաֆը կախված եր մաշկով դեպի պատը: Յերբ ներս մտնող վորևե մեկը դռանն ամուր վրա յեր գնում, նրա փուլերն որորվում եյին և հաղիվ լսելի զնգզնգում: Վերջին անգամ յե՞րբ եյին նվագել յեսոժըշտական այդ գործիքները՝ վոչ վոք չգիտեր: Հունական, հարկական և թուրքական դառւլ-դուռնան միակ տիրապետող գործիքն եր Գյումրիում, վորը և, դուրս եր մղել պարսկական թառ-քյամանչան: Ուրբաթ յերեկոներն Իբրահիմն ավելի ուշ եր փակում իր զայֆախանան, ուր, հատկապես այդ որերի համար հրավիրված դառւլ-դուռնայի խումբը նվագում եր Գյումրու հռչակավոր յեղանակները: Խմիչք՝ իհարկե չկար, և մարդիկ լսում եյին լուրջ ու մտասևեռ... Ծուրաքանչյուր րոպե ներս եյին մտնում նորանոր մարդիկ: Իսկ այժմ, սովորական ցերեկով, ժամանակն անցնում եր և վոչ վոք չեր գալիս: Յեվ յերբ կեսորն ավելի բորբոքվեց ու փողոցում դխմացի պատը վողողվեց ամենապայծառ լույսով՝ դուռը բացվեց և սպասված թարմ հաճախորդի փոխարեն ներս մտավ Մոլլան: Նա չտապ պատասխանեց բոլոր բարևներին, արագ գնաց դեպի խորքը և նստեց անկյունի դատարկ սեղաններից մեկի մոտ: Նա մոռացավ դռան մոտ հանել իր բաբուչները, վորոնք հատակի գորգի վրա թողեցին փոչու նկատելի

հետքեր: Այդ նշանակում եր, վոր Մոլլան հուզված եր անսովոր հուզումով, վորպեսին չեր պատահել նրա հետ բազմաթիվ տարիներ...

Մասերը՝ դեղին վոտամաններ են՝ իրենց գույնով ու մաշկով կխարոնի կեղևից վոչնչով չտարբերվող: Նրանք այնքան պիրկ են հագնվում վոտքերի վրա և այնքան նման են վոտքերի, վոր հեռվից թվում է, թե մարդը նստել է բորիկ, թաթերը բաց: Իսկ բաբուչները՝ լոկ ներբաններ են, վորոնց յերեսները բաղկացած են մեկ քթերի փոքրիկ կաշիներից՝ նույնպես դեղին: Այնքան փոքր է լինում քթի կաշին, վոր վոտքի մատները հաղիվ են տեղավորում այնտեղ՝ մինչև իրենց արմատները: Անվարժ մարդուն տարորինակ է թվում, թե ի՞նչպես է լինում, վոր քայլելիս վոտքը դուրս չի պրծնում բաբուճի միջից: Ծուրաքանչյուր քայլի վրա, բաբուճների ներբանները չրմփալով կըպչում են մեկ մի կրունկին, մեկ մյուս: Այդ հավիտենական մանրիկ ապտակներից մասերի կրունկները մաշվում են և գունատվում: Այժմ նույնպես, յերբ Մոլլան վեր կացավ նստած տեղից և հուզված քայլեց, բաբուճներն սկսեցին իրենց ապտակները: Իբրահիմը մոտեցավ մոլլային:

— Մե տեսակմ ես, Մոլլա:

Թեև ամառ եր, բայց Մոլլան իր ուսերի վրա կրում եր քիրմանշահի մի ընծիր շալ: Նա կանդ առավ, ձգնջ շալի ծայրը, բայց վոչինչ չասաց: Բարձրահասակ ու նիհար՝ նա նայեց վար, դեպի Իբրահիմի հարցական աչքերը:

— Հը՞,—պնդեց դայֆաչին:

— Մե չայըմ բե,—ասաց Մոլլան և նորից վերա-

գարձավ էր տեղը։ Իբրահիմը լցրեց թեյը և իր ձեռքով տարավ։ Ընայած այն բանին, որ նա հետաքրքրվում էր մոլլայի անհանգստությամբ և չտապում էր վորևե բան իմանալ, բայց դարձյալ չմոռացավ թեյը լցնել իրեն հատուկ վարպետությամբ.— նախ լցրեց ջուրը բաժակի կիսից մի քիչ ավելի, ապա լցրեց գույնը՝ ամբան ճարտար, վոր նա մնաց ջրի յերեսին՝ առանց խառնվելու նրա հետ։

— Նստի,—չչնչաց մոլլան, յերբ Իբրահիմը բաժակը դրեց նրա սեղանին և ձեռացրեց, թե ուղում է հեռանալ։ Նստի... Նստի ու լսե։ Են վո՞վ է ենտեղ.— հաչի ֆյարի՞մն է։ Հաչի՛ ֆյարիմ...

Մի սպիտակամաղ, առույդ ծերունի նույնպես մոտեցավ մոլլայի սեղանին և նստեց։

— Հարիբեն...

Մոլլան մի վայրկյան ընդմիջում տվեց և նայեց սեղանակիցներին։ Նրանք ծայր աստիճան լարվեցին։

— Հարիբեն սիրական ունի...

— Ի՞նչ...—բացականչեց հաջին։

— Սո՛ւս...—զգուշացրեց մոլլան, բայց արդեն մի քանի սեղանների վրա ընդհատվեցին զառերի չխկոցները, մի քանի հասակավոր մարդիկ վեր կացան իրենց տեղերից և մոտեցան մոլլային։

— Աֆոուքնեղդ մոտ քաչեք՝ նստեք,—ասաց մոլլան։

— Հարիբեն սիրական ունի,—մռնչաց հաջին, պատասխանելով նոր հավաքվածների հարցական հայացքներին։

— Սիրակա՞ն,— հարցրեց նրանցից մեկը զարմանքով ու հանդիսատ տոնով և սկսեց ծխախոտ փաթաթել։ — Լավ չե։ Մեր անունը կմունդրե։

— Սըպանել է հարկավոր,—վրդովվեց տաքարյուն հաջին։—Սըպանելը քիչ է։ Բնաբուռ նենել է հարկավոր։

— Ամմենից լավն են կեղնի, որ քյարինենք իրար հետ, վերջանա երթա,— վոչ լուրջ կերպով առաջարկեց նույն գործնական մարդը և ծխախոտը վառեց։

— Ուրտից որ եկել է՝ Թող նենեղ ել երթա,—ատամների արանքից բաց Թողեց Իբրահիմը։—Մենք մեր ձեռքերն արունքի մեջ չենք թաթխե։

Հանկարծ, համարյա միանդամից, բոլորն սկսեցին մտածել միևնույն նյութի մասին։—Իսկ ո՞վ է վայելում այդ դեղեցկուհուն, վորի աչքերի մասին հրաշքներ են պատմում... Իրենց թաղամասի վո՞ր տղամարդն է վիճակվել այդ յերջանկությունը։ Թե՛ գուցե վոչ իրենց թաղամասի... Ցավ հանկարծ, համարյա միանդամից, բոլորը դիմեցին մոլլային.

— Իսկ վո՞վ է սիրականը...

Մոլլան սառած թեյը մի կողմ հրեց, թաղրեհը սեղանի վրա դրեց և սկսեց խաղալ նրա հատերի հետ։ Մի քիչ հետո գլուխը վեր առավ և հայտնեց.

— Հարիբեյի սիրականը...

Մարդիկ այնպես նայեցին, վոր կարծես նրանց աչքերն ուղում եյին կես ճանապարհին բռնել մոլլայի խոսքերը և տեղնուտեղը լսիել։

— Հարիբեյի սիրականը հայ է...

Աննկարագրելի աղմուկ ու գոռոց բարձրացավ։ Ցուրաքանչյուրն այնպես զգաց, թե կացնի սուր բերա-

նով խփեցին իր գլխին: Ցուրաքանչյուրն այնպես ղադց, թե Հարիրային խլեցին իրենից:

— Կսըպանենք՝ մարդարեյի միրուքը վկա... Վո՞վ իրավունք ունի մեր ողուչադին:

— Կսըպանենք՝ մարդարեյի բայրաղը վկա...Վո՞վ իրավունք ունի մեր մալին:

— Ամմեն դեղի ոսկոռն իրան չանը պիտի հասնի... Վո՞վ իրավունք ունի մեր ոսկոռին...

Այդ խոսքերից հետո, փրփրակալած զայրույթը քարացավ մի րոպե, ապա գլորվեց դեպի հակառակ կողմը,— դեպի Թրքուհին, վորն այնքան սքանչելի յեր և անմատչելի...

— Գառի պես կմորթենք... Ի՞նչըղ թե՝ հայի տղի հետ...

— Կչոքեցնենք իրան մեղքի դռան առաջը՝ ճիտը կկտրենք: Հայ տղի հե՞տ...

— Մատաղ կենենք չարխաթին: Քրիստոնի հե՞տ...

Ընդհանուր աղմուկի մեջ Իբրահիմը խոսեց հանդարտ ու կամացուկ, ուստի և նրա ձայնը լսելի դարձավ բոլորին.

— Ձեմ կրնա ավատա... Վո՞ր հայն եդբան նամուսըղ կեղնի: Ախպոր պես հալալ կապրեյինք իրար հետ, իրար չոռ չեյինք ըսե, հըմը ենոնք մեր աղջկա՞ն...

Աղմուկն լջավ: Մոլլան նորից հաստատեց իր խոսքերի ճշմարիտ լինելը:

— Սըսպանելը լավ չե,—չարունակեց Իբրահիմը:— Ուրտից որ եկել ե, թող ենտեղ ել երթա: Մեղի եղ տեսակ թուրք հարկավոր չե: Իսկ տղի դործը մենք կուտանք իրանց աղսախալ մարդոց, թող ենոնք թքեն ճնոր երեսին... Ի՞նչ կըսես, մոլլա...

Մոլլան ափի մեջ հավաքեց իր ցանցառ, կարճ մրուքը և սկսեց մտածել:

— Ըսը ի՞նչըղ իմացար, մոլլա,— հարցրեց հաջին:

— Սաֆարի երեխեքն եյին տեսե հայի տղին՝ Հաքիբեյի տունը մտնելու վախտը...

Տիրեց խորը լռություն: Ցնվ այդ լռության մեջ հաղիվ յերեք վայրկյան անցավ, յերբ դործնական մարդը ծխափողը թխկթխկացնելով սեղանի ծայրին, ծխախոտի մնացորդը մաքրեց նրա միջից և առաջարկեց.

— Մե բանըմ մտածենք: Իրիկունը մերոնք բաղչից կուդան՝ Հարիբեյին կսըպանեն: Կամ մենք սըպանենք, կամ եդոր առաջն առնինք...

Նա այնքան դործնական տոնով եր խոսում, վոր թվում եր, թե կատակ է անում: Սակայն նրա խոսքերը բոլորի ուշադրությունը թեքեցին դեպի նշած կողմը: Ու մինչդեռ նրանք մտածում եյին, նա նորից առաջարկեց.

— Աղչկան վռնդենք, իսկ տղին ծեծենք: Իբրահիմ, հաջի Ֆյարիմի գավաղանն եստեղ բե:

— Տղին ծեծենք...— համաձայնվեցին մի քանիսը.—Հըմը աղչկան...

Նրանց սրտերը՝ ովքեր դեռ ծեր չեյին, սեղմվեցին խանդից և այն մտքից, վոր մի անծանոթ դեղեցկուհի յեկավ լրենց թաղը, սեր արավ բոլորովին կողմնակի մի մարդու հետ և այժմ պետք է հեռանա՝ թեկուզ և վռնդվելու ձևով... Ավելի լավ չե՞, վոր նա ընդմիշտ մնա իրենց մոտ, թեկուզ և գերեղմանի մեջ... Ափսե

դանակը, վրնջալ չհագեցած և այլևս յերբեք չհագեցող կարոտից, իսկ գիշերը, անցնելով նրա անչիրիմ հողաթմբի մոտից, դնդակի նման ծանր մի քանի կաթիլ արցունքներ կաթեցնել նրա վրա...

Մեկը տեսել եր նրա աչքերը, մյուսը՝ ճակատը, յերրորդը՝ նուրբ ձեռքը: Ցերեկն քամին բարձրացրել եր նրա չաղրայի և չրջազգեստի փեշը, յերբեմն քամին փչել եր յետևից և չաղրան ու չրջազգեստն ամուր փակցնելով նրա մարմնին՝ քանդակել եր նրա գնդեղիկ մարմնաձևերը... Իսկ հետո, սուրճի մանրիկ գավաթների վրա զլուխները կախած, նրանք յերկար խոսել եյին իրար հետ, նրանք յերկար պատմել եյին ու նկարագրել, և ահա, բոլորի ուղեղներում, ամբողջացել եր Հարիրան իր սպիտակ ճակատով ու սև աչքերով, բարակ ձևներով ու լիք սրունքներով, մոտիկ, բայց անմատչելի...

— Շարիաթը...

Բոլորն սթափվեցին: Բոլորը նայեցին մոլլային:

— Շարիաթը չատ դեչ բան կպահանջե, հավատացյալներ... Հըմը յես ձեղնեն եղ դեչը չեմ ուզե: Նիկնք կակուղսիրտ եղնինք ու Թող ալլահն ընձի պատճե իմ բարի խոսքերիս հըմար... Աղչկան վռնդենք, իսկ տղին ձեձենք... Ցես իմ մենծ կնկաս ետք կղրկեմ Հարիրեյի քովը...

Հաջին և մյուս բոլոր հասակավորները զլուխներն որօրեցին դրական կերպով՝ Թե իրենց փոխարեն, Թե նրանց՝ ովքեր չուկայումն եյին, և Թե բոլորի...

Ցերեկվա պայծառ անդորրը տարածվել է բոստանների վրա: Ամեն ինչ անշարժ քարացել է այնտեղ, բայց դա չոքի Թմրություն չե, այլ միջօրեյի խաղաղություն: Արևը լճացել է բոստանների վրա, դաշտերի վրա՝ հորիզոնից հորիզոն: Ոչորը, մուգ պուտերով, յերևում են առանձին ծառախմբեր մարդերի ափերին կամ հոլիկների մոտ: Շոքն ու հովն ապրում են կողք-կողքի: Մի զովացնող քամի հանդիսավոր ու ծանր խշշացնում է սաղարթները, վորոնք հովհարում են իրենց ստվերում հանգստացող մարդուն կամ կենդանուն:

Հոլիկի մոտ, ծառերի տակով, սահում է վճիտ ջրի արյունը, սահում է արագ, բայց բոլորովին լուռ: Ցերեկն միայն, ջրի մի կոհակ բարձրանալով մի վորբիկ քարի վրա և իջնելով, ծկլթում է կամացուկ: Կարծես աղջիկ մոտավ ջուրը լողանալու, և նրա սառնությունից վախեցած՝ սրսիաց:Վերևում, ուռենիների ճյուղերի մեջ, վորոնց նայելիս մարդու աչքերը չաղվում են արևի ամենամանր պատառների և ամենամանր տերևների խառնուրդից՝ համատարած կերպով լցված և պիծակների համարյա անըմբռնելի, նուրբ պղպջյը: Նրանք աննկատելի յեն և պտտվում են վրանց նման աննկատելի ծաղիկների չուրջը: Նրանց պղպջի հետ խառը՝ դեպի կանաչ գետինն է իջնում այդ անհամար ծաղիկների սքանչելի բույրը՝ նույնքան անըմբռնելի, նույնքան նուրբ...

Հեռում, ուր վերջանում են բոստանները և սար վոքրիկ կույտերով թափված են պպղացող ավազու հատրատանքով լի աղբակույտեր՝ միալար, կանոնավոր

ընդմիջումներով և մտածկոտ՝ լսվում է հոպոպի ձայնը.— հո–պո... Լռություն՝ խորը և պայծառ... հո–պո... Լռություն՝ ջերմ ու խաղաղ... հո–պո... Ցերեկ... Անշարժություն... Մարդիկ կարող են ժամերով պառկել մեջքի վրա,— ուռիների տակ, արիի մոտ,— ղող սաղարթների թարմությունը, ճյուղերից իջնող քաղցր և դյահանող բույրը, սլիծակների պըզտզոցը, ջրի հանկարծակի ծկլթոցը և լսել արևոտ հեռվից յեկող հանդիստ, խաղաղ և անմարմին ձայնը.— հո–պո... Հետո հաճելի լռություն և հետո նորից.— հո–պո... Լռությունը չի խախտվում այդ ձայնից, խաղաղությունը չի վրդովվում, այլ նրա յուրաքանչյուր կրկնությունից հետո դառնում է ավելի խորը, ավելի լայնատարած...

Ցերեկն հասում, վորևե ծառախմբի տակով կամ ծառուղով՝ անցնում է մի մարդ, բահն ուսին և վոտաբոբիկ: Հո–պո,— լսվում և նույն րոպեին և մարդը նույնպես թվում և անմարմին ու խաղաղ պատկեր... Ցերեկն, զբոսնելու դուրս յեկած յերկու աղջիկները մտնում են բոստաններից մեկը և քայլում են ծառերի սալերներով: Նրանք հագած են լինում աննկատելի վարդագույն յերիզներով սպիտակ չրջազգեստներ, սպիտակ գուլպաներ և սպիտակ գլխարկներ: Շրջազգեստները խշշում են և նրանցից բուրում է մատաղահասակ աղջիկների յուրահատուկ բույրը,— անմեղության: Իրենց անբիծ հագուստներով նրանք նման են ընկնում խնձորենու ծաղկի,— սպիտակ և աննկատելի վարդագույն: Նրանք անցնում են ուրախ ծիծաղներով ու կանչերով, միայն յերկուսով լցնելով ամբողջ լռությունը: Իսկ հետո, հեռու սալերի մեջ կորչում է

երանց ճռվողյունը, նորից վրա յե հասնում համատարած լռությունը, նորից լսվում է՝ հո–պո, և աղջիկները նույնպես թվում են անմարմին պատկեր...

Հեռու պատի վրա բացվում է Ցերանոսի բոստանի դուռը և ներս է մտնում ուստա Մկրտիչը: Նա էլ է թվում անմարմին յերաղ, վորը գոյություն է ունեցել յերբևե, ապրել է և աշխատել, ապրել է և մեռել, իր հետ տարել է նաև իր աշխարհը, բայց այժմ նորից է վերակենդանացել, այն էլ միայն յերեվութականորեն, այն էլ միայն մի վայրկյանվ, և հենց այդ պատճառով էլ հանդիսավոր և տառնապատիկ անգամ ավելի:

3

Ուստա Մկրտիչը մոտեցավ հոլիկին: Հեռու մարգերից մեկում, Ցերանոսի միջնեկ յեղբայր Գեղամը բահը խրեց հողի մեջ և չոտալեց դեպի նա: Հոլիկի յետևից նախ նայեց, ապա դուրս յեկավ Ցերանոսի կինը, վորն այնտեղ զբաղված եր կանաչեղենի զաստաններ կապելով:

— Բարև, քոր:

— Բարև, ախպեր:

Ուստան Ցերանոսի ընտանիքի հետ ծանոթացել եր զեռ բոստանչու թաղման որը, ուստի և, նայելով աջ ու ձախ, հարցրեց.

— Ըսկը Մանանս ո՞ւր է...

— Բարև, ուստա ջան,— ասաց Գեղամը՝ առել հասնելով:

— Աստու բարին, ողուլ, Մանանս ո՞ւր է:

— Ֆնած է, ախպեր,— ասաց կինը և գլխով ակնարկեց դեպի արևի այն մասը, վորի յեզերքներին

չարվել էին աղաչաթախիծ ուռիները: Ուստան չատ-պես այնտեղ: Կինը և Գեղամը հետևեցին նրան:

Ուստան աչքերով փնտրեց, նկատեց և քայլերն ուղղեց դեպի աղբիկը: Նա պառկել էր կանաչի վրա՝ մանկական անհուսթությամբ բաց անելով իր փոքրիկ, կլոր սրունքները: Կարճ չրջազգեստը վեր էր քաշվել և նրա ծնկները թաղվել էին խիտ կերսոլ բուսած ապա-տակ, մանր ծաղիկների մեջ: Նա իր գլուխը դրել էր մի թևի վրա, մյուս ձեռքը դրել էր կրծքին՝ կարծես պաշտպանելով խստուտ անող չարաճճի լինչ վոր մե-կից: Նրա սև մազերն ամբողջապես վերջանում էին խոչոր, կլորիկ խոպոպներով: Նրա մազերին կապված էր մի լայն, պայծառ-կանաչ ժապավեն:

Ուստան նայեց նրան սիրով ու գութդուրանքով և ուզում էր կռանալ դեպի նա, յերբ իր ուսի յետևում լսեց կնոջ հեծկլտոցը: Արագ յետ չրջվեց:

— Ի՞նչ ես...

— Վորբ ու անտեր մնաց...

— Ասպած ողորմած է, քուր: Սաղ մնան հոգով-պերները, սաղ մնաս դուն: Աչքերդ սրբե:

— Մի լա, հարսիանում չան,— գութդուրեց Գե-ղամը խելոք ու մտածկոտ աչքերով:— Ախպերս եղ քանը չալիսի ևներ, հըմը... Մի լա...

Ուստա Մկրտիչը թևքվեց դեպի դեսին, վերցրեց այնտեղից աղբիկան, գրկեց, վերադարձավ դեպի հո-լիկ: Նատեց պատի տակ գրված թախտի վրա, ուշադիր նայեց դեռ քնած յերեխային և համբուրեց նրա ճա-կատը...

— Վեցը թամամ՞վ:

— Ջմեռը թամամավ, ախպեր:

— Մե խորուրդմ եմ երե, քուր,— ասաց ուստան՝ գրկից բաց չթողնելով աղբիկան:— Դուն ել լավ լսե՛ Գեղամ, հիմի դուն ես տան գլխավորը:

Կինը նատեց: Գեղամը չարունակեց պատկառանքով կանգնած մնալ ուստայի առջև:

Ուստան մտածեց: Հետո, յերբ ուզում էր սկսել, հանկարծ փոխեց մտադրությունը, նորից համբուրեց յերեխային, հանձնեց մորը և ասաց.

— Ծաղիկի պես պահե հարսիս, քուր...

Կինը չառաջունեց, արագ նայեց յերեխային, ապա խանդաղատանքով և ամուր-ամուր համբուրեց: Ցերե-խան արթնացավ, մազերը յետ տարավ ճակատից, ժպտաց և փորձեց հասկանալ, թե վորտեղ է ինքը:

— Գեղա՛մ,— խիստ ձայնով դիմեց ուստան նը-րան.— աղբկանս մազին դիպնող չեղնի: Գլուխդ տու,— յես ել իմ գլուխս կուտամ,— հըմը ծաղիկ-թող դալար մնա...

Գեղամը մեծավարի մտածեց և ապա գլուխն ի նը-շան հնազանդության խոնարհելով, ասաց.

— Թող քու կամքդ եղնի, ուստա ջան: Դուն են տեսակ մենծ պատիվ կենես մեզի, որ ել մենք ի՞նչ կրնանք ըսե:

— Ի՞նչ...

Ուստան հարցական նայեց նրան:

— Տեղրջս խոսքն իմ որենքս է, ախպեր:

— Սրտինդ ըսա, քուր: Ռուան ել է մեր որենքը: Հըմը մեր սրտին որ հարցնե՞ս...

— Խոսք չկա բերանս, ախպեր, որ սրտիս ուրա-խությունն ըսեմ: Դուն իմ վորբիս հեր դառնալ կու-

գես, դուն իմ անբախտիս բախտ տալ կուզես, դուն իմ Մանանիս...

Ցեղ չկարողանալով դպչել վոչ ուրախությունը, վոչ լացը, նա նորից համբուրեց յերեխային: Ցերեխան լսելով իր անունը, նույնպես ժպտաց և մոր գրկից վար ցատկելով՝ փախավ: Ըստ յերեվույթին նա ամաչեց, վոր յերեք հասակավոր մարդիկ զբաղված են իր նման մի փոքրիկ թռչնիկով:

Ուստան պայծառ աչքերով նայեց նրա յետևից, ապա ժպտաց իր բեխերի մեջ և գրպանից հանելով կես հին ողի, դիմեց Գեղամին.

— Բաժակ բե:

Բայց և իսկույն ուրիշ վորոշում ընդունեց.

— Կայնի, բաժակ հարկավոր չե: Գինա երկու խմար քաղե...

Գեղամն արագ գնաց–մտավ վարունգի մարդը, քաղեց յերկու հատ և վերադարձավ:

— Դանակ էլ բե:

Ցերբ Գեղամը մտավ հոլիկ, ուստայի դեմքը մի վայրկյան խիստ արտահայտություն ընդունեց և նա գլխեց Ցերանոսի կնոջը.

— Ջուր, լավ գիտնաս, որ մենք պատիվ կենեմ ձեզի: Իրան սըպանող մարդու ընտանիքի հետ բարեկամություն ննելն որինավոր բան չե: Որ ուրիշներն որինակ առնին՝ յես եմ մեղավորը...

Գեղամը դանակը բերեց և տվեց ուստային: Նույն րոպեին կինը ճչաց, Գեղամը չփոթվեց և ձեռքը մեկնեց դեպի ուստան.

— Տո՛ւ դանակը... Ուրիշը բերեմ... Ջնկատեցի, որ ես են դանակն է...

Ուստան նրա ձեռքը յետ ծալեց.

— Մի սխալվի, տղուլ: Ասպած ինքն է քեզի ըսե, որ ես դանակը բերես: Եսիկ չար դանակ եր, հըմմ իրան չարությունը դարտըկեց: Հիմի եսոր մեջը մեննակ քարին է մնացե: Ըսել է՝ մեղի բախտավորություն ալիտի բերե...

Նա կարուկ չարժումով վարունգը յերկու մաս արեց, փորեց միջուկը և դարձրեց բաժակներ: Վերցրեց մյուս վարունգը, մի բաժակ էլ պատրաստեց նրանից: Ողին լցրեց դրանց մեջ, մեկն ինքը վերցրեց, մյուսները տվեց կնոջն ու Գեղամին:

— Մեր ուխտի կենացը...Լուս իջնի Ցերանոսի մեղավոր հոգու վրա... Տա ասպած, որ աչխըրքիս երեսին հեչ մե մարդըմ մեր ուխտը քանդել չկըրնըա: Բարով մենձընան Մանանս ու Գալուստս, իրար հասնին, ուրախ եղնին, բախտավոր ապրին...

Ուստա Մկրտիչը մի ումպով դատարկեց ողին և վարունգը կերավ: Գեղամը նույնն արավ: Կինը խմեց մի քիչ և արցունքներն աչքերից գլորելով, մնացած ողին թափեց դանակի վրա.

— Դուն էլ խմե, անգութ, աղջկադ նշանն է...

4

Ուստա Մկրտիչը կղմթեց բարդիների չարքի մոտ խաղ անող Ցերանոսի փոքր յեղբոր թուչը և դարբասի դռնակից դուրս յելավ դեպի ճանապարհը: Հավիտենը վոտքը չեմից դուրս դրել, յերբ ցնցվեց և կպավ պատին:

— Ցա՛... Ես ի՞նչ եր...

Նրա մոտով, առանց նրան նկատելու, արագա-

քայլ անցավ Թրքուհին: Ուստային թվաց, թե նա հասել եր իր հեղնարի կիսակոշիկները:

— Նահլաթ քեզի, սատանա, խո հարբած չե՞մ...

Նա ձեռքը չմեկ ճակատին: Լսել եր, որ յերբ-որ չար վոգին պեղեցիկ Թրքուհու կերպարանք և առնում և իր սիրով խելագարեցնում է մարդկանց: Ցերբեք չեր հավատացել: Միայն Ցերանոսի մահից հետո, մի քիչ կասկածել եր, որ նրան հանդիպող կինը նույնպես, չար վոգի յեր յեղել: Այժմ, այդ նոր դեպքը դալիս եր իրեն համոզելու դրանում: Ջե՞ որ չատ հաճախ, նույն չար վոգին, ջահել կանանց տնդունելրից դողանում և նրանց հագուստները և հագնում և... Բայց չե՞ որ դա հնքյաթ է, առասպել, սնոտի մարդոց ոսմունք...

— Ցա՛...— կրկնեց ուստան:— Կրունկները, կարվածքը... Թե՞ աչքերիս խաբին: Ես ի՞նչ եր...

Թրքուհին, որ չարունակում եր դնալ նույն արագ քայլերով՝ անհետացավ ճանապարհի վոլորի յետեվում: Ուստան սթափվեց, համոզվեց, որ դա տեսիլք եր, որը դերբնական ձևով անհետացավ: Սակայն անմիջապես մտածեց, որ նա պարզապես կարող եր ծածկված լինել պատի յետևում: Արագ առաջ գնաց՝ տուգելու համար: Մի քանի քայլից հետո Թրքուհին նորից յերևաց: Նա խուլ կերպով չաղրայի մեջ վառթաթված՝ չարունակում եր ճանապարհը: Այս անգամ ուստային թվաց, թե նա կեղծում եր նաև իր կնոջ քայլվածքը: Մտածեց չտապել, մոտենալ նրան և դիտել մոտիկից, բայց հետո մտադրությունը փոխեց: Չոգին կարող եր նկատել իրեն և խուսափել: Ուստի և, փոխանակ մոտենալու՝ ուստան սկսեց հետևել հեռվից:

Հաճախ, չե, վոր մարդ ստիք և ունենում վոգու հանդիպել: Արժե հետևել և տեսնել, թե նա ինչ նպատակով և հագել իր կնոջ վոտնամանները...

Հանկարծ ուստա Մկրտիչը հիշեց, վոր իր կնոջ այդ կիսակոշիկներից մեկի,— ձախի,— տակը յերկու տեղով ճաքել եր և ուստան պատվիրել եր նրան, վոր նա այլևս դեն նետի այդ վոտնամանները: Նա կուգար, նայեց Թրքուհու վոտնահետքերին: Ձախ ներբանի տափակացրած փոշու վրա, հագիվ նկատելի յերևում եյին չայնքից դնացող յերկու խաղեր.

— Տեր աստված,— ասաց ուստան, խաչակնքեց և չափխան ավելի թեքեց դեպի ծոծրակը:—Ահան աչքովս կտեսնիմ հրաշքը, հլմը եյի չեմ ավատա... Ձեղնի՞ ես բանը հրաշք չե...

5

Թուրքական Թաղամասի աղբյուրի ուժանկյունի ճիշտ հիմքին չենքը ծառերի տակ կանգնած՝ ամբողջապես գտնվում եր նրանց սակերում: Այդ նշանակում եր, վոր ցերեկը հասել եր իր գագաթնակետին: Արևի լուսից աչխարհն այնքան պայծառ եր նրա չուրջը, վոր նա իր վրա կախված ծառերով ու սակերով՝ թվում եր չափից ավելի մուգ ու թարմ: Ջուրը, վոր անձայն ու անչարժ վորագծով իջնում եր խողովակից գուռի մեջ՝ թվում եր մի արծաթյա վայրկյան վամար՝ նետված այս աչխարհից դեպի հողը: Թեև չատ աղջկներ ու կանայք եյին հավաքվել նրա մոտ, բայց վոչ վոք դեռ ջուր չեր լցնում, վորկ նա, ով լցրել եր՝ դեռ չեր հեռացում: Բոլորն ղբաղված եյին ըստ յերե-

վուլթին ծայր աստիճան հետաքրքիր մի խոսակցությամբ:

— Սաֆարի երեխեքը... Քանդած քուչի քովը... Հետը թուրքերեն էլին խոսե՝ չեր հասկըցե... Ըսել է՝ փափախը դրել եր խաբելու հըմար,—լավում էլին մխաժամանակ մի քանի խմբերից:

— Փափա՞խ,—հարցրեց մեկը:—Սո՞վ փափախ...

— Սև փափախ:

— Գռուզ...

— Գռուզ:

— Ուրեմն չես ել եմ տեսե ենոր, կնկրտիք: Գյոզալ, ջանել տղա չեր: Մե անդամըմ եմ տեսե:

Մի կրկն, վոր մտածկոտ խաղում եր իր մատանիների հետ, հանկարծ կարմրեց և դիմեց խոսողներից մեկին.

— Դուք ե՞ն կսեք, որ աչքեր ունի՝ լինչ որ սև չտնղուն:

— Են:

— Տեսել եմ: Մե անդամըմ մոտեցավ՝ ջուր ուզեց: Երեսս ծածկի՝ վախա: Ել չիմացա, թե ուր գնաց:

— Ո՞ւր պիտի երթար: Իհարկե են լրբի քովը,—ասաց մի աղջիկ՝ խոչոր աչքերը բարկությամբ վոլրելով դեպի փողոցի մի ծայրը,—դեպի Հարիբայի տան ուղղությունը:

— Սեր կենեն,—ատելությամբ չրթունքները կըծկելով մրմնջաց մի կին:—Լիրբը կպագե ջաելի աչքերը, ծոցը կաոնե ջաելին...

Նրա աչքերը հանկարծակի արցունքոտվեցին: Նա լռեց և ծածկվեց չադրայով:

— Ընչի՞ սեր չի եներ,—դառը ժպտաց մի ուրիշը:—Հարուստ, քեֆլի... Ի՞նչն ե պակաս: Ըսը տղե՞ն...

— Տղեն կմեռնի ենոր հըմար: Կա մարդ, որ ջուր կուզե, հըմը դիտես, որ քեղի կուզե: Հըմը ենիկ որ ջուր ուզեց՝ մինչնակ ծարավ եղնելու հըմար եր: Աչքովս տեսա, թե ինչըղ քրտրնել եր լեն ճակատը, թողուտել էլին ալ պռոշներն ու սև բևեռը:

— Իհարկե մմեռնի ենոր հըմար: Ըսը խո չի՞ ծեծե: Եղպես տղեն կծեծե՞... Եղպես տղեն ճաշն ուշացնելու հըմար իսկույան կնկա դլխուն կուտա՞... Լիրբը...

Զարմանալի չերկար թերթերունքների տակ վայելատակում էլին զարմանալի սև աչքերը: Ցերը կանայք առելությամբ չրջում էլին իրենց հայացքներն աջ ու ձախ՝ նրանց սպիտակուցները փաղփաղում էլին մերկացրած չաթաղանների պես: Նրանց դեղնիկ այտերը վառվում էլին չառագույն մի հրով՝ կարծես իրենց վրա ամպրպարծնելով մի մեծ հրդեհի բոցը: Նրանց վրծքերը յեղնում և իջնում էլին վարծես դրսպաված հեծկլտոցից: Իսկ յերբ նրանք խոսում էլին, թվում եր, թե նրանց ձայնը դուրս եր գալիս թախծով ու արցունքով լցված խոր ջրհորից: Ովքեր կանգնել էլին յերեխաները ծածկած՝ ձեռքներից մեկով բռնել էլին ջրամանները, մյուսով՝ վրծքները, իսկ յերեսի վրա քաշված չադրայի յեբիլը պահել էլին աստամների արանքում: Պպզում էլին կուրացնող սպիտակ աստամները, վորոնք չադրայի յեբիլի հետ միասին, կծում, արյունոտելու չափ սեղմում էլին նաև իրենց վարդագույն չրթունքը: Տարօրինակ եր թվում, վոր նրանց

կխաչքյանի մեջ ջուրը հոսում էր նույն լռությամբ ու անչարժությամբ,—կարծես չէր հոսում,—և ս ը քյուրի ճակատին, յերեք հին, բայց կնդապանի լեզուներով դրված ուստա Մկրտչի անունը թվում էր տուն քան խաղաղ ու հավիտենական...

Մոլլայի մեծ կինը, վորն իրավունք յերբեք ինքը չէր գալիս ջրի՝ կանգնել էր առանց ջրամանի, և լուռ լսում էր խոստակոսությունները՝ մերթընդմերթ դիմի դրական չարժումներով հավանություն տալով կանանց ասածներին: Սակայն նա ուշադիր կերպով չէր լսում նրանց և չարունակ նայում էր դեպի փողոցի կողմը: Իսկ յերբ այնտեղ յերևաց Հեղնարը և արագ անցավ՝ մոլլայի մեծ կինն ակնարկեց աղբյուրի մոտ յեղողներին՝ ծպտուն չհանել, և չտապեց նրա յետևից: Աղբյուրի մոտ բոլորը նայեցին իրար:

— Աչես ի՞նչ են մտածե աղամարդիկ,—չհնջաց մեկը:

— Կսըպանեն...—յենթադրեց մյուսը:

— Թող սըպանեն:— Մի ղուրդ աչքեր ատելությամբ կերպով բոցավառվեցին:—Զենք ուղե ենոր՝ մեր թաղի մեջ: Ենիկ չարիաթին հակառակ կապրի: Ընչի պիտի մենանակ ենիկ չարիաթին հակառակ ապրի...

6

Հարիրաթի տան փողոցի ծանկյունում մոլլայի մեծ կինը հասավ Հեղնարին: Կարեց նրա առաջը, յերկու ձեռներով արագ բաց արեց նրա յերեսը:

— Ինարո՛ւս...

Հեղնարը դունատվեց:

— Սիրակա՞ն ունես, քա՛ծ:

— Ունիմ, բաջի, որ քեղնեն պահեմ, Ալլահից ինչըզ պահեմ,—չհնջաց Հեղնարը՝ տեսնելով, վոր անհնար է թագցնելը:

— Ունի՞ս, հա՞...

Թրքուհին կատաղած սեղմեց բռունցքներն ու ատամները, կպմրեց, և կարծես ներսից ստացած մի հարվածից՝ հրվեց դեպի ուստայի կինը:

— Հա՞յ ե...

— Հայ ե, բաջի...

Հեղնարը բռնեց սիրտը, վոր չափազանց անհանգիստ և անկանոն թպրտում էր:

— Լսել ե՝ ստուտ չե՞, հա՞, անառակ... Լա՛վ:

Ցնվ արագ յետ շրջվելով՝ բղավեց.

— Հե՛յ, աղջկինե՛ր, կնկտի՛ք, եսաղ եկեք, մե-մե քար բերեք հետներդ, չուն կա սատկեցընելու, չո՛ւտ...

— Բաջի՛,—սարսափից նվաղած ձայնով թույլ ճչաց Հեղնարը և ձեռքը դրեց նրա բերանին.—Բաջի՛, ասո՛ւս կեցի, վոտքերդ պագեմ, յես հայ եմ...

— Ի՞նչ...

Մոլլայի մեծ կինը յետ-յետ գնաց և ձեռքերը յետևը տանելով՝ չվաճ մատներով պատը շոշափեց՝ չընկնելու համար:

— Հա՞յ ես...

Բարեբախտաբար աղբյուրը հեռու յեր և վոչ վոք չեր լսել նրա վանչը, բայց Հեղնարն այնպես եր դուրս գալիս, վոր թվում եր, թե պիտի ուշաթափվի: Մոլլայի կինը, վոր սառած աչքերով դեռ անակնթարթ նայում եր նրան, սկսեց չրթունքները շարժել: Ըստ յե-

բևուչքին նա խոսում եր, բայց ոչինչ չեր լսում։ Այդպես անցավ մի քանի վայրկյան, մինչև որ նրա ձայնը զարձավ քսելի։

— Հա՞յ... Ո՛վ մարդարե... Ի՞նչըղ էյլինք նկատե... Հաստատ որ՝ հայ... Շեյթանը քեղի հետ... Թուրքի անունով անառակութո՞ւն կենես... Քեղի ակռեքով կդղենք... Սկռեքով...

Յեվ դանդաղ պոկվելով պատից, քայլեց յետ,— դեպի իրենց տուն կամ դայֆախանա,—ինքն էլ չդիտենալով, թե հատկապես ուր։ Հեղնարը չչմաշի նման, սառած աչքերով նայեց նրա յետևից և իր առաջին մխոքը յեղավ փախչել ու այլևս չվերադառնալ... Նույն վայրկյանին մեծ սոսկումով հիշեց, որ քիչ հետո,—դուցե հենց հիմա,— գալու եր իր սիրելիները և ընկնելու յեր զազազած մարդկանց ձեռքը։ Պետք եր ուրեմն չտապել, ճանապարհին հանդիպել նրան և յետ դարձնել...

Նա նետվեց դեպի ձախ կողմի ավերակ փողոցը։ Ինչպես միշտ, այնտեղ վոչ վոք չկար, բացի Սաֆարի յերեխաներից, վոր պատի տակ նստած, խաղ եյին անում։ Տեսնելով Հեղնարին, նրանցից մեկն անվուշտ վեր կացավ, դանդաղ դնաց մի քիչ տեղ, ապա վազեց։ Յերեխաների աչքերի վատ թաղցրած արտահայտությունից Հեղնարը հասկացավ, վոր նրանք իրեն եյին սպահակում և այն մեկն անշուշտ դնաց մեծերին հաղորդելու իր փախուստի մասին։ Նրա ծնկները ծալվեցին, նա իրեն ղդաց անելանելի թակարդի մեջ և յենթարկվելով անխուսափելիին՝ վերադարձավ դեպի Հաբիբայի

տունը, մտավ ներս և դարբասը կամացուկ ծածկեց... Թվում եր, թե սպասվող խայտառակությունից նա զարձել եր կիսախելագար։

7

Հաղիվ Հեղնարը ծածկել եր դարբասը, յերբ յերեսաց ուստա Մկրտիչը, վորն չտավ մտավ փողոց և չուրջը նայեց։

— Բալի՛...

Մոլլայի մեծ կինը յետ նայեց, ապա կանգ առավ։ Ուստան քրտնած ու փոշոտ, մոտեցավ նրան։

— Բարև, բալի՛...

— Բարև, ուստա Մկրտիչ...

— Մե թուրքիմ կնիկ չանցա՞վ եստեղով...

Թրքուհին մի վայրկյան ձայն չհանեց, ապա չաղրայի անթափանց քողի տակ ժպիտ ձևացնելով, հարցրեց.

— Թուրքի կնիկը քու լինչո՞ւդ է հարկավոր։

Ուստան կարծես նոր միայն սթափվելով իր չտավտունքից և չխոթուբությունից, զգաց տված հարցի տարորինակությունը։

— Հարկավոր է, բալի,—փորձեց պնդել նա։

— Լավ, լինչո՞ւդ է հարկավոր,—կրկնեց Թրքուհին՝ թեթևակի բաց անելով յերեսը։—Դուն՝ հայ, կնիկ՝ թուրք, դուն՝ կնկա, երեխի տեր, կնիկ...

— Այ բալի,—նորից ժպտաց ուստա Մկրտիչը, արդեն տիրապետելով լինքն իրեն.—հայի ու թուրքի մեջ ախպոր ու քուրոջ դործ չի՞ պատահի։

— Կպատահի։

— Ըչտը մե եղպես դործովըմ կհարցնեմ։—Զտեսա՞ր մե թուրքիմ կնկա, կանանչ վոտնամաններով...

Ուստան ծայր աստիճան անհանդիստ՝ ձեռքերը տարավ գոտկի յետևը, ապա հանեց, բթամատով բեխերը չոշափեց և քարացավ ապատղական դիրքով։

— Մտավ իրան տունը... Ես դուռն ե։ Ինքը մեննակ կապրի։ Դուն մեննակ ողուշաղի քովն լինըզդ երթաս, ուստա...

Բանդված վողոջի կողմից յերևաց վոսկեգիրչ Վաղինակի տղա Վարոսը։ Տեսնելով ուստա Մկրտչին, նա կայծակի արագությամբ յետ նետվեց և անհետացավ։ Վոչ ուստան, վոչ Թրքուհին, չտեսան նրան։ Նրան տեսան միայն Սաֆարի յերեխաները, և նորից, այս անդամ բոլորը միասին, վաղ տվեցին մեծերին հայտնելու հայի տղայի մասին։

— Տե որ մեննակ կապրի՝ դուն լինըզ եղ արի հետը, բալի, առաջարկեց ուստան։—Դուն եղ իմ քուրս ես...

Նրանք մոտեցան դռանը։

— Ուստա, ննիկ հայ է,—հայտնեց Թրքուհին։

— Հա՞յ...

Փոխանակ պատասխանելու, մոլլայի մեծ կինը հանկարծակի վոխվեց, արյունը խփեց նրա յերեսին և նա ապառնալի չննջաց։

— Արի աչքովդ տես, ախպեր։ Ինքն անառակությունն կենե, մեր անունը կխայտառակե։ Առամներով կզղենք...

Ուստան արագ քայլերով մտավ ներս։

Տասը տարի անխնամ մնացած պարտիզի վայրի մեղավորությունը տեղի յեր տվել պայծառ պարզությանը։ Այլևս սաղարթները մի ընդհանուր ծածկույթով չեյին ստվերել ու մթագնել հայացքը և մեռած տերևները չեյին փռվել դետնի վրա տասը հայտ չերտերով։ Վարոսը կտրել եր բավական թվով ծառեր, կտրատել եր մնացածների քամահաճ կերպով աճած բազմաթիվ ճյուղերը, մաքրել եր մայթերն ու մարգերը, ցանել եր բազմազան ծաղիկներ՝ բուրեղանավետ ու քնքուշ։ Այժմ պարտեզն իրոք վոր նման եր պայծառ պարտիզի և վոչ թե խավար անտառի։ Արևն առատ դողերով թափվել եր ծառերի միջև, դետնի վրա։ Այժմ նա յեր այնտեղ սիրասլաստողը և վոչ թե ստվերը, վորն առանձին պատառների բաժանված՝ կծկվել եր առանձին ծառերի տակ։ Ստվերները, լինելով քիչ, և արևի լայն յերիզներով չրջանակված՝ այժմ թվում յեյին ավելի մուդ, ավելի դով և ավելի հաճելի։ Ամենուր, վորտեղ արև եր թափվել՝ մեղմաբույր մարգերով ցանված եյին բազմազան ու բազմատեսակ ծաղիկները։ Մարդերի մեջտեղից անցնում եյին կարմիր աղյուսասիրուղ շավիղներ։ Սվաղանի չատրվանը խփում եր ավելի բարձր և նրա կաթիլները նստում եյին տերևների ու ծաղիկների վրա՝ մեծերը մարգարտի պես, իսկ փոքրերն՝ աղամանդի փոշու։

Տեսնելով պարտիզի վողջ քնքշությունը, ուստա Մկրտիչը մի վայրկյան քարացած կանգ առավ, կարծես վախենալով վորևե կոպիտ չարժումով վիրավորել այն։ Ներքին դարբասի մոտից մինչև դուռը նա դեռ

քավելով պատերին և չվստահանալով նեղ մայթերից վտանգը դնել ցած, ուր բուսել էին այնքան մանրիկ և անմեղ խոտեր:

Մտնելով միջանցք, նա նախ բաց արեց յերեք սպիտակ լուսամուտներ ունեցող սենյակի դուռը: Սենյակի խորքի մասը, վորի հատակն առվելի մասից ավելի բարձր եր և մեջտեղում ուներ մի քանի տախտակե աստիճաններ՝ ամբողջապես ծածկված եր մանրանկարված ծանր վարագույրով: Ուստան վարագույրը ձեռքով յետ տարավ և նայեց ներս: Ինչպես սենյակի առվելամասում, այնպես և այնտեղ, հատակի վրա փռված էին գորգեր: Վոչ վոք չկար:

Ուստան յելավ միջանցք: Նշանակում է, չար վոգին, Թրքուհին, կամ,— ասեր աստված,— իր վին հեղնարը՝ այնտեղ եր,—մյուս սենյակում...

Ուստայի սիրտը դողաց, բայց վարանող թուլությունը տևեց միայն մի վայրկյան: Նա վճռական հրեց դուռը և մտավ ներս...

Հեղնարը դունատված, նվաղած, կիսամերկ չորթունքներով, ծունկ եր չոքել և աղոթք եր անում՝ ըստ յերևույթին իր սիրած տղայի անվտանգության համար:

Լսելով դուռն ճայնը, նա նայեց այն կողմ և ցնցվեց: Ըստ յերևույթին, նա չհավատաց իր աչքերին: Ավելի շուտ՝ վախեցավ իր վրդովված վիճակից և տենդոտ ուղեղից, քան դռան մոտ վանդնած կերպարանքից:

— Հեղնա՞ր...—չշնչաց ուստա Մկրտիչը:

Կայծակի արագությամբ Հեղնարի դեմքն անատելի սպիտակեց,—թվաց, թե այդ նրա աչքերն էին, վոր

անատելի սևացան,—նա ձեռքը տարավ դեպի կուրծքը, ղղաց նրա տակ ուժգին և անկանոն թպրտացող սիրտը և մինչև անդամ չկարողացավ ճչալ: Նա ծկլթաց՝ ինչպես վճիտ ջուրը բոստանների արխում՝ և լռեց: Սիրտը հանկարծակի դադարեց թպրտալուց:

Ամեն ինչ վերջացավ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1

Նորից փակվեցին Հաբիբայի դռներ ու անհյուրընկալ դարբասները: Թուրքական թաղամասում ոչ դեռ էր հավատում նախապաշարմունքների՝ Հեղնարի մահից հետո համոզվեց, որ անհետացած պառավի տան վրա անեծք կար ծանրացած: Հեղնարի մահից անմիջապես հետո, յերբ մոլլայի մեծ կնոջ միջոցով լուրը տարածվեց ամբողջ թաղամասում, այնտեղ դանվող բոլոր բնակիչները բահ ու քլունգներով զինված, անասելի դոռոցներով, հավաքվեցին Հաբիբայի տան առջև՝ հիմնահատակ կործանելու այն: Ու մինչդեռ ուստա Մկրտչի դժբախտության լուրը սլացավ քաղաք՝ կայծակի արագությամբ և ուժգնությամբ տարածվելու այնտեղ,— մոլլան, Իբրահիմը, Սաֆարը, հալի Ջյաբիմը և բոլոր մյուս տղամարդիկ սկսեցին քլունգների կատաղի հարվածներ տեղալ չենքի աղյուսե պատի վրա և չեչոտել նրա հարթ մակերեսը: Թվում էր, թե

այդ հարվածների ձայներն անդամ հնչում էին ինչ վոր անսովոր մռայլությամբ: Աղյուսներից բարձրացավ կարմիր փոշին և ղժալիորեն մշուշեց հավաքված բազմությանը՝ իր փայլուն դործիքների հետ: Զգիտես ինչու՝ կանայք սկսեցին վայնասուն բարձրացնել և իրենց մաղերը պոկոտել, իսկ յերեխաներն այդ ամենից ապշած՝ դոռալով լաց յեղան: Տղամարդիկ, վոր հարվածները տեղում էին ավելի ու ավելի մոլեդնած, կարծես վոչ թե քանդում էին պատը, այլ դանակոծում, ջարդ ու վնասուր անում, այն դանելով իրրև ամեն ինչի մեղավորը:

Ընդհանուր իրարանցման մեջ, հանկարծ բացվեց Հաբիբայի տան դարբասը և չեմքի վրա յերևաց ուստա Մկրտիչը՝ բարձրահասակ ու մոտխոհ: Շափխան դեպի ծոծրակը թեքած, ճակատի վրա քրտնքի մարդարիտներ, նա մեղմ ու հանդարտ աչք հածեց չուրջը:

— Ես ի՞նչ դանապդչում է,—հարցրեց նա թուրքերեն.—նեսը մեռած մարդ կա...

Ցետ նորից ներս մտնելով՝ ծածկեց ծանրանիստ վեղկերը:

Մթանալուց տիրեց այնպիսի լռություն, վոր թվաց, թե լսելի դարձավ կարմիր փոշու ձայնը, վորն ողից նստում էր մարդկանց դլխների, ուսերի վրա և դետնին: Բահերն ու քլունգները մարդկանց ձեռքերում դարձան ավելորդ և մարդիկ նայեցին միմյանց՝ չհավատալով ինչ անել: Բոլորը կարծես նոր վերհիշեցին, վոր այնտեղ, տան ներսում, հավիտենական քնով քնել էր մի կին, վորին խաղաղություն էր հարկավոր՝ ինչպես յուրաքանչյուր քնած մարդու: Նույն րոպեին

դարբասը նորից բացվեց և ուստան դուրս յելնելով, մոտեցավ մոլլային.

— Միրզալի, նես արի, դո՞ւն ընչի ես կայնե: Հա— ջի Ջյարի՞մ, Սաֆա՞ր, ձեզի հետ եմ...

Թաղամասի պատկառելի ծերունիները մոլլայի հետ միասին՝ մոտն չենք: Ուստան դեռ դուռը չեր ծածկել, յերբ անկյան յետևից լսվեց սմբակների ձայն և մի կառք արագ ընթացքով մոտալ վողոց: Հավաքվածները չուռ յեկան և տեսան: Գլխաշորը վար գցած, սպիտակ մաղերն արձակած, իր չուված մատներով կարծես մաղերը սանրելով, գալիս եր ուստա Մկրտչի մայրը: Նա չրթունքն ամուր սեղմել եր առամների տակ և նվաղկոտ ձայնով հծծում եր.—ո՛ւմմմ... ո՛ւմմմ...

Ուստան նեռվեց ընդառաջ: Ողնելով մորը՝ վար իջնել կառքից, նա միևոց դոալ չչնջալու.

— Ջուր կողբաս, մեր... Ենիկ քու վողջիդ չա— ժե...

Մայրն ապշությունից չուված աչքերով նայեց վոր— դուն:

— Երթանք՝ նեսը կսեմ...

Ցնվ նույն րոպեին նկատելով մոլլայի մեծ վինոջը, կանչեց.

— Արի, քուր, դուն ել արի:

Ուստայի մայրը հարցախնդիր հայացքով նայեց մոլլայի կնոջը՝ տեսնելով, վոր նա ևս տեղյակ եր պա— տահածին, բարևեց ու նրանք յերկքով մոտն նեցա:

Ցնվ անմիջապես դրանից հետո, սկսվեց այդ որվա մեծազույն տոնախմբությունը: Միանգամից լսվեցին բազմա— թիվ կառքերի ձայներ, վաղող մարդկանց վոտնաձայ— ներ և անմիջապես վողջ լսվեցին մեծ թվով մարդիկ:

Նրանք արագ մոտեցան հավաքվածներին, չվոթված հարցեր տվեցին և քիչ հետո փոքրիկ վողոցը լեփ—լեց— վեց վառքերով: Կառապանները նույնպես վար ցատկե— ցին իրենց նստելատեղերից և խառնվեցին ամբոխին: Հարբերայի տան վողոցը լցվելուց անմիջապես հետո, ընչասպատ մարդկանց և վոչոտված ձիերի խուռներամբ լցվեց նաև շրջակա վողոցները: Լավեցին աղմուկներ, մարդիկ պահանջում եյին կառապաններից՝ յետ քշել կառքերը և թույլ տալ իրենց՝ մոտենալ տանը, բայց կառապաններն առավել ևս ցանկանում եյին մոտենալ և լսմանալ, թե ինչ եր պատահել ուստա Մկրտչին: Թուր— քական թաղամասում բնակվող յուրաքանչյուր մարդ շրջապատվեց տասնյակ ուրիշներով, վորոնք անընդ— հատ տեղում եյին հաղարավոր հարցեր: Շատ բան հայտնի չեր Թուրքերին, բայց ամենակարևորը հայտնի յեր.—Հեղնարը մի հայ սիրեկան եր ունեցել, վորի հետ հանդիպելիս եր յեղել Հարբերայի տանը: Ուստան բռնացրել եր Հեղնարին և Հեղնարի սիրտը ճաքել եր...

Իսկ թե ի՞նչ կերպ եր ուստան բացել դավաճանու— թյունը, իսկ ո՞վ եր կնոջ սիրեկանը,—վոչ վոք չգի— տեր: Միայն մի Թուրք,—մտադրծ Կուլին,—պատմում եր, թե ինչպես մի ժամ առաջ Սաֆարի մի յերեխան վազ եր տվել և հաղորդել իրեն՝ Հեղնարի փախչելու մասին, ապա մյուսներն եյին յեկել՝ հայտնելու հայի դալու մասին, բայց մինչև իրենց վրա հասնելը, հայի տղան արդեն փախել եր, իսկ Հեղնարը հանդչել:

Աղբեցիկ մարդիկ,—թե հայերից, թե Թուրքերից և թե հուդաներից,— վերջապես կարողացան մոտենալ դարբասին: Մոտեցան նաև ուստա Մկրտչի ընկերները, բարեկամները, Հեղնարի այլայլված ու չվոթված աղ—

զականները: Ցերբ մարդկանցից մեկը դարբասը հրեց, դուրս յեկավ, վոր այն վակ եր: Մտածելով մի վայրկյան, մարդը բռնեց թակը և խփեց: Այն հնչյունները, վոր դուրս յեկան այնտեղից՝ մի սառը ցնցում պատճառեցին բոլորին: Մահվան ու չիոթի այդ պարագաներում նրանք հնչեցին ավելի մռայլ և թվացին թաղման դողանջներ: Թեև յերկար ժամանակ ներսից պատասխան չեղավ, բայց վոչ վոք չվճռեց կրկին անգամ թակը ձեռք վերցնել:

Ինչ հետո դարբասը բացվեց և դուրս յեկավ ուստայի մայրը: Նա միանգամայն հանդիստ եր, սովորականի նման գլխաչալը գլխին գցած, մազերը դրա տակ թաղցրած, բայց նրա շրթունքներն ամուր կերպով սեղմված եյին իրար և դեմքը սովորականից մի քիչ ավելի խիստ եր: Նա նայեց հավաքվածների լուռ ամբոխին և ասաց.

— Ցետ դարձեք, ողուլ, ձեր վոտներն էլ են ափսոս, ձխաններդունն էլ...

Լուսթյունը, վոր կարծես հոսում եր՝ քարացավ: Ուստայի մայրը հաստատ քայլերով մտավ ներս և նրանից դուռը փակեց:

2

Հեղնարը պառկել եր նույն սենյակում, հատակի գորգի վրա: Նրա վրա դցել եյին պատից պոկած մի գորգ, վորը ծածկել եր նրան ամբողջովին, բայց թողնելով միայն կանաչ կիսակոշիկներն ու սև մազերով շրջանակված գլուխը: Նրա դեմքը դունատ եր, համարյա սպիտակ, և թվում եր, թե նա քնած է:

Նրա կողքերին ծալապատիկ նստել եյին մոլլան,

ուստա Մկրտիչը, հաջի Ֆյարխը, Սաֆարը, ուստայի մայրն ու մոլլայի մեծ կինը: Իրարհետ կանգնել եր դռան մոտ՝ շվար, ձեռները կողքերն ի վար կախ դցած և մտածում եր: Լուսամուտի բարմաբետ ապակիներից բաղմադույն կիսախավարն ընկել եր հավաքվածների անձայն, անշարժ կերպարանքների վրա: Այն, վոր Ալենդանի մարդիկ նստել եյին մեռածի նույնպիսի քրացած դիրքով և վոչինչ չեյին անում կամ ասում՝ թվում եր բնական ու հասկանալի: Վոչ վոք չեր չտապում, վորովհետև վոչ վոք վոչնչի չեր պատրաստվում և վոչնչի չեր սպասում: Հայտնի չեր՝ ըրսում աղմկո՞ւմ եյին, թե՞ լռել եյին, վորովհետև արտաքին աշխարհից վոչ մի ձայն ներս չեր թափանցում:

— Մեղքը... մերն է...— լուսթյան նման հանդարտ՝ հանկարծ հնչեց մոլլայի ձայնը.— Հարիրեյի տունը... մենք սլիտի չուտուց քանդած եղնեյինք...

— Կքանդենք...— փակ ատամների արանքից մրմռաց հաջին:— Բայուս դիմակը տանելուն պես՝ հիմնահատակ կվեներք...

Խոսքերից անմիջապես հետո վրա հասած լուսթյան մեջ՝ ուստան վեր բարձրացրեց գլուխը և նայեց ներսատածներին.

— Խորուրդ երի,— ասաց նա խաղաձայն.— կուզեմ ես մեղավոր կնկան թաղել իրան մեղքի տան մեջը...

Ցետ նորից գլուխը խոնարհեց:

Մոլլան ու հաջին նայեցին իրար:

— Ես տունը քանդողի տակ է,— ասաց մոլլայի մեծ կինը՝ առանց գլուխը վեր բարձրացնելու, վորովհետև նրա աչքերի մեջ փայլատակում եյին չափից ա-

վելի բորբոքված կրակները և նրան թվում էր, թե չաղբայի տակից անդամ՝ նրանք կհանանեն ուստային և կվշտացնեն:

Ուռ,—կարծես հավխոնականության միջից,—լսվեց դարբասի թակոցը:

Իրրահիմը յելավ դուրս: Ինչ հետո ներս մտավ ավազ յեկեղեցու ավազ քահանան՝ իր տիրացուի հետ, վորի թևի տակ չուբլաո կար և աղոթագիրք: Բոլորը վոտքի կանգնեցին: Քահանան արագ մոտեցավ ուստային և նրա ձեռքը սեղմեց: Յերբ դրանից հետո մոտեցավ ուստայի մորը, նա համբուրեց քահանայի աջը և ասաց.

— Գնա, հայր սուրբ, խաչդ մի պղծե...

Կարծես սառը ջուր սրսկեցին բոլորի վրա:

— Մեղավորի հոգին...—վորձեց հակաճառել քահանան:

—Մեղավորի հոգին գնաց ուր որ իրան տեղն եր,—ընդհատեց ուստայի մայրը:

Քահանան և տիրացուն նայեցին իրար և խաղաղություն մաղթելով՝ դուրս յեկան:

Յերբ Իրրահիմը դարբասը փակելուց հետո մտավ ներս, բոլորը նստած եյին առաջվա դիրքով՝ լուռ և անշարժ:

— Մենք ուստի խոսքը յետ դարձնել չենք կրնա,—չարունակեց հայրն ընդհատված խոսակցությունը:—Ուստի նպատակը ճշմարիտ է.—թող մեղավորը թաղվի իրան մեղքի տան մեջը...

— Տունը քանդողի տակ է,—կրկնեց մոլլայի կինը:—Թե ախպերը ողջ է, թող թաղե, հրմը տունը սաղ չպիտի մնա...

— Ինչ կսես, ուստա,—հարցրեց մոլլան:

Բոլորը նայեցին ուստա Մկրտչին: Մտածելով բավական յերկար, նա հայտնեց.

— Տունն ընձի հարկավոր չէ... Դուք էլ որ չքանդեյիք, յես ինքս պիտի ձեղնեն խնդրեյի եղ բանը... Մեննակ թե, ընձի մե քառասուն որ ժամանակ տվեք՝ ետև քանդենք...

— Քառասուն ո՞ր,—չհասկացավ մոլլան:

— Մինչևի քար քաշեմ դերեզմընի վրա,—բացատրեց ուստան:

Մոլլան, հաջի Ֆյարխոը, Սաֆարը, Իրրահիմը, մոլլայի մեծ կինը՝ համաձայնություն տվեցին թե իրենց կողմից և թե թաղամասի բոլոր մյուս բնակիչների:

Յեկավ քրեական ու բժշկական քննությունը և այդ դեպքն արձանագրեց իրրև անհայտ պատճառներից դրդված հանկարծամահություն:

3

Հեղնարին թաղեցին ավազանի տակ: Ընդհատեցին չաորմանը, հատակից վերցրին մի քանի սալաքար, խորը կլցրով փորեցին տակի հողը և դադաղը դրեցին այնտեղ: Հետո նույնությամբ սարքեցին ամեն ինչ և չաորմանի վճիտ ու մաքուր ջուրը նորից բաց թողեցին: Յերբ յերեկոյան դեմ ամեն ինչ վերջացավ՝ բոլորը հրաժեշտ տվեցին ուստա Մկրտչին ու դուրս յեկան: Մայրը մի րոպե փորձեց վորդուն յետ պահել մոտյալ տան մեջ քառասուն որ մենակ մնալու վտանգավոր վորոշումից, բայց ուստան ի պատասխան՝ մի-

այն համբուրեց նրա ձեռքը և խնդրեց՝ իր ընկերներից վորևե մեկի տղայի ձեռքով ամեն որ մի քիչ ուտելիք ուղարկել իրեն: Դամբանաքար պատրաստելու անհրաժեշտ գործիքները նա խնդրեց ուղարկել հենց նույն որը:

Ցերբ քաղաքում լսացան ուստա Մկրտչի վորոշման մասին, բոլորն անխտիր չկան այն յեղրակացության, վոր դամբանաքար պատրաստելն առանձին մնալու պատրվակ եր, վորովհետև ուստան ամաչում եր նայել մարդկաց յերեսին՝ քանի դեռ թարմ եր ընտանեկան չաեսնված ու չլսված խայտառակության այդ ահ բիծը: Սակայն ո՞ւմ մտքով կանցներ չարախնդալ ուստայի դժբախտության վրա: Բոլորին պաշարել եր այնպիսի մի սոսկում, ինչպիսին լինում է սրբապղծության ժամանակ: Ի՞նչպես եր համարձակվել Հեղնարը,—այդ անառակ կինը,—արատավորել պայծառ ուստայի անկողինը... Ցեվ ո՞վ եր յեղել արդյոք այն լիժ ծնունդը, վոր դայթակղեցրել եր այնքան տարինների անարատ կնոջը...

Թաղման հենց հետևյալ որը, ուստայի ընկերները վերցրին Սաֆարի յերեխաներին և սկսեցին չրջել չուկաները, արհեստավորների և առևտրականների խանութները, չայխանաները, գայֆախանաները, միկիտանները, վորպեսզի գանեն տղային: Նրանք իրենց գրպաններում ունեյին այդ առթիվ խնամքով սրած գանակներ և պատրաստ եյին հենց բռնած տեղում դանակահարել նրան: Բայց նա չկար: Ո՞վ գիտե, գուցե և կար, գուցե և Սաֆարի յերեխաները տեսնում եյին նրան, բայց չեյին ճանաչում, վորովհետև նրանք

հիշում եյին յերեխատարդի միայն փափախը: Իսկ ամբողջ քաղաքում չեր յեղել և չկար վոչ մի հայ կամ հույն, վոր փափախ ծածկեր: Ըստ յերևույթին տղան իր գլխի չափխան փափախով փոխարինում եր միայն Թուրքական Թաղամաս գնալիս՝ բոստաններն մեջառելով անցնող անմարդ վոլորներից մեկում, վորտեղ և, անկասկած, Հեղնարն եր իր չաղրան ծածկում ու վար առնում:

Ձիշտ է, յերեխատարդին տեսել եյին նաև Թրքուհիներից վոմանք, բայց անցողակի, չտապ, չադրայի անվստահորեն բացված ճեղքից: Նրանք իհարկե չեյին կարող հիշել նրա դեմքը, և յեթե հիշեյին էլ, վոչինչ չեյին կարող անել: Նրանք, իրրև կին, զրկված եյին տղամարդու նայելու իրավունքից և այժմ վոչ միայն չեյին կարող վնասել նրան կամ գանել, այլև խոստովանել, վոր ճանաչում եյին այդ տղամարդուն, հային և անառակին: Այդ յեռակի հանցանքի համար կչողար սրած պողպատի մի կտոր և աչխարհը կպակասեր ևս մի կնոջով:

Իզուր վնտրումներից հուսահատված՝ բոլորն իրենց հույսը դրել եյին ատածու վրա, վորպեսզի նա լինքն իր չանթով տեղնուտեղը վոչնչացներ մեղավորին և Թույլ չտար նրան՝ անպատիժ մնալ և ծաղրել վորպես դայթակղություն իր նման ուրիշների համար: Հարկավոր եր մի ցաստա, մի վրեժխնդրություն, բոլորը սոսկահար սպասում եյին դրան, բայց միևնույն ժամանակ, իրենց հոգու հետևյալ խորքում կասկածում եյին, Թե գոյություն չուներ վոչ մի հրաչք, Թե չպիտի գար վոչ մի հրաչք՝ ընտանիքի արբությունը նորից հաստատող...

4

Վոսկերիչ Վաղինակի տղան,— Վարոսը,—քանդեց ոճիքի կոճակները և չարունակեց քայլել: Մի անտանելի տոթ այրում եր նրան և նա չեր կարողանում վորոշել՝ դրսո՞ւն եր այդ տոթը, թե՞ իր ներսում: Շափխայի տակից նրա ճակատի վրա թափված սև մաղերը փուչկալվել եյին և դորշ եյին թվում: Նա վաղ առավոտվանից դուրս եր յեկել չրջելու: Նրա գեղեցիկ աչքերը հոգնել եյին ու կորցրել փրենց հանդուգն և կանանց չփոթեցնող արտահայտությունը: Սակայն նա մտածկոտ չեր, այլ ցրված: Վորոնող հայացքով անդադար չուրջն եր նայում, բայց ըստ յերևույթին վոչինչ չեր տեսնում: Միայն մի անգամ կանգ առավ, կարծես սթափվեց, փորձեց վորոշել իր վորտեղ լինելը: Նա զտնվում եր քաղաքի արևմտյան մասում, հարավից հյուսիս ձգվող բնակարանային փողոցներից մեկում: Իր յերկու կողմում Գյումրու առևորական մլհարկանի տներն եյին սև ու նարնջագույն տուֆաքարերից, վամարակապ դարբասներով, իսկ դիմացը, դեպի հյուսիս, ուր փողոցն աննկատելիորեն բարձրանում եր և հեռվում վերջանում՝ յերևում եր լայնարձակ դաշտը: Զնայած կիրակի որվան, փողոցը նույնքան լուռ եր ու խաղաղ, վորքան ամեն որ: Մի վայրկյան այդ անմարդությունը հանգըստացրեց Վարոսին և նա հոգնած ժպտաց:

Ի՞նչ անել՝ վոխանակ այսպես մոլորված կանգնելու: Ահա Թաթոս հորյեղբոր տունն իր աչ կողմում: Զմտնե՞լ արդյոք, խոսել հորեղբոր կնոջ հետ և դուցե մի բան պատմել նրան, վոր դեռևս չի

պատմել վոչ վոքի... Գուցե մտնել Փալանջոնց մո՞տ... Ահա և նրանց տունն իր ձախ կողմում: Ցեթե Վարոսը մտնի այնտեղ, Փալանջոնց ամբողջ ընտանիքը դուրս կվազի՝ նրան դիմավորելու: Գոհարը կամաչի, կժպտա, բայց հայացքը չի խոնարհի և խոստացող կերպով աչքով կանի: Ընտանիքն ուզում է, վոր Վարոսն իրենց վեսան դառնա, իսկ Գոհարը սիրում է նրան:

Կամ դուցե մտնել ա՞յս տունը: Վարոսը չի հիշում կամ չգիտե, թե ում տունն է դա, բայց կարող է մտնել և մի թաս ջուր խնդրել իր տոթ հոգու համար...

Իսկ ինչո՞ւ խնդրել: Ո՞վ պիտի բերի ջուրը: Մլ՞թե Հեղնարը: Ուրիշ ո՞վ կարժենա նրա մի մատին...

Վարոսը հուսահատ կերպով ձեռքը տարավ դեպի սիլը՝ ոճիքը քանդելու համար: Բայց այն արդեն քանդած եր մինչև վերջին կոճակը: Ուրեմն էլ ինչո՞ւ եր տոթ: Զե՞ վոր դեռ լրիվ կեսոր էլ չեր... Նա չոչափեց վիզը, հետո կուրծքը, և ձեռքը ծոցը տարավ: Զմա՞ն արդյոք: Զգնա՞լ արդյոք այդպես խմած, ձեռքն այդպես ծոցը դրած և հասնելով իր սիրո ու մեղքի դառնը՝ դառնորեն լաց լինել նրա չեմքի վրա...

Նա ծանր հառաչեց և չարունակեց քայլել: Նրա յերկու կողմում, լուռ ու միահարկ՝ կանգնած եյին տները: Կտուրներից հորիզոնական դիրքով դեպի փողոց եյին յերկարվել մուգ կարմիր ներկված թիթեղե ջրհորդանները, վորոնց գլուխները մի արմունկով

վար եյին թնդված դեպի վողոց: Նրանք վրենց վրա աքլորների նման ատամնավոր կատարներ ունեյին, իսկ բերաններվ յերկու կողքերին՝ ատամնավոր ճեղքեր, վորոնք նրանց նմանեցնում եյին չան գլխի: Այդ չան գլուխները կարծես ծխծաղում եյին Վարոսի վրա վրենց կիսարաց բերաններով և թխթխդե ատամներով, ծաղրում եյին նրան:

Վարոսը կանդ առավ: Ավելի չուտ անդրադարձավ, քան դիտակցորեն՝ նա բաց արեց մուտակա դարբասը և մտավ հայթ: Մոտեցավ տան դռանը՝ ջուր խընդրելու համար: Թե դուռը, թե նրա վողքի յերկու լուսամուտները, բայց եյին, բայց ներսում վոչ վոք չկար: Ըստ յերևույթին, բնակիչները դռնովում եյին վողոցի կողմի սենյակներում: Հայթում, արևի պայծառ լույսի տակ, դուռնաթափված վուխը հողի մեջ քուջուջ եյին անում հավերը: Վոչ մի ծառ լիսարկն չկար, իսկ կենտրոնում դռնովում եր ջրհորը:

Վարոսը մոտեցավ դռանը: Վորպեսզի հավերը չմտնեյին տուն, դռան վրա, մարդու կես բարձրությամբ կախված եր կարմիր ճաղերով մի դռնակ: Վարոսը ձեռքը դրեց դռնակին և նայեց ներս:

— Մայրի՛կ,— ձայն տվեց նա:

Վոչ վոք դուրս չեկավ:

Վարոսը յետ դարձավ և դնաց դեպի ջրհոր: Դույլը, վոր յերկար պարանով կապված եր ճախարակից, թողեց ջրհորի մեջ, ապա վեր քաշեց: Ճախարակի ճոնչոցի վրա մի հասակավոր մարդ դուրս յեկավ հայթ: Վարոսը գլխով բարևեց նրան և դույլը մոտեցրեց շրթունքներին: Ջրից բուրեց հորի թարմություն: Ջրի մեջ յերևաց իր հողնած կերպարանքը, նա նայեց իր խամրած աչքերին և առանց մի կաթիլ խմելու՝ դույլը վար դրեց: Նրա կողքին կանդնած եր տանտերը:

— Ընչի՞ չխմեցիր, ախպոր մանչ:

— Ծարավ չեմ, հորյեղբայր:

— Ըպը մեր հայթին ի՞նչ դորձ ունեյիր,— կասկածանքով ժպտաց տանտերը:

— Գող չեմ, հորյեղբայր: Ցես ռակերիչ Վաղինակի տղեն եմ:

— Ոսկերիչ Վաղինակի տղե՞ն...

Տանտերը մտերմությամբ բռնեց նրա թևից:

— Նես արի, ախպոր մանչ: Բախին ջրից լավ ե:

— Չե, չնորակալ եմ,—հրաժարվեց Վարոսը.— Ջուրն որ չմարեց՝ բախին էլ չի մարե:

Նա գնաց, իսկ տանտերը տարակուսանքով մի վայրկյան նրա յետևից նայելուց հետո՝ մտավ ներս: Ցերը Վարոսը յեկավ վողոց և ճանապարհը շարունակելու համար անցավ տան պատի տակով, տեսավ լուսամուտներից մեկի յետևում նստած մի ջահել ու գեղեցիկ աղջիկ: Մտածեց, վոր տանտերը կարող եր կարծել, թե ինքը սիրահարված եր աղջիկա վրա և ախուր ժպտաց:

Բիչ հետո սկավեց դաշտը: Բավական յերկար տարածության վրա նա դեռ հնարավորություն չուներ ընդարձակվելու: Ձախ կողմում ոտղմամբերքների պահեստներն եյին և նրանց յետևում, բլրաշարքի վրա՝ յերկարաձիգ բերդը: Պահեստների և բերդի արանքում Ձերքեզի Ջոր կոչվող գրոսանքի ձորակն եր, վոր չեր յերևում: Ալ կողմում Ռանչպարների Մահ-

չան եր և նրա յետևում, հարթ տարածության վրա՝ քաղաքի ամենահռչակավոր զբոսավայրը՝ Զիթողցոնց Զաբորը: Ռանչպարների Մահլայի և Զաբորի միջև Զորի Բողազն եր, որ նույնպես չեր յերևում: Այնուհետև, ուր վերջանում եյին բերդը, պահեստները, մահլան, Զաբորը՝ տարօրինակ կերպով վերջանում եյին նաև ձորերը: Նրանք յերկուսն էլ կտրուկ կերպով ընդհատվում եյին դիք ու բարձր պատով, իսկ ջաչտով հոսող յերկու փոքրիկ ջրերը ջրվեժներով թափվում եյին նրանց կոկորդն ի վար: Այդտեղից այն կողմ, դաշտն այլևս վոչնչով սահմանափակված չեր՝ մինչև հեռու լեռները: Վարոսն աղատ և խորը շունչ քաշեց: Առաջին պահ նրան այնպես թվաց, թե այդ տեսարանի լայնարձակությունը խաղաղություն կտա յերեն: Նույնիսկ թվաց, թե դաշտի մաքուր հովը չոյեց իր այրվող յերեսը: Նա քայլեց չոսեյով՝ գուցե մինչև դիմացի լեռները և նրանց լանջափոսերում ծվարած գյուղերի անդորրը: Սակայն դեռ հաղիվ հարյուր քայլ արած՝ նա զգաց, թե ինչպես մի չհանդչող բոց լափում եր իր կուրծքը, և իր վոտքերը դժկամությամբ են առաջանում:

Նա բնազդաբար կանգ առավ և դժկամությամբ նայեց յետ: Ամենաճև վոչ խորը փոսի մեջ փռված եր ընդարձակ քաղաքը՝ ցածլիկ բլուրների վրա յեղնող-իջնող փողոցներով: Նրա ընդհանուր դորչ պատրամայի միջից, այստեղ ու այնտեղ, վերև եյին խոյացել սևաքար ու կարմրաքար յեկեղեցիների սրածայր գմբեթները՝ արևի տակ պայծառ ու հավասար վայլող խաչերով: Իսկ հեռու, հեռու, հարավ-արևե-

լյան ծայրում, յերևում եր Թուրքական Թաղամասն Ալադյաղի անմարմին կապույտի ֆոնի վրա:

— Ո՛ո՛ֆ,— մռնչաց Վարոսը վոչ իր հասակի ճայնով և չուռ դալով, արագ քայլեց դեպի ինքն էլ չգիտեր՝ թե ուր, համենայն դեպս ավելի հեռու՝ քաղաքից, ավելի հեռու՝ առանց այդ էլ հաղիվ յերևացող Թուրքական Թաղամասից...

Գնալով բավական տարածություն, նա նորից կանգ առավ: Վոչ: Այդպես չի լինի: Պետք է մի բան մտածել, պետք է մի բան անել...

Նա թեքվեց դեպի ռանչպարների Թաղամասը: Մտավ մի փողոց և դնաց: Վորքան դնաց, այնքան ավելի արագացրեց քայլերը՝ ըստ յերևույթին ավելի ամրապնդվելով մտքում ընդունած մի վորոշման մեջ: Նրա կողքերով անցան լեռ քարե տներ՝ կտուրների վրա դիրված հոտավետ խոտի դեղերով, կալերի դատկաչափ բարձրությամբ պատեր՝ իրենց կենտրոնում վուված և կիրակի որվա պատճառով կիսակալսել թողած վառ դեղին ցորենով, անցան գյուղական դռներ, լուսամուտներ, փոքրիկ բացատներում արածող հաստուկենտ ուլեր և բլռված ձիեր՝ վոր գլուխները եյին թափահարում:

Ցեղ հանկարծ, բոլորովին անսպասելի կերպով, մահլան ընդհատվեց, կարծես դետինը միանգամից ճեղքվեց և Վարոսն անմիջապես իր վոտքերի տակ, ցածրում, տեսավ Զորի Բողազը: Նա արագ քայլեց դեպի ձորը կախված ահագին ժայռը և կանդնելով նրա պռունդին, նայեց ներքև: Իր վոտքերի տակ կտուրներ եյին, հայաթներ, փողոցներ, բարդիներ: Ամենաներքևում, հալված, բայց սառն արծաթի

նման՝ հոսում եր ջուրը, իսկ մյուս ափի վրա նորից գոնվում եր այն, ինչից Վարոսը փախչում եր...

Ուստա Մկրտչի տունն ուղիղ դիմացն եր: Լուսամուտները փակ եյին, դուռը փակ եր, փակ եր նույնիսկ ջրհորի բերանը: Տան առջևի հարթ, բայց հայաթում, վորը ցանկապատի փոխարեն շրջանակված եր բարդիներով՝ նույնպես վոչ վոք չկար: Միայն շատ ուշադիր նայելուց հետո յեր, վոր Վարոսը նկատեց ծառերից մեկի տակ նստած ուստա Մկրտչի մորը, վոր գրկել եր փոքրիկ Գալուստին և անշարժացել:

Վարոսի կոպերը փակվեցին, նա որորվեց ժայռի պռունդի վրա: Եվ ինչո՞ւ ապրել Հեղնարից հետո: Մի՞թե իր կյանքն այլևս կարող է բանի պետք լինել: Մի՞թե արժե ավտոսալ, յեթե այդ անպետք մարմինն ընկնի այդտեղից և ջախջախվի...

Սակայն ցած նետվելու վճռական չարժմանը կանխեց մի սոսկալի մխիթ, վորը չանթահարեց նրան: Ջե՞ վոր յեթե ինքն ընկնի այդտեղից և ջախջախվի, իր հետ պիտի մեռնի նաև իր մաքուր, իր անկեղծ, իր բարձր սերը Հեղնարի հանդեպ... Եվ ո՞վ պիտի տիրի Հեղնարին՝ իրենից հետո: Ինչ հուշարձան պիտի մնա սիրելի կնոջ դերեզմանի վրա.— մի՞թե այն քարը, վոր պատրաստում է ուստա Մկրտիչը՝ Հարիրայի գերբասի յեռևում փակված... Բայց քարը չէրիմ չե Հեղնարի համար, այլ վիրավորանք և և անեծք... Հեղնարի հողաթմբի վրա պիտի մնա մի կենդանի սիրտ,—անսահման սիրող և անվերջ այրվող:

Բայց ո՞ւմ սիրտը, յեթե նա ինքն իրեն ցած նետի...

Նա իհարկե չի մեռնի, նա կապրի Հեղնարի սերն անմեռ պահելու համար, նա կապրի վորպես վկա մարդկային անարդարության, վորն իրեն զրկեց իր սիրած կնոջից:

Հանկարծ Վարոսի հանդած աչքերը փայլատակեցին և նա սպառնական հայացքով նայեց դեպի քաղաք: Մեկն այնտեղ մեղավոր է իր սիրած կնոջ մահվան մեջ: Բայց ո՞վ հատկապես: Յերբ Վարոսը դռնի մեղավորին, կսպանի առանց տատանվելու կամ խղճահարվելու: Սակայն նրա թևերը հենց այն է կապում, վոր նա չի կարող դռնել նրան: Ո՞վ է նա: Ուստա Մկրտի՞չը: Բայց նա վոչ միայն չի սպանել Հեղնարին, այլև այժմ չէրմաքար է պատրաստում նրա համար: Գուցե ինքո՞ւ Հեղնաբն են մեղավոր՝ ինչպես ասում է ամբողջ Գյումբին... Իսկ ինչո՞ւ ինքն ու Հեղնարը: Սիրելո՞ւ համար: Ո՞վ ասաց, թե սերը մեղք է: Ո՞վ դրեց այդ որենքը:

Ավելի լավ չէ՞ թողնել այդ բոլոր մտքերը, հեռանալ Գյումբիից, մոռանալ ամբողջ անցածը և ընկնել այնպիսի մի աշխարհ, վորտեղ,—ո՞վ գիտե,—ընտանիքի պատիվն էլ է մաքուր, սերն էլ է սուրբ...

Վարոսը ցնցվեց: Հեռանալու մխթը հանկարծակի լուսով լվաց նրա սրտի խավարը: Իրոք վոր, թողնել, գնալ, կորչել: Քաղաքում ամեն ինչ Հեղնարին է հիշեցնում, իսկ դա սարսափելի ծանր է, քանի վոր Հեղնարն այլևս չկա և յերբեք չի լինելու: Ահա նա հիշում է իրենց վողջույը, վորտեղով անցնում եր ուստայի կինը: Իրենց խանութի մոտով անցնելիս, իրր թե անփութորեն, իրր թե պատահարար, նա նայում եր նրա՝ մի ակնարկով իրեն հասկացնելու հա-

նման՝ հոսում էր ջուրը, իսկ մյուս ափի վրա նորից դռնվում էր այն, ինչից Վարոսը փախչում էր...

Ուստա Մկրտչի տունն ուղիղ դիմացն էր: Լուսամուտները փակ էին, դուռը փակ էր, փակ էր նույնիսկ ջրհորի բերանը: Տան առջևի հարթ, բայց հայաթում, վորը ցանկապատի փոխարեն շրջանակված էր բարդիներով՝ նույնպես վոչ վոք չկար: Միայն շատ ուշադիր նայելուց հետո կարելի էր, վոր Վարոսը նկատեց ծառերից մեկի ստվերում նստած ուստա Մկրտչի մորը, վոր դրկել էր փոքրիկ Գալուստին և անշարժացել:

Վարոսի կոպերը փակվեցին, նա որորվեց ժայռի պռունդի վրա: Եվ ինչո՞ւ ապրել Հեղնարից հետո: Մի՞թե իր կյանքն այլևս կարող է բանի պետք լինել: Մի՞թե արժե ավետաբեր, յեթե այդ անպետք մարմինն ընկնի այդտեղից և չախչախվի...

Սակայն ցած նետվելու վճռական չարժմանը կանխեց մի սոսկալի միտք, վորը չանթահարեց նրան: Ջե՞ վոր յեթե ինքն ընկնի այդտեղից և չախչախվի, իր հետ պիտի մեռնի նաև իր մաքուր, իր անկեղծ, իր բարձր սերը Հեղնարի հանդեպ... Եվ ո՞վ պիտի սիրի Հեղնարին՝ իրենից հետո: Ի՞նչ հուշարձան պիտի մնա սիրելի կնոջ դերեզմանի վրա.— մի՞թե այն քարը, վոր պատրաստում է ուստա Մկրտիչը՝ Հարիրայի դարբասի յետևում փակված... Բայց քարը չիրիմ չե Հեղնարի համար, այլ վիրավորանք և և անեծք... Հեղնարի հողաթմբի վրա պիտի մրա մի կենդանի սիրտ,—անսահման սիրող և անվերջ այրվող:

Բայց ո՞ւմ սիրտը, յեթե նա ինքն իրեն ցած նետի...

Նա լհարկե չէր մեռնի, նա կապրի Հեղնարի սերն անմեռ պահելու համար, նա կապրի վորպես վկա մարդկային անարդարության, վորն իրեն դրկեց իր սիրած կնոջից:

Հանկարծ Վարոսի հանդած աչքերը փայլատակեցին և նա սպառնական հայացքով նայեց դեպի քաղաք: Մեկն այնտեղ մեղավոր է իր սիրած կնոջ մահվան մեջ: Բայց ո՞վ հատկապես: Յերբ Վարոսը դռնեի մեղավորին, կապանի առանց տատանվելու կամ խըղճահարվելու: Սակայն նրա թևերը հենց այն է կապում, վոր նա չէր կարող դռնել նրան: Ո՞վ է նա: Ուստա Մկրտի՞չը: Բայց նա վոչ միայն չէր սպանել Հեղնարին, այլև այժմ չէրմաքառ է պատրաստում նրա համար: Գուցե ինքն՞ու Հեղնա՞րն են մեղավոր՝ ինչպես ասում է ամբողջ Գյումրին... Իսկ ինչո՞ւ ինքն ու Հեղնարը: Սիրելո՞ւ համար: Ո՞վ ասաց, թե սերը մեղք է: Ո՞վ դրեց այդ որենքը:

Ավելի լավ չէ՞ թողնել այդ բոլոր մտքերը, հեռանալ Գյումրիից, մոռանալ ամբողջ անցածը և ընկնել այնպիսի մի աշխարհ, վորտեղ,—ո՞վ գիտե,—ընտանեքի պատիվն էլ է մաքուր, սերն էլ է սուրբ...

Վարոսը ցնցվեց: Հեռանալու մտքը հանկարծակի լուսով լվաց նրա սրտի խավարը: Իրոք վոր, թողնել, գնալ, կորչել: Քաղաքում ամեն ինչ Հեղնարին է հիշեցնում, իսկ դա սարսափելի ծանր է, քանի վոր Հեղնարն այլևս չկա և յերբեք չի լինելու: Ահա նա հիշում է իրենց վողջույնը, վորտեղով անցնում էր ուստայի կինը: Իրենց խանութի մոտով անցնելիս, իբր թե անփութորեն, իբր թե պատահաբար, նա նայում էր ներս՝ մի ակնարկով իրեն հասկացնելու հա-

ման, վոր գնում է Թուրքական Թաղամաս և վոչ Թե մի այլ տեղ, վորի պատրվակով դուրս եր յեկել տնից։ Ահա նա հիշում է այն դայֆախանան, վորտեղ ավելի հաճախակի յեր հարկ լինում նստել և սպասել իր սիրուհու անցնելուն, քանի վոր իրենց խոնութում մնալը դառնում եր հետզհետե ավելի անտանելի, վորովհետև մայրը տրտնջում եր իր մխսելու վրա և խրնդրում եր գոնե ասել, Թե ո՞ւր և գնում այդքան փողը։ Ցել ահա հիշում է այն խաղաղ, մենավոր բնակարանը, ուր իրենց սերն եր ծաղկում։ Ինքը չրթունքները հպում եր սիրած կնոջ ճյունային սպիտակ պատռանոցին և յերեխայի պես զարմանում, Թե ի՞նչպես կարող եր այդպիսի սպիտակություն ունենալ այդքան ջերմություն... Հետո խոսում եյին միասին անցկացրած քաղցր որերի մասին և հիշում եյին միմյանց հետ ծանոթանալը, վորն ամենաքաղցրն եր բոլոր որերից։ Այդ մասին խոսում եյին միշտ, ամեն հանդիպման ժամանակ, վախենալով, վոր չարվող որերի ընդարձակվող տարածության յետևում աչքից կկորչեն հուշերի անուշներից այդ անուշը։

... Ձորի Բողազում գարուն եր։ Հալչում եր ճմեռվա ձյունը և արևն արդեն հաճելի տաքացնում եր մարդկանց մեջքերը։ Ամեն ինչ Թաց եր։ Ձորի լանջերն ի վար հոսում եյին ջրի մանրիկ չերտեր։ Նրանց յուրաքանչյուր յերիզը հոսում եր հյուսվելով։ Հյուսվելուց՝ ջուրը կլկլում եր տարբեր հնչյուններով և անընդհատ փայլփլում։ Ձորով հոսող Գյումրիչայը սառն եր ու վճիտ։ Հողը խոնավ եր ու վափուկ, նրանից գոլորշի յեր բարձրանում, բայց տեղ-տեղ գոլորշին արդեն սպառվում եր և գետինը դունաթափվում։ Գալիս եր Թարմ ու հաճելի խոնավության հոտը։ Յերկինքը կապույտ եր՝ զարմանալի հստակ և զարմանալի համահավասար մի կապույտով։ Ամբողջ ձմեռվա ընթացքում արևի վրա քաշված փառը միանգամից վերացել եր և մարդիկ նորից ամեն առարկա տեսնում եյին պայծառ կերպով։ Բոլոր գարբասները, դռները, լուսամուտները բաց եյին։

Տները դատարկվել եյին. Թե մարդիկ, Թե իրերը, դոնվում եյին դրսում։ Պատերի տակ դրված քարերի վրա, արդեն բոլորովին չորացած փտուրների վրա, արևի յերես եյին հանված դուլնդուզն ներքնահիները, դուլնդուզն վերմակները, տաք յերանգի գորգեր, կարպետներ, ջեջիմներ, ճյունային սպիտակ բարձեր։ Պատերից մինչև ծառերը կապված պարանների կամ դուրս հանված աթոռների վրա՝ փռված եյին վերարկուներ, անդուկ դնելու կամ արդեն անդուկից հանած հագուստներ։

Վարոսը նստել եր իրենց տան պատի տակ,—ինչպես ամեն գարնան,—և նայում եր։ Նա իր մի ձեռքը դրել եր իրենց սպիտակ չան վրա, վորի բուրդը հաճելիորեն տաքացել եր ու փափուկ եր։ Այդ տաքության մեջ վոչինչ չկար վառարանից, վառվող ու ճարճատվող ցախերից, անզոր բոցից։ Այդ տաքությունը գարունն ինքն եր, և Վարոսն իր մատների տակ կարծես արևն եր զգում։ Նա նայում եր դեպի յերկնքի անսահման կապույտը, վորտեղով ուրախ կռանչով իրենց հայրենիքն եյին վերադառնում կռունկները։ Կապույտ անսահմանությունից լսվում եր նրանց հրաշալի, լավագուշակ կռանչը։ Ներքևում, ինչ վոր տե-

մար, որ գնում է թուրքական թաղամաս և ոչ թե մի այլ տեղ, որի պատրվակով դուրս էր եկել տնից: Ահա նա հիշում է այն դայֆախանան, որտեղ ավելի հաճախակի էր հարկ լինում նստել և սպասել իր սիրուհու անցնելուն, քանի որ իրենց խանութում մնալը դառնում էր հետզհետե ավելի անտանելի, որովհետև մայրը տրտնջում էր իր մխսելու վրա և խընդրում էր գոնե ասել, թե ո՞ւր է գնում այդքան փողը: Ցել ահա հիշում է այն խաղաղ, մենավոր բնակարանը, ուր իրենց սերն էր ծաղկում: Ինքը չրթունքները հպում էր սիրած կնոջ ճյունային սպիտակ պարանոցին և յերեխայի պես զարմանում, թե ինչպես կարող էր այդպիսի սպիտակությունն ունենալ այդքան ջերմություն... Հետո խոսում էին միասին անցկացրած քաղցր որերի մասին և հիշում էին միմյանց հետ ծանոթանալը, որն ամենաքաղցրն էր բոլոր որերից: Այդ մասին խոսում էին միշտ, ամեն հանդիպման ժամանակ, վախենալով, որ չարվող որերի ընդարձակվող տարածության յետևում աչքից կվորցնեն հուշերի անուշներից այդ անուշը:

... Զորի Բողազում գարուն էր: Հալչում էր ձմեռվա ձյունը և արևն արդեն հաճելի տաքացնում էր մարդկանց մեջքերը: Ամեն ինչ թաց էր: Զորի լանջերն ի վար հոսում էին ջրի մանրիկ չերտեր: Նրանց յուրաքանչյուր յերիկը հոսում էր հյուսվելով: Հյուսվելուց՝ ջուրը կլկլում էր տարբեր հնչյուններով և անընդհատ փայլփլում: Զորով հոսող Գյումրիչայը սառն էր ու վճիտ: Հողը խոնավ էր ու փափուկ, նրանից գոլորշի յեր բարձրանում, բայց տեղ-տեղ գոլորշին արդեն սպառվում էր և գետինը դունաթափվում: Գալիս էր թարմ ու հաճելի խոնավության հոտը: Յերկինքը կապույտ էր՝ զարմանալի հստակ և զարմանալի համահավասար մի կապույտով: Ամբողջ ձմեռվա ընթացքում արևի վրա քաշված փառը միանգամից վերացել էր և մարդիկ նորից առաջվա տեսնում էին պայծառ կերպով: Բոլոր գարբասները, դռները, լուսամուտները բաց էին:

Տները դատարկվել էին. թե մարդիկ, թե իրերը: դռնովում էին դրսում: Պատերի տակ դրված քարերի վրա, արդեն բոլորովին չորացած փտուրների վրա, արևի յերես էին հանված դույնզդույն ներքնակները, դույնզդույն վերմակները, տաք յերանգի գորգեր, կարպետներ, ջեջիմներ, ձյունային սպիտակ բարձեր: Պատերից մինչև ծառերը կապված պարաններին կամ դուրս հանված աթոռների վրա՝ փռված էին վերարկուները, սնդուկ դնելու կամ արդեն սնդուկից հանած հագուստները:

Վարոսը նստել էր իրենց տան պատի տակ,—ինչպես ամեն գարնան,—և նայում էր: Նա իր մի ձեռքը դրել էր իրենց սպիտակ չան վրա, որի բուրդը հաճելիորեն տաքացել էր ու փափուկ էր: Այդ տաքության մեջ վոչինչ չէիր վառարանից, վառվող ու ճարճատող ցախերից, անզոր բոցից: Այդ տաքությունը գարունն ինքն էր, և Վարոսն իր մատների տակ կարծես արևն էր զգում: Նա նայում էր դեպի յերկնքի անսահման կապույտը, վորտեղով ուրախ կռանչով իրենց հայրենիքն էին վերադառնում կռունկները: Կապույտ անսահմանությունից լսվում էր նրանց հրաշալի, լավագուշակ կռանչը: Ներքևում, ինչ վոր տե-

զում, յերեխաներն աղմկում էլին կռունկների մասին, ինչ վոր մոտիկ տան արևկող պատի տակից լսվում եր, թե ինչպես մի ծերունի, կռունկների յուրաքանչյուր կռանչին ի պատասխան՝ մրմնջում եր.— «Ջան, ջան, ջան»...

Վարոսի մյուս կողմում, պարանի վրա, յերկտակ վուշած էլին դորգերը: Նրանք տաք պատի նման վարդաղուրել էլին այդ կողմի տեսարանը: Իրենց տան դուռը դորգերի այն կողմն եր: Այն կողմն եր նաև դորգերի վար նետած սովերը: Իսկ Վարոսի կողմում, դորգերի մուտ խայտարղետությունը վաստում եր արևի տակ իր խորը, փափուկ ջերմությամբ:

Հանկարծ Վարոսը ցանկություն դգաց,—ինչպես իր վաղ մանկության գարուններին,—մտնել յերկտակ վուշած դորգերի արանքը, յերկու ականջների վրա ղգալ դորգի տաք հպումը, քայլել այդ նեղ խավարով, անվերջ քայլել, մինչև վոր հանկարծակիորեն ընդհատվելին դորգերը, հանկարծակիորեն իր աչքերը շլանային անսպասելի արևից, իսկ ականջներն ազատվելով դորգի հպումից, միանգամից լսելին գարնան բոլոր ձայները.— հաղարավոր մանր ջրերի մեղմիկ քչքչոցը, թարմ ոդի չնչնկոցը, յերեխաների բացականչությունները, ուրախությունից դղրդ անող յերկու չնիհների մոմոռոցը, դրկից հասած աղջկա զվարթ ծիծաղը... Վարոսը նույնիսկ վեր ցատկեց տեղից, բայց իր հասակից չվոխված՝ նորից նստեց.— ինքն այլևս չեր տեղավորվի պարանի տակ, իսկ իր քայլերի համար, այդ մի քանի դորգերի տաք և մութ միջանցքն այլևս անվերջանալի չեր թվա... Ջիչ հետո Վարոսը վեր կացավ, լիքամ դեպի ձոր, անցավ ձորալանջի տների առջևով՝ գարնան բացվելուց հիացած: Նա առանց պատճառի ժպտում եր: Նայում եր պատերի տակ արևկող անող, բայց վոչ թմրող, այլ կայտառ չներին և վոչինչ չեր մտածում: Նա իրեն զգում եր անհավատալի կերպով թեթև: Վոչ մի հագուստ չեր զգում իր վրա.— թվում եր, թե ինքը մերկ է: Նա բոլորովին չեր աշխատում վոտքերը շարժել.—նրանք վոխվում էլին իրենք իրենց: Նրա կուրծքը կարծես բոլորովին դադարել եր յեղևեղներ անելուց և ոդն ինքնիրեն եր ներս ու դուրս անում նրա ռունգերով: Իր թեթևությունից եր, թե հոգի փափկությունից՝ նա իր վոտքերի տակ գետինը չեր զգում:

Նույն րոպեին, յերբ նա անցնում եր ուստա Մկրտչի տան առջևով, դուռը բացվեց և Հեղնարը մի ներքնակ գրկած, դուրս յեկավ այնտեղից: Ներքնակի յետևում նրա դեմքը չեր յերևում: Բայց յերբ նա ներքնակը փռեց պատի տակ գրված քարերի վրա, Վարոսը կանգ առավ տպչած ու հիացած և չկարողացավ նույնիսկ քոդարկել իր հետաքրքրությունը: Ո՞վ եր այդ դեղեցկուհին: Մի՞թե ուստա Մկրտչի կինը... Բայց ի՞նչպես եր յեղել, վոր Վարոսը մինչ այդ չեր նկատել նրան: Մի՞թե կարող եր պատահել, վոր նա նրան յերբեք տեսած չլիներ: Անհնար եր: Ավելի շուտ՝ կույր եր յեղել Վարոսը՝ դեռ կին չտեսած տղայի կուրությամբ...

Կինը նկատեց նրան, ժպտաց և հարցրեց.

— Ի՞նչ կուզես, Վարոս...

— Դուն ընձի պիտե՞ս,—զարմացավ Վարոսը:

— Ոսկերիչ Վալինակի երեխեն չե՞ս:

Կարծես մեկն ապտակեց Վարոսին և հետո քըր-քըջաց: Նա մահացու կերպով վիրավորվեց և կռվի հրավիրող հանդգնությամբ պատասխանեց.

— Վաղինակինն եմ, հըմը երեխա չեմ... Ծոցս կառնեմ՝ կտեսնես...

Վարոսի խոսքերի՞ց էր, թե՞ աչքերի սանձարձակ արտահայտությունից՝ կինը կարմրեց, չփոթված ժպտաց, շրթունքը կծեց և արագ մտավ ներս: Վարոսը հեռացավ...

Նույն որը, կեսօրից հետո, յերբ դեռ արև կար, Հեղնարը մտավ նրանց խանութը: Ներսում մենակ Վարոսն էր: Նա նկատեց, որ կինը հագել էր դրսի զգեստները, և նրան թվաց, թե ավելի բնական կլիներ, յեթե նա դար տնային հագուստով, քանի որ ուստա-յի տունը մոտիկ էր:

Վարոսն արագ վեր կացավ և մոտեցավ նրան: Հեղնարը դիտեր, որ Վարոսն առևտրով չի զբաղվում, ուստի և, նայելով չուրջը, հարցրեց.

— Ո՞ւր ե մերդ...

Վարոսին թվաց, թե Հեղնարը պատրվակով եք յեկել: Ժպտաց, բռնեց ձեռքը, և ամուր, չափազանց ամուր սեղմելով՝ նայեց աչքերին ու աչքով արեց:

— Ի՞նչ կուզես, սալախանա՛,—չնչասպառ չչնջաց Հեղնարը:

— Վարդ կուզեմ դարնանըս հըմար...

Հանկարծ Հեղնարը նայեց տղային չափազանց քնքուշ, և բնազդական չարժումով ձգվեց դեպի նա՝ այնպես, որ կարծես գրկել եր ուզում: Բայց հետո յետ նետվեց սարսափած ու գնաց դեպի դուռը:

— Եղուց ես ժամանակ արի Թուրքի Թաղի ճամ-

բու վրա, աղիղ,—չչնջաց Վարոսը:—Ցես լավ բան եմ մտածե...

... Ամեն որ, ամեն որ Վարոսը սիրտ հիշի այս ամենը: Վո՛չ, անհնար է այլևս Գյումրիում մնալ...

Նա ծանր չունչ առավ: Նրա աչքերն արցունքով լցվեցին, բայց նա ամաչեց ինքն իրենից, չափխան քաշեց հոնքերի վրա, ապա դարձյալ յետ թեքեց և դառնությամբ նայեց դեպի քաղաք, որտեղ արդեսում եր տղամարդուն՝ լաց լինել նույնիսկ այն ժամանակ, յերբ նրանից հեռացել եր նրա աղիղ Հեղնարը...

Գնալ եր հարկավոր, հեռանալ...

Ցավ հանկարծ Վարոսը նորից հիշեց այն, որ չարունակ կանգնած եր նրա ուղեղում այդ վերջին որերը: Հիշեց, որ այնտեղ, իր սիրտ տանը, աղբյուրների հոչակավոր վարպետը չիրմաքար եր տաշում Հեղնարի համար: Հարկավոր եր սպասել, տեսնել, թե ի՞նչ եր լինելու այն քարը և ի՞նչ եր լինելու այն գիրը, որի տակ հող եր դառնալու իր սիրած կնոջ մարմինը: Նա կգնա գիշերով, որպեսզի մարդիկ իրեն չտեսնեն և որպեսզի կարողանա չիր-մաքարի վրա դրոշմել հրաժեշտի իր համբույրը, որը նա, աշխարհի կամքով, անկարող եր դրոշմել դաղա-ղում պառկած Հեղնարի ճակատին... Իսկ այնուհե-տև, իր այդ վերջին պարտքը կատարած, նա դուրս կգա Գյումրուց և վոտք կկոխի անհայտ և անխա-նալի ճանապարհների վրա...

Վարոսը դանդաղաքայլ լքնալ ճոր՝ տուն գնալու մտադրությամբ: Վորքան լքնալ՝ այնքան ավելի ճորը չրջապատեց նրան և վերևում փռված աշխարհը դա-դարեց նրա համար գոյություն ունենալուց: Ինչ հե-

տո, նա տեսավ, որ ինքն արդեն ձորի ներքևումն է, ուղղակի ջրափին: Որորվելով ջրի մեջ չարած վո-ղորկ, կլոր քարերի վրա՝ նա առվակն անցավ: Կանդ առավ, նայեց չուրջը: Ցեվ առաջին անգամ իր կյան-քում, ձորը կարծես բռնեց նրա կոկորդից: Նա շնչա-հեղձի նման սկսեց արագ-արագ շնչել, նրա կուրծքը մի ծանր ճնշումով սեղմվեց և այդպես մնաց: Տաղ-նապած՝ Վարոսն սկսեց չտապ բարձրանալ ձորն ի վեր, բայց վոչ թե տուն դնալու համար, այլ դուրս դալու դաշտ, աղատվելու անհասկանալիորեն վրա հասած խեղդուկից:

Այդ լանջով, երենց տան մոտով, նա բարձրացավ դաշտ: Այնտեղ այլևս արձակ տարածություն էր, իսկ ավելի հեռվում Զլթաղցոնց Զարոր կոչվող գրո-սավայրը: Դուրս դնալ այնտե՞ղ, նստել ծառերի տակ, հանգստանալ, խաղաղվել...

Ցեվ Վարոսն սկսեց քայլել՝ աչքերը չկտրելով դիմացի պատկերից: Դաշտը նրան թվաց անսահման կերպով մեծ և նա սկսեց քայլերն արագացնել՝ չուտ հասնելու համար: Ֆայլելիս, երկար ժամանակ նա խորասուզված էր հաճելի մոռացության մեջ՝ չմտա-ծելով վոչնչի մասին: Ուստի և, գրոսավայրից յեկող նվագի և խոսակցությունների ձայները նա լսեց հան-կարծակի, այն րոպեին, երբ նա համարյա արդեն դուրս էր գալիս դաշտից: Ի՞նչ... Նորի՞ց մարդիկ... Նորի՞ց նա չի կարող մենակ մնալ... Հոգնած ու հու-սահատ չուռ դալով, Վարոսը վերադարձավ յետ:

Արևն իջավ հեռավոր կապույտ սարերի ուսին, Վարոսի վրա ընկավ արնալիսի մի լույս, որ կարծես կարուտ լիներ կամ թախիծ: Դաշտը լայնարձակ վրա-

վեց հորիզոնական ճառագայթների տակ և դարձավ անծանոթ: Ուշացածի չտապ սլացքով մոտեցավ, ան-ցավ, դնաց քամին, որ կարծես թափառական յերգա-տաց լիներ՝ արևի մահը յեղերդող:

Արահետը, որ անցնում էր վերջալույսից խամ-րած դեղին հասկերի տաք ծովի միջով, ավելի յեր տալերում Վարոսի տիրությունը.—արահետը նեղ եր, մի մարդու համար, մի մենակ մարդու, առանց ուղեկիցների, առանց հետևորդների: Շուրջը դար-մանալիորեն խաղաղ եր և ամայի, իսկ ինքը, Վա-րոսը, կարծես քայլում եր այդտեղով, վորպեսզի ա-վելի խաղաղ լիներ խաղաղությունը, ավելի ամայի՝ ամայությունը և այդ բաղմապատկված անդորրի մեկ մեկ կտոր լիներ դարձյալ ինքը:

Արահետի յերկու կողմերում, մերթ-մերթ հան-գիպում եյին արտի համահավասար մակերեսից վերև բարձրացած միայնակ հասկեր: Արևն ընկել եր նրանց կռուքին, որը չլացուցիչ պայծառ՝ վառվում եր չըր-ջապատի խամրած դեղնության վրա: Ցերբեմն այդ հասկը լինում եր շատ մոտ,—անմիջապես Վարոսի կողքին,— իսկ յերբեմն հեռու, շատ հեռու, ընդ վո-րում, անկարելի յեր լինում վորոշել նրա ճիշտ տարա-ծությունը: Ցերբեմն ամենահեռու թվացող մի վայ-ջուն հասկ հանկարծ դուրս եր գալիս չավիղանց մոտ: Վրա յեր հասնում այն ժամը, յերբ մարդու աչ-քերը չաղվում են դեռ չմեռած լույսի և դեռ չծնված խավարի խառնուրդից...

Վարոսը նայում եր հասկերի միջև գալարվող աննկատելի արահետին և ցրված մտածում: Իր ճա-կատի վրա նա զգում եր հանդչող արևի վերջին լույ-

ը, բայց կարծես չէր համարձակվում նայել նրան։ Հասկերը, որոնց կպչում էր նա քայլելիս, անվտահ խշշում էին արդեն լիքն ու հասուն։ Սրտի թվում էր հավիտենության պես անափ, և Վարոսն արդեն մոռացել էր, թե ինչը յերբ էր մտել այդտեղ։ Թվում էր, թե նա այդ արձակ դաշտով քայլում էր վաղ մանկությունից սկսած, ու դեռ պիտի քայլեր այդքան։ Յեվ նա զոհ էր այդ զգացումից, որովհետև չէջապատի խաղաղ միորինակությունը հանգստացնող կերպով կլանել էր նրան։ Իսկ յերբ արտն աննկատելիորեն վերջացավ և տեղի տվեց բավական տեղ ճզղվող սնդացած, քարքարոտ հողին, Վարոսը, անդորրությամբ պարուրված՝ չնկատեց այդ։ Միայն նրա քայլերը, յերևի արահետից դուրս դալու հետևանքով, անզգայաբար արագացան։ Նրա վոտքերի տակով, իրար հաջորդելով, սկսեցին անցնել մերթ գորշ հողը՝ իր վրա տափակացած արդեն դեղին կանաչով, մերթ հողի տակից դուրս պրծած մի քարաժայռ՝ վողորկ և տեղ-տեղ կարծես ժանգոտ։ Սրագաքայլ անցնելով, Վարոսը չէր նկատում, թե ինչպես հողի ու քարի վոխհարաբերության համեմատ, ջերմանում էին իր ներքանները.—մերթ տաք, մերթ ավելի տաք։

Հանկարծ Վարոսը կորուկ կանգ առավ։ Իր վոտքերի տակ, չէջապատի վերջալույսի մեջ՝ յերկարավուն դիչերով ձգվել էր Ձորի Բողաղը...

Այնտեղ արդեն վաղուց էին մանրիկ կրակները՝ ու մթության մեջ վոչինչ չերևակայելով։ Տեղ-տեղ նրանք ձգվում էին չարքերով, յինթադրել տալով, վոր այդտեղ վոդոց և դանվում, տեղ-տեղ

խոնված էլին անկանոն,—վերև, ներքև, առատ, հատուկենտ։ Թվում էր, թե նրանք մանրիկ կայծեր են՝ դատարկ մթության մեջ քարացած։ Սակայն այդ կրակների միջև, տեղ-տեղ վառվում էր դաղի վորևե մեծ լապտեր, վորը մի կլոր, մեծ սկավառակով լուսավորում էր վոդոցի մի հատված, հայտնաբերում էր խավարում կորած վորևե ծառի կեսը, վայրում էր արդեն քնած վորևե տան մութ ապակիների վրա, կամ ընկնում լուսամուտների փակ փեղկերին և մխանում նրա ճեղքերից յերևացող լույսի յերիզների հետ...

Այդ տեսարանները յերևում էլին դիմացի լանջի վրա, ցած ու ցրիվ, սակավ հատվածներով, վորոնք տարտղնվել էլին մանրիկ կրակներով պլպլացող խավար տարածության վրա։ Իսկ այն լանջի վրա, վորի բարձրում Վարոսն էր կանդնած և վորի տների միջև դտնվում էր նաև իրենը, նա վոչինչ չէր տեսնում։ Դռներն իրենց վերևի նավթի լամպերով, պատուհանները՝ փայլող ապակիներով, փեղկերը՝ լույսերի յերիզներով, չէլին կարող յերևալ։ Միայն մի քանի տեղերում, փայլում էլին գաղի լապտերները սյուների քարձրից և նրանց լույսերի տակ աղոտ յերևում էլին տափակ կտուրների սպիտակավուն քառանկյունիներ, փողոցների սպիտակավուն յերիզներ, ապա նորից կտուրներ ու փողոցներ։ Նրանց միջև, ավելի մեծ, մութ քառանկյուններով, յերևում էլին հայաթները։

Ձորի Բողաղն էր ձգված այնտեղ՝ ձորի քարքարոտ և անմարդ ակղերից մինչև լուսապայծառ ու լայնատարած քաղաքը։ Կարծես լույսերի ու մթության

ը, բայց կարծես չէր համարձակվում նայել նրան։ Հասկերը, որոնց կպչում էր նա քայլելիս, անխնա խշշում էին արդեն լիքն ու հասուն։ Սրտի թվում էր հավիտենության պես անսահման, և Վարոսն արդեն մոռացել էր, թե ինչը յերբ էր մտել այդտեղ։ Թվում էր, թե նա այդ արձակ դաշտով քայլում էր վաղ մանկությունից սկսած, ու դեռ շատ քայլեր այդքան։ Յեվ նա դոհ էր այդ դաժանությից, որովհետև չրջապատի խաղաղ միրինակությունը հանդստացնող կերպով կլանել էր նրան։ Իսկ յերբ արտն աննկատելիորեն վերջացավ և տեղի տվեց բավական տեղ ձգող սնդացած, քարքարոտ հողին, Վարոսը, անդորրությամբ պարուրված՝ չնկատեց այդ։ Միայն նրա քայլերը, յերևի արահետից դուրս դալու հետևանքով, անդադարար արագացան։ Նրա վոտքերի տակով, իրար հաջորդելով, սկսեցին անցնել մերթ դորշ հողը՝ էր վրա տափակացած արդեն դեղին կանաչով, մերթ հողի տակից դուրս ցրծած մի քարաժայռ՝ վոտքիկ և տեղ-տեղ կարծես ժանգոտ։ Սրագաքայլ անցնելով, Վարոսը չէր նկատում, թե ինչպես հողի ու քարի վոխհարաբերության համեմատ, չերմանում էին իր ներքանները.—մերթ տաք, մերթ ավելի տաք։

Հանկարծ Վարոսը կտրուկ կանգ առավ։ Իր վոտքերի տակ, չրջապատի վերջավության մեջ՝ յերկարավուն դիչերով ձգվել էր Ձորի Բողաղը...

Սյնտեղ արդեն վաղուց էին մանրիկ կրակները՝ ու մթության մեջ վոչինչ չերևալով։ Տեղ-տեղ նրանք ձգվում էին չորքերով, յինթադրել տալով, որ այդտեղ փողոց է դանվում, տեղ-տեղ

խոնաված էին անկանոն,—վերև, ներքև, առատ, հատուկենտ։ Թվում էր, թե նրանք մանրիկ կայծեր են՝ դատարկ մթության մեջ քարացած։ Սակայն այդ կրակների միջև, տեղ-տեղ վառվում էր դաղի վորևե մեծ լապտեր, վորը մի կլոր, մեծ սկավառակով լուսավորում էր փողոցի մի հատված, հայտնաբերում էր վհավարում կորած վորևե ծառի կեսը, վայլում էր արդեն քնած վորևե տան մութ ապակիների վրա, կամ ընկնում լուսամուտների փակ փեղկերին և միանում նրա ճեղքերից յերևացող լույսի յերիզների հետ...

Սյդ տեսարանները յերևում էին դիմացի լանջի վրա, ցած ու ցրիվ, սակավ հատվածներով, վորոնք տարտղնվել էին մանրիկ կրակներով պլպլացող խավար տարածության վրա։ Իսկ այն լանջի վրա, վորի բարձրում Վարոսն էր կանդնած և վորի տների միջև դանվում էր նաև իրենը, նա վոչինչ չէր տեսնում։ Դոներն իրենց վերևի նավթի լամպերով, պատուհանները՝ փայլող ապակիներով, փեղկերը՝ լույսերի յերիզներով, չէին կարող յերևալ։ Միայն մի քանի տեղերում, փայլում էին դաղի լապտերները սյուների բարձրից և նրանց լույսերի տակ աղոտ յերևում էին տափակ կտուրների սպիտակավուն քառանկյունիները, փողոցների սպիտակավուն յերիզներ, ապա նորից կտուրներ ու փողոցներ։ Նրանց միջև, ավելի մեծ, մութ քառանկյուններով, յերևում էին հայաթները։

Ձորի Բողաղն էր ձգված այնտեղ՝ ձորի քարքարոտ և անմարդ սկղբից մինչև լուսապայծառ ու լայնատարած քաղաքը։ Կարծես լույսերի ու մթության

խառը մի դետ՝ նա լայն ու խոր հոսում էր դեպի քաղաք, վռվելով այնտեղ և բաժանվելով բազմաթիվ վտակների։

5

Գյումրու հյուսիսում, ուր քաղաքի վերջին տները բարձրանում էին դեպի լայնարձակ դաշտը, քաղաքի անմիջապես սրտնդին, գտնվում էր Ձիթողցոնց Զաբոր կոչվող գրոսավայրը։ Խաղաղ, գեղեցիկ, մի ծառաստան էր այն, դյութիչ, հիանալի մի վարդաբան, ուր ծառերն սակերախիտ լինելու չափ շատ չէին և վարդերը՝ պերճաշուք լինելու չափ առատ։ Ընդհակառակը, արևոտ ու զվարթ մի այգի էր այն, որի այս ու այն կողմում, առանձին-առանձին կանգնած էին նոսրատերև ծառեր, որոնց տակ արևի ու սակերի սրտերը թափվում էին վոսկու և արծաթի խառ անձրևի պես։ Տեղ-տեղ, յերկու առանձին ծառերի արանքում, կանգնած էին վարդի թփերի խիտ չարքերը, իսկ տեղ-տեղ նրանք կանգնած էին առանձին-առանձին։ Մի վոքրիկ, հրաշալի չենք կաք թփերով շրջապատված, մի մեծ, քառակուսի ավազան կար, որ չատրվանի վոխարեն ուներ աղբյուրի խողովակ։ Այգու մի կողմում, սևաքար, ութանկյունի, դմբեթաձոր մի ցամաք աղբյուր կար, որի հարավային պատի տակ չոր, դորշ հողակոչի կաք՝ մինչև արևից տաքացած, խիկ հյուսիսային պատի վրա՝ ամենամանր կանաչ մամուռ՝ սակերից ու խոնավությունից մնված։ Այգու մի այլ կողմում, ուղղակի դեպի վրա, անպատվանդան, մի սևամարմար, քառանկյունի չհրմաքար կար, որի կողքին կանգնած

մեծ ուռենին նրա վրա կախել էր իր տակերը՝ կիսով չափ ծածկելով այն և իր ճյուղերն արտացոլելով նրա մեջ, մինչդեռ մյուս կեսի վրա տիրապետում էր ջեռ արևը։ Խաղաղության վայր էր այդ այգին, ուր յերբեմն խչչում էին այս ու այն կողմում կանգնած առանձին ծառերը և արևոտ կեսորի հաճելի տաք ոդի մեջով անվերադարձ անցնում էր պատահական հովը։

Քաղաքը ներկա էր այգու չուրջը։ Այգու ճախ կողմում, դաշտի բավական ընդարձակ տարածությամբ անջատված, յերևում էր ռանչպարների թաղամասը։ Այդ թաղամասի և այգու միջև, դաշտի մեջտեղով, կարծես իրրև սահմանադիծ, անցնում էր Զորի Բողաղը, վորը թեև բոլորովին չէր յերևում, սակայն վորի ներկայությունն զգում էին բոլորը։ Այգու աջ կողմում, դաշտի ավելի ընդարձակ տարածությունից հետո, յերևում էր կայարանը՝ կանաչ ծառերի և դորշ չենքերի յերկար շղթայով ձգված։ Այգու վերևում, դաշտն իր գեղին արտերով տարածվում էր հեռու՝ մինչև կանաչին տվող ցածրիկ լեռնաշղթան։ Ներքևում, յերկու քայլի վրա՝ քաղաքն էր։ Շոսսեյի մի չատ կարճ, լայն կտոր, այգու մոտից լինում էր ուղիղ դեպի վողոցների բերանը։ Զլինելով անգամ այնտեղ, հենց քառակուսի ավազանի կամ փոքրիկ մակի մոտից, կարելի յեր տեսնել քաղաքի առաջին չենքերն իրենց քառակուսի, անծառ հայաթներով կամ կարմրաքար ու սևաքար ճակատներով, վորովհետև այգին դրանցից չատ բարձր չէր և փոքրիկ զառիվայրը չէր ծածկում դրանք։ Այնուհետև, հեռու, չատ հեռու, փռված էր քաղաքը կեսորի արևի

տակ՝ իր լուսամուտների պսպղացող ապակիներով, յեկեղեցիների վոսկեփայլ խաչերով և նեղիրան ու բարձրահասակ բարդիների սրածայր գագաթներով...

Ցուրաքանչյուր կիրակի, առավոտյան ժամի տասից-տասնմեկից սկսած, քաղաքի բոլոր կողմերից դեպի Զիթողցոնց Ջարոր եյին սլանում կառքերը: Դա քաղաքի այն ղրոսավայրն եր, ուր ղրոսանքի եյին դնում վոչ թե քնքի անող տղամարդիկ կամ սեր անող զույգերը, այլ ամբողջ ընտանիքներ: Իրենց կառքերում նրանք տանում եյին հեչտայեռներ, կրակարաններ, թեյի, ճաշի պարագաներ, ճիշա և տանում եյին նաև խմիչք, գնում եյին նաև դաուլ-զուռնայի խմբեր ու սաղանդարներ, սակայն կանանց ու յերեխաների ներկայությունը մի առանձին, զուսպ յերանգ եր տալիս տղամարդկանց զինարբուքին:

Սլանալով քաղաքի բաղմաթիվ տարբեր փողոցներից, կառքերը մի անընդհատ հոսանքի եյին վերածվում դեպի այգու փոքրիկ վերելքը տանող յերկար փողոցում: Աբևափայլ, սպիտակ փոշին բարձրանում եր քառամբակող ձիերի վոտների տակից և անիվների, վոր ունեյին կարմիր ներկած փայտե, կամ սլըպղացող մետաղե չառավիղներ: Փողոցը լցված եր լինում զվարթորեն մարակող ու մեկ-մեկուց հետ մրցող կառապանների ուրախ կանչերով և կառքերում նըստածների անհոգ ղրույցներով ու ծիծաղներով:

Յերբ վերջապես նվաղում եր ընտանիքներին տանող և դատարկ վերադարձող կառքերի թափորը՝ այգում արդեն տիրում եր ուրախ բազմամարդություն: Ամեն ծառի սավերում, գորգերի վրա, թևերը բաց-

ձերին հենած՝ նստոտած եր լինում մի խումբ, մի ընտանքի կամ մի հավաքույթ: Ամեն թվի մոտ թեժանում եր խորոված թխթխող կրակարանը, ճաշի կավե քուրան կամ վոսկեփայլ հեչտայեռը: Ամեն կողմից,— հետու թե մոտ,— լսվում եյին դաուլ-զուռնայի ճայներ,—ղուսալ, իրար չխանգարող, իրար չխառնվող: Սավերների մեջ բացվում եյին սպիտակ սփռոցներ, վորոնց մի ծայրերը դուրս եյին պրծնում պայծառ արևի տակ և ուրախ ժպտում: Սփռոցների վրա ինչ եկ վոր լիներ, ամենից առաջ լինում եր Գյումրու ավանդական բախին:

Յերեխաները գնում եյին հոտոտելու վարդերը, պահմտոցիկ խաղալու թփերի տակ կամ վազել-բռնել խաղալու դմբեթավոր, ութանկյունի ցամաք-աղբյուրի չուրջը:

Յերիտասարդներն՝ ընկերներով և աղջիկներն՝ ընկերուհիներով, գնում կանգնում եյին յասամանի ու վարդի թփերով, նարդիղի ու մեխակի ծաղիկներով, ռուսամբարի տերևներով չրջապատված տնակի մոտ և սկսում եյին յերազել իրենց մոտ ապագա տների մասին կամ գնում կանգնում եյին քառակուսի, մեծ ավազանի պռունգների վրա և նայում նրա ջրին: Ավազանի պռունգները հավասար եյին դեսնին: Նրա մի կողմից քարե մի քանի աստիճաններ իջնում եյին ուղղակի ջրի մեջ: Աստիճանների դիմաց պռունգին, վորբիկ պատի պես չինված եր մի լայն, բարձր աղբյուրաղլուխ, վորից դուրս եր գալիս մի չատ կարճ և չատ լայն խողովակ: Այնտեղից ջուրն արծաթապայծառ կամարի պես իջնում եր ավազան՝ իր թավշած տեղի չուրջը գոյացնելով նեղ, հետո լայն,

հետո ավելի լայն, բայց հետզհետե մարվող ողակները:

Որվա այդ ժամին, ակամայից հարց եր առաջանում այդ ուրախ ղրոսավայրը ղեկտող յուրաքանչյուրի մեջ.—իսկ ո՞վ եր մնացել քաղաքում... Գուցե իսկապես, աներում բացարձակապես վոչ վոք չեր մնացել, իսկ փողոցներում համարյա վոչ վոք՝ չհաշված անասանելի վշտից մենակությունն վնտրող Վարոսին, վոր թափառում եր միհարկանի փակ խանութների ամայի փողոցներով: Նրան վոչինչ չեր զբաղեցնում, վոչինչ չեր հետաքրքրում: Նրա սիրտն այրում եր այնքան հանկարծակի ընդհատված իր յերջանկության ցավագինորեն մխացող հուշը: Իր սիրան ել եր փակ այդ կարմիր, կապույտ, կանաչ կամ դեղին փեղկավոր խանութներից վորևե մեկի պես, իր սրտից ել եր կախված նույնքան մեծ, նույնքան ծանր մի կողպեք: Յերբեմն միայն, այդ փեղկերն աննկատելիորեն ցնցվում եյին, կարծես ներսում մնացած մի կատու չանդրում եր այն՝ բաց անելու համար: Միայն մի վայրկյան եր տևում այդ, միայն մի վայրկյան եր խռովում նրան այդ ուշ վրա հասած մխքը և նորից ամեն լինչ փակ եր ու անմարդ...

Ցավ խկապես, ի՞նչպես կարող եր Վարոսը մի վայրկյանից ավելի մտածել այն մասին, թե ինքն եր մեղավոր Հեղնարի մահվան մեջ: Ցե՞ վոր դա անհավատալի, անհեթեթ, անտանելի միտք եր:

Ճիշտ է, Վարոսն այն որը չփոթված յեկ փախավ Թուրքական Թաղամասից, բայց փախավ միայն նրա համար, վորպեսզի ուստա Մկրտիչն ու մոլլայի մեծ կինը չտեսնեյին իրեն: Նա ի՞նչ գիտեներ, թե Հեղնարն արդեն այնտեղ եր, իր սպասած դերեզմանում և կարիք եր ղղում Վարոսի պաշտպանությանը: Ցե՞ վոր փախչելով, Վարոսը դնաց կանդնեց բոստաններն մղող անցնող ճանապարհի անմարդ մի վոլորտում, վորպեսզի նախաղղուշացներ ու յետ դարձներ Թուրքական Թաղամաս գնացող Հեղնարին...

Նա յերկար սպասեց այնտեղ,— գուցե անհավիտենական յերկար,— և յերբ նրա ուղեղով անցավ այն զարհուրելի միտքը, թե գուցե Հեղնարն արդեն այնտեղ եր,—իրենց սիրո տանը,—հանկարծ քաղաքի կողմից, Հեղնարի փոխարեն, տեսավ տաղնապահար կերպով դեպի Թաղամաս չտապող կառքերն ու մարդկանց:

Վարոսը համարյա ամեն լինչ հասկացավ: Նեղասրտի պես լինքն ել սկսեց վազել դեպի աղետի վայրը, բայց հանկարծ կանգ առավ: Ո՞ւր և գնում... Բայց անելու համար, վոր լինքն և Հեղնարի սիրեկանը... կամա թե ակամա մատնվելու համա՞ր... Հարկավոր չե: Թող վոչ վոք չիմանա, վոր Հեղնարը Վարոսին և սիրել, թող բոլորն լինանան միայն այնքանը, վոր Հեղնարը սիրել և լինչ վոր մեկին: Ինքը, Վարոսը, հոր փողերը վատնող, անզորձ և աննպատակ սալախանայի անօգուտ ունի,— ամենասև անունը Գյումրիում: Թող ուրեմն վոչ վոք չիմանա, թե անարատ Հեղնարը պայծառ ուսուցչի անկողինն արատավորել և իր նման մի անառակի համար: Թող բոլորն այնպես կարծեն, թե Հեղնարը դավաճանության այդ խայտառակ քայլն արել և այնպիսի մեկի համար, վորը յերել և ավելի լավ մարդ, ավելի լավ դյումրեցի, քան ուսուցչ Մկրտիչը... Գուցե այդպիսով մի քիչ ավելի նվազ լինի

այն թուքը, որ պիտի չպղտոր քաղաքն իր սիրած կնոջ հիշոցի վրա...

Ցեղ Վարոսը վերապարծել էր յետ, մի այլ կողմով քաղաքից դուրս պրծնելու և մինչև աղջամուղջ հեռագարի նման արձակ դաշտերով վազելու համար...

Բայց ինչո՞ւ համար նա այսօր և հիշում այդ ամենը: Ինչո՞ւ համար նա միայն այսօր և այնպես մտածում, ինչ իր ճանապհվելը բոլորովին էլ չէր վարկաբեկի հրաշալի Հեղնարին, որովհետև սերն և դիմաստը, և ամ սիրում ու նախընտրում է կինը՝ նա բարձր և ու աղնիվ՝ չնայած տալտխանային իր անպատիվ կանչանը...

Բայց միրք որ, միակ խանութում մնացած անզոր կատվի յեր նման այդ մխոքը, որ լոկ մի վայրկյան չանդրադարձ էր փեղկերը և նորից անհուսա տպատում: Թախիծի գաւը ժպիտը դեմքին, Վարոսը դիտակցում էր, որ միչ միք իրավունք չէր տա սերին, որ բոլորը, ինչպես միշտ, միակ իրավունքը կտային ամուսնական հավատարմության և միրեն կպատեին հենց տեղնուտեղը:

Սակայն նա չէր ուզում ապանել միչ այն ժամանակ, որ հիմա: Նա պետք է կենդանի մնար: Պետք է մնա կենդանի, և այդ միչ միայն Հեղնարի դամբարանի կենդանի հուշարձանը դառնալու համար, այլև ապացուցելու համար իր հայրենակիցներին, իր յերկրակիցներին, որ սերը չի կարող մեղադրվել:

Նա վազնա Գյումրուց, ուրիշ աշխարհներ կտեսնի և ուրիշ մարդկանց, և յերբ ժամանակներ հետո, իր համաքաղաքացիների ապտերում իջած կլինի առեւ-

թյան կրակին իր հանդեպ, խոկ իր սրտում դեռ նուրբ ցավով կվառվի Հեղնարի սերը, նա կվերադառնա և ձեռքը դնելով իր սիրած վինոջ քարե հուշարձանի վրա, կդառա.— սուրբ և սերը...

Նա կգնա հենց վաղը, կանուխ առավոտյան: Շատ բան որը թուրքական թաղամասի բոլոր բնակիչներն առելությամբ ու քլունդներով դիմաված, հիմնահատակ եյին արել Հաբիբյայի տունը, խոկ այսօր արդեն, ուսատյի խոստացած քառատուներորդ որն և: Այսօր ուսատան անչուշտ վերցրել և այն աև վարագույրը, որ դեռ յերեկ, չինքը քանդելիս, փոված և յեղել դերեզմանի վրա: Հենց այս դիշեր, Վարոսը կգնա տեսնելու Հեղնարի չիրիմը, խոկ վաղ լուսաբացին ճանապարհ կինկնի՝ ինքն ել չգիտենալով, թե դեպի ուր...

Վերջապես անմարդուհյունը հասավ Վարոսի ուղեղին: Ո՞ւր են գնացել իր համաքաղաքացիները վողջներից ու հայրենիներից, խանութներից ու տներից... Անչուշտ ամեն կիրակի նման նորից պվարճանալու.— Զիմողլոնց Զարոր՝ ընտանիքների պրոսավայրը, Զերքեզի Զոր՝ սիրահարների պրոսավայրը, Ալիքսան Արվաճայի տակ՝ քեֆ անողների պրոսավայրը... Ներանցից միչ մեկը չի հիշում, որ այսօր լրանում է ուսատյի խոստացած քառատուն որը...

Մի դառը ժպիտ խաղաց Վարոսի դեմքին մարդկային մոռացկոտության հասցեին, սակայն հանկարծ մի նոր միտք ընդհատեց այն: Վոչ, այդպես ավելի լավ է, հենց այդպես է հարկավոր: Կարիք չկա, որ իր սիրելի Գյումրին քառատուն որ չարունակ հիշի մի տխուր պատահար, կանոնավոր կյանքը վրդովող մի խորթ միջադեպ, ապրի դրանով: Ընդհակառակը, թող

ամենը լի որ նա բաց անի իր արհեստանոցները ու խանութները, ամեն կիրակի զվարճանա իր զբոսավայրերում,—ապրի իր տովորական կյանքով: Ինչո՞վ է այդ կյանքը վատ, հիանալի չե այդ կյանքը և զրան մխայիմի բան է պակասում.—սիրո իրավունքը... Յեթե տարիներ հետո, Վարոան այդ իրավունքն իր հետ բերի Գյումրին, Գյումրին կդառնա անթերի... Այն ժամանակ դուցե ինքն էլ կիրակի որերն իր հոր ու մոր կամ իր ընկերների հետ նստի վառք, դնա Զիլթողցոնց Զարոը և նայի հավուղ-ախպուրի ջրին կամ հոտ քաչի վարդերից ու յասամանիներից...

Վարոսը հոգու խորքից հառաչեց: Իսկ այժմ հարկավոր է հեռանալ: Նա վրնա հենց վաղը, կանուխ առավոտյան...

Դիմացի անկյունից թեքվելով, անմարդ փողոցում յերևաց մի մունետիկ: Վարոսը տեսավ նրան և վայրկենապես կանգ առավ: Նա իր Ոնես հորյեղբայրն եր,—համալ Ոնեսը: Ճիշտ է, նա լի որերի նման չեր հագել բեռնակրի իր ան հագուստն ու համեստը, վորով անքան նման են իրար Բաղդադի, Հալեպի և Դամասկոսի, Պոլսի, Երզրումի և Իզմիրի, Թավրիզի, Թեհրանի և Սպահանի բեռնակիրները, ճիշտ է, Գյումրու բոլոր արհեստավորների նման նա հագել եր կիրակնորյա կապույտ պիջակ, չալվար ու չուխիա, սակայն այժմ, յերբ նա կանգնել եր փողոցների խաչմերուկում, թվում եր, թե բան ունի հաղորդելու և ահա պատրաստվում է բարձրացնել իր հուժկու ձայնը:

Սակայն համալ Ոնեսը, փոխանակ բղավելու, տա-

կուսանքով նայեց անմարդ շրջապատին և քայլեց: Մուսափելով նրան հանդիպելուց՝ Վարոսն արագ թեքվեց մի այլ փողոց և շտապ քայլերով հեռացավ:

6

Պայծառ խաղաղությունն արևով և ուրախությամբ վռնվել է այգու վրա: Վոչ մարդիկ, վոչ նվագարանները, և վոչ աղբյուրն ու ծառերը, չեն արձակում վոչ մի քարձր հնչյուն, վոչ մի խանգարող ձայն: Հավիտենական խաղաղությամբ նետվել է հավուղ-ախպուրի արծաթե կամարը խաղողավիից դեպի ավազան, մեղմագույն բուրումով տարածվել են առուամբարները, յասամանները ու վարդերը, անընկալ խշշոցով անկատելի օրորվում են ծառերի կատարները: Դառը-զուռնաների հանդարտաձահ նվագը չուրջը հավաքված՝ լուռ ունկընդրում են մարդիկ նրանց անբարբառ պատմությունները: Ախտեղ ու աչտեղ, կանաչի վրա, կարծես յերքաղի մեջ, դանդաղ օրորվում և դյումրեցի հարսների կենտատարը: Մանուկներն անդամ, կարծես ձայն չեն արձակում և ամբողջ այդին նման է տեսիլի...

Ցեվ հանկարծ, այդ խաղաղ տեսիլի վրա տարածվում է հուժկու, առնական ձայնը:

— Ալա՛ն... Բուլա՛ն...

Կանգնել է համալ Ոնեսն այգու պռունդին: Կայծակի արագությամբ բոլորի ուշադրությունը լարվում է դեպի նա, լռում է սաղանդարների նվագը, ընդհատվում է ծառերի խշշոցը:

— Գնացե՛ք... Թուրքերո՛ւ... Թա՛ղը... տեսե՛ք... Հեղնար-ախպուրի... հրա՛չքը...

Մարվող հնչյունների հետ միասին՝ վարձեա լուծ-

վում է նաև Ննեսի Կերսպարանքը: Դեռ մի վայրկյան քարացել մնացել է ղվարճացող կիրակնորյա Գյումրին, վորից հետո, համարյա միանգամից, լսվում է հարյուրավոր բերաններից թռած նույն կանչը.

— Ցասո՛ն... Ցասո՛ն... Ցասո՛ն...

Փոչու խուլ ամպերում կորած, խելագարի պես ազանում են արդեն մի քանի կառքեր, սակայն հարկավոր են վոչ թե մի քանի, այլ հարյուրավոր: Բայց նրանք բոլորը վերադարձել են քաղաք և մխայն յերեկոյան դեմ սկսի դան այդի՝ դյումբեցիներին տանելու համար: Մի քանի տղամարդիկ թողնում են փռված լի սիրտը և վոտքով վազում: Նրանց հետևում են բազմաթիվ ուրիշները: Իսկ նրանք, ովքեր յկկել են ընտանիքներով, չտատսով հավաքում են իրենց իրերը, հանձնում են իրենց տղայի կամ դրկից պահպանությանը և չտապում քաղաք՝ կառք ճարելու: Սակայն վոչ վոք չի ուզում մնալ՝ պահպանելու համար դորգերն ու հեշտահեռները, բարձերն ու վրակարանները: Մի քանի փոսերում, այդուց դեպի քաղաք իջնող լանջը, և ապա միհարկանի, արևոտ փողոցը լցվում է վազող, փոչու և քրտինքի մեջ կորած մարդկանց հեղեղով: Ցնդի հանկարծ, դեմից լսվում են բազմաթիվ ամբակների դռփյուններ, ապա յերևում են անձակատոր արշավող կառքեր, կառքեր, կառքեր... Հասնում են կառքերը մարդկային հեղեղին, կայծակի արագությամբ լցվում բերնե-բերան և խակուլն չուռ գալով, սրնթաց անհետանում փոչու և արևի մեջ: Զարմացած վոստիկաննե-րի չվար կերպարանքների մոտով վայլատակում-անցնում են նրանք, կտրում-անցնում են քաղաքը հյուսիսից-հարավ, ապա թեքվելով դեպի հարավ-արևելք

մտնում են բոստանների միջտեղով անցնող ճանապարհը: Բոստանների պատերը սեղմում են նրանց հեղեղը, հեղեղը կորցնում է իր լայնությունը, բայց դառնում է ավելի սրարշավ: Սպառնալով հազար կտոր անել կառքերն ու մարդկանց, փրփրաբերան ձիերը խրտնած վազքով բարձրանում են Թուրքական Թաղամասի լանջով՝ իրենց լծված կառքերը տանելով իրրև թեթև տաշեղներ: Ոդի մեջ սուր չվոցով ֆչչում-անցնում են մտրակները՝ լինչպես հեռվից արձակված զնդակներ: Հասնելով Թաղամասի առաջին փողոցին, անհամբերությունից մթագնած ուղեղով վոմանք ցած են թռչում իրենց վազքը չդանդաղեցնող կառքերից՝ այդ կառքերից ավելի արագ տեղ հասնելու անմիտ ցանկությամբ:

Այնտեղ, ուր դեռ ուրբաթ որը Հարիրայի տունն եր կանգնած, այժմ փռված է մի հարթ և ընդարձակ հրապարակ: Հրապարակի չորս կողմերից գալիս են չորս փողոցներ, վորոնք բերում են անպատասխանելի մոտիվությունից վարանած կառքերի արդեն դանդաղաքայլ ընթացքը: Մարդիկ իջնում են վար և ակնածանքով ու կամացուկ՝ մտնում հրապարակ...

Վոչինչ չկա: Դատարկ է հրապարակը: Միայն նրա կենտրոնում, ուր առաջ Հարիրայի ավազանն եր, այժմ վազում է մի աղբյուր: Զիթողցնոց Զարորի հավուր-ախպուրի նման, դա էլ պուտնդները դեռևս հավասար մի ավազան է, վորի մի պռունգի վրա կառուցված պատանման աղբյուրագլխից հոսում է ջուրը: Այնքան նման է դա հավուր-ախպուրին, վոր կարծես նրա փոքրացրած, ղղալիորեն փոքրացրած ընդօրինակը լինի...

Ցետևից,—չորս փողոցներից,— չարունակ և ա-

ընդհատ, ավելի և ավելի լցվում են վայրկյան առաջ անասպատելին տեսնելու ցանկությունից լռած ու սառած մարդիկ, կանայք, յերխտասարդներ, ծերեր... Տեղ գտնելու համար նրանք համառ հրում են իրենց առջևում կանգնածներին: Իսկ առջևում կանգնածները, անթարթ հայացքներն աղբյուրին հառած, հասկանալով, որ այնտեղ և հրաշքը, վախից ու վարանքից չհն վտահանում մոտենալ: Սակայն չորս փողոցներով հորդում են նորերը, այժմ ավելի համառ կերպով են հրում յետևում կանգնածները,— կարծես դեպի անմահատվելին, կարծես դեպի մահտպատիժ... Ցեղ ամեմա քայլերով՝ առաջինները մոտենում են Հեղնար-աղբյուրին...

Հոսում է այնտեղ անապակ ջուրը: Թափվում է ջուրը Հարիրայի նախկին ավազանի մեջ, բայց հակառակ հավուր-պատշաճի, փոխանակ հավաքվելու այնտեղ, խկուն գետնի տակ է ծծվում մի փոքրիկ անցքով: Վո՞րն է այդտեղ հրաշքը... Աղբյուր՝ գերեզմանի վրա,—դա նորություն չե Դյումբլում: Ցեթե չանջով բարձրանալիս մարդիկ չմտանեն Թուրքական Թաղամաս, այլ շարունակեն իրենց ճանապարհը դեպի դաշտ, դեպի հեռու դերեզմանոց,—չլսեմ աքաղերի մեջև նրանք կենդանեն բազմաթիվ այնպիսինները, որոնց քարձր հուշարձանների դունավոր քարերից դուրս են ցցվել աղբյուրի խողովակները: Ճիշտ է, դրանցից վոչ մեկից ջուր չի գալիս, սակայն այդ հարկավոր էլ չե, վորովհետև գերեզմանոցում ո՞վ պիտի խմի ջուրը...

Աղբյուրներ կան նաև քաղաքում՝ այս յեկեղեցու հայաթի պատի վրա, այն փողոցի տների չարքի մեջև, վոր կառուցված են ի հիշատակ այս կամ այն մարդու՝ նրան սիրող կամ հարգող վորևե մերձավորի ծախսով: Դրանցից արդեն, հոսում է նույն վճիտ ջուրը և քարի վրայից դրերը վոչ են անում յուրաքանչյուր խմողի՝ վողորմի տալ մեռածի հոգուն...

Յետևից գալիս են անվերջ ու անվերջ, մարդկային ողակը Հեղնար-աղբյուրի չուրջը սեղմվում է ավելի ու ավելի: Ցնվ հանկարծ, առջևից գնացող մեկը ցնցվում է և կանգ առնում, նրա հետ միասին կանգ են առնում նաև մյուս բոլորը: Նա չսիխան դեպի ծոծրակը թեքելով, արդեն կարդում է աղբյուրի ճակատին քանդակված գրերը.

«Ամեն մե վնիկ իրան մարդու ախպուրն է. ուրիշ հեչ մեկն իրավունք չունի խմելու նոր ջրեն»:

Մարդիկ զարմացած նայում են իրար՝ լուռ ու մտախոհ: Մի՞թե այդ հասարակ, բոլորին հասկանալի և բոլորին պարտադիր որենքի մեջ է Հեղնար-աղբյուրի հրաշքը...

Զրավարարված հետաքրքրությունից և չլուծված զաղտնիքից մոլոր պտտվում են փոչոտված ու քրտնած մարդկանց հայացքները: Վերջապես նրանցից մեկը հոգնած մի հոգոց արձակելով հանում է չսիխան, թաչկինակով սրբում և ճակատը և Հեղնար-աղբյուրի մի քանի քարե աստիճաններով իջնում է ավազան՝ խողովակին մոտենալու և ջուր խմելու համար: Բայց հաղիվ վոտքը վերջին աստիճանից ավազանի քարե հատակին դրած, նա դունատվում է մեռելի նման և բերանքսխմար ընկնելով աղբյուրի առջև, բացականչում է սարսափահար.

— Մեղա՛, մեղա՛ քեզի, տե՛ր, յես սրբազղծու-

Թուն ենել չեյի ուղե...Ջևռեյի, տե՛ր, մենձ և քու հրաչքդ...

Ջարհուրած՝ բոլորը նայում են խողովակին: Հաղիվ մարդը ավազան իջած՝ ջուրը կտրվել է: Տեսնում են բոլորը, թե վինչպես աստված ինքն և իր հրաչքով հաստատում պայծառ ուսուցչի քանդակած խոսքերը, վոր ամենն մե վինիկ իրան մարդու ախպուրն է, ուրիշ հեչ մեկն իրավունք չունի խմելու ենոր ջրեն...

Մարդը, դողացող ծնկներով, իր հաղիվ չկատարած սրբապղծությունից սարսափած՝ դուրս է գալիս ավազանից: Ջուրը, Հեղնար-աղբյուրի անարատ ջուրն անմիջապես նորից ակում է հոսել...

Վոչ վոք չի համարձակվում կրկին ստուգել աստծու հրաչքը: Սակայն վոչ վոք չի ուզում նաև հավատալ իր աչքերին, վորոնք, բացվելուց ի վեր, չերքնք չեն տեսել և վոչ մի հրաչք... Ցեվ ահա, վերջապես մի ուրիշը վճռում է մոտենել ավազան... Ցերբ նորից կտրվում է ջուրը, այդ մարդու հետ միասին հրապարակում հավաքված բոլորը,— թե հայ, թե թուրք, թե հույն,—ծունկ են չոքում և բոլորը միասին ծեծում են իրենց կուրծքը.

— Մեղա՛... Մեղա՛... Մեղա՛...

Մարդը վախից թուլացած իր վոտքերը հաղիվ է դուրս քաշում հրաչք-աղբյուրից: Գունատված չըրթունքների հառուչիենտ չչուկներով լուրն անցնում է չեռևում կանգնածներին, վորոնք դեռ անկարող են վորևե բան տեսնել: Նրանք առաջ են խոյանում, առաջինները հլու տեղի չեն տալիս նրանց, վորպեսզի բոլորը տեսնեն, թե վինչպես աստված գալիս և հաստատելու ընտանիքի արբունքյան հին որենքը և անձամբ պատասպարելու մարդկանցից արդեն դատապարտված այն անառակին, վորը զանց և առել այդ որենքը...

Ցեվ նորից ու նորից, չարունակ ավելի մեծ տագնապով և ավելի մեծ ահ ու դողով, մարդիկ ստուգում են աստծու հրաչքը և հեռանում են դեպի չետին չարքերն այն խոշ ղղջումով, վոր հանդգնեցին ցանկություն ունենալ՝ սեփական աչքերով հրաչքը տեսնել... Ցեվ գնում են նրանք, վորոշելով հենց հետևյալ կիրակի՝ իրենց զոհը մատուցել Գյումրու հռչակավոր սուրբ աստվածածին չկեղեցուն և զոհի արյունը նրա սրբատաչ պատերին քսելով՝ քավել իրենց թերահավատության մեղքը...

Սարսափից չռած աչքերով մի կին, ավազանում չոքած, հայացքը դեպի ցամաք խողովակը դարձրած, անլսելի մրմնջում է.

— Ներե, տեր աստված, ներե ընձի, իմ մոքես ննպես է անցե, թե Հեղնարի մեղքն ննքան ել մենձ չե...

Նայում են հավաքվածները նրան, ու թեև չեն լսում նրա խոսքերը, բայց տեսնում են նրա դղջումը: Ցեվ յերբ նա դուրս է գալիս, նրա վոխարեն ազերսի չե իջնում մի տղամարդ, վորը նույնպես, իր հոգու խորքում չատ չի մեղադրել Հեղնարի սրբեկանին... Ու բոլոր նրանք, ովքեր ավազան են իջնում մեղքի բեռն ուսերին, դուրս են գալիս այնտեղից մաքրված և աղբյուրի ճակատի խոսքերն իրենց հոգու ամենախոր խորքում անջնջելի կերպով հավիտենապես դրոշմած...

Աղբյուրին են մոտենում Հեղնարի յեղբայրը, ընկերուհին, ազգականները... Սակայն վայրկենապես ցամաքող խողովակի վերևից որենքն ասում է նրանց, վոր ամուսնացած կնոջ միակ տերն այլևս նրա ամու-

աչքն է և նրա վրա իրավունք չունի անգամ հարազատ եղբայրը...

Ցնծ աղբյուրի ճակատի կարմիր քարի վրա անջնջելիորեն քանդակված օրենքի այդ նոր հաստատումը տեսնելով, բոլոր հավաքվածները նորից ծունկի չեն գալիս հրաշքի առաջ...

7

Արևն իջավ: Այժմ նրա վերջալուսային ճառագայթները հավաքվածների վրա ընկան ավելի հեռվից և ավելի չեզոքի: Չնայած անցել էր բավական ժամանակ, բայց դեռ վոչ վոք Թաղամասից չէր հեռացել: Ընդհակառակը, ավելացել էին ուրիշ չառերը, վոր յեկել էին Նվիրական Արվաչայի ափից, դեղեցկատեսավ Զերքեզի Զորից, կամ քամվել էին քաղաքից: Փողոցներն ու նորաբաց հրապարակը, վոր դեռ քիչ առաջ մի կերպ տեղավորել էին հավաքվածների բազմությունը, այլևս անկարող էին ընդդիմել բոլոր նրանց: Այժմ ամբողջ Թուրքական Թաղամասը վերածվել էր հրաշալի ապացույցի հանդեպ համրացած մարդկային ծովի: Նրանց վխտացող բազմության կենտրոնում, վճիտ ու խաղաղ՝ հոսում էր վոսկրիկ, վոչնչով աչքի չընկնող աղբյուրի ջուրը: Սակայն մի իսկական հրաշք,— տեսանելի և չոչափելի,—մարդկային ձեռքի այդ սովորական կատարվածքը դարձրել էր մեծ և սուրբ: Համատարած լուռությունը լավատուն կերպով ապացուցում էր այն խոր ակնածանքն ու վախը, վոր զգում էին հավաքված բոլոր մարդիկ:

Հանկարծ, ինչպես վորոտ այդ լռության մեջ, Թաղամասի դեռ հեռու ծայրից, լսվեց մարդկային ինչ

վոր վկաախելագար ձայն, վոր մոտենում էր զարմանալի արագությամբ: Կարծես մեկը վախչում էր սպանողների ձեռքից կամ ինքն էր արշավում՝ սպանելու: Այդ անհասկանալի յեկվորի հանդեպ մարդկային ծովը ճեղքվում էր կարծես թրով և նա անարգել վազում էր դեպի այդտեղ, դեպի Հեղնար-աղբյուրը: Մոլեղնած և իրեն կորցրած՝ թվում էր, թե նա հայհոյում էր ամենամեղավոր բառերով, սակայն վորևե բան հասկանալ նրա անկապ բառերից՝ անկարելի էր:

Դեռ նախքան նրա հայտնվելը՝ անհասկանալի կերպով, դուցե զարմանալի բնազդով, բոլորն ղգացին, վոր այդ նա յե,—Հեղնարի սիրեկանը: Ցնծ դեռ հագիվ նա հրապարակ մտած, մարդիկ նրա առջև բաց արեցին մի նեղ և յերկար ճանապարհ՝ մինչև Հեղնար-աղբյուրը:

— Ո՞ւր ե,—աղաղակեց նա վոչինչ չտեսնող աչքերը հածելով չորս կողմ,— ո՞ւր ե, ցուց տվեք, յես ձեր բոլորի, յես ձեր ծնողների, յես ձեր զավակների, յես ձեր... Վո՞վ գիտե թե ամմեն կնիկ իրան մարդու ախպուրն ե... Սերն ե տերը, վոնչ թե մարդը... Ցո՛ւց տվեք ախպուրը... Ցես պիտի խմե՛մ ենոր ջրեն՝ մինչև կշտանամ... Ի՛մա ե սերն ել, ջո՛ւրն ել... Սերն ասսանկից ե, սե՛րն ե իրավունքը...

Առանց չուրջը նայելու, նա արագ առաջ գնաց դեպի աղբյուրը՝ ղղղված, վոչոտված, քրտնած, ծանր հևոցով: Թվում էր, թե ահա նա կհարձակվի վորևե մեկի վրա և կխեղդի: Բոլորը սարսափած նետվեցին աջ ու ձախ և նրա առջևի արահետը վերածվեց պողոտայի: Նա հասավ աղբյուրի պռունդին, կանդնեց,

նայեց մի վայրկյան, ապա վստահ քայլերով իջավ ափաղան...

Ինչպես բոլորի հանդեպ՝ ջուրն անմիջապես կտըրվեց...

— Հեղնա՛ր,— բացականչեց Վարոսը:

Հրապարակով սարսուռ անցավ:

— Ցե՛ս եմ, աղիղ,—պոռթկաց ծանր ճիչը Վարոսի չանթահար յեղած կրծքից:—Ձե՞ս ճանչե ընձի...

Ցամաքած աղբյուրի խողովակից ընկավ վերջին կաթիլը: Վարոսը տարտամ կերպով ճակատը չոյեց և անխոսափ հայացքով նայեց չուրջը... կարծես նոր մի-այն ըմբռնեց այն, որ կատարվեց անհավանականը, որ աստված ինքն իր բացորոշ հրաշքով մերժեց սիրո իրավունքը և հաստատեց ընտանիքի սրբությունը...

— Ցա՛,— չընկալ նա ահից ցնցվելով:— Ջուրը ցամքավ...

Անհաչիվ դեմքեր, առանց վորևե արտահայտության՝ նայում էին նրան: Վարոսն իր չվար հայացքով կարծես ողնություն եր հայցում նրանցից, ստանալով միայն անտարբերություն: Նրան ապշեցնում եր այն, որ վոչ վոք վոչնչի չեր ձեռնարկում, վոչ վոք դեմնից քար չեր բարձրացնում՝ չանսատակ անելու իրեն: Անշուշտ այդ ավելի լավ կլիներ, քան այդ բուռթ անչարժությունը:

Վարոսը նորից նայեց աղբյուրին, անհաստատ քայլով մոտեցավ, ձեռքը դրեց փայլուն խողովակի վրա և սկսեց աննպատակ չոյել: Ապա հանկարծ,—թե բոլորի և թե իր համար անապասելի կերպով,—ընկավ ծունկն ի վար և դոռաց.

— Մեղա՛ քեզի, տե՛ր, մեղա՛ քեզի, Հեղնա՛ր...

Կարծես մի մեծ մտրակ չվոցով խփեց հավաքվածների վրին, անցավ:

— Մեղա՛ քեզի, տե՛ր,— կրկնեց Վարոսը և ձեռքը տանելով դեպի ոճիքը, պատռեց, վար քաշեց վերնաշապիկն ու ներքնաշապիկը:—Մեղա՛ քեզի քու սխալված հողածնվիդ: Ցես նեպես գիտեի, թե դուն սիրուն իրավունք կուտաս, մեղա՛ քեզի, ասպա՛ծ...

Նա չոքչոք մոտեցավ ավազանի պռունգին, նրա ճակատը համարյա հպվեց աղբյուրաղվխի քարին և նա շարունակեց.

— Մեղա՛ քեզի, Հեղնա՛ր, յես պատճառ եղա, որ դուն հոդով-մարմնով կորիս... Մեղա՛ քեզի, աղի՛ղ, որ մարմնիդ ես պղտի ջրի տակն ե, հոդիդ են մենծ կրակի վրա...

Ցեվ վոտքի կանգնելով՝ կուրծքը բաց, առանց գլխարկի, նա յետ նետվեց ցամաք խողովակից.

— Թողութի՛ւն քեզի, Հեղնար, որ իմ դժոխքային սերս ընդունեցիր, թողութի՛ւն քեզի, աղիղ, որ մե գիշերվա եկար ու մարդասպանության գործն ընձի սորվեցուցիր...

Ապա յերկյուղածորեն համբուրելով ցամաք ջրի փայլուն մետաղը, նա կերկերաց.

— Ցես բոլոիդ վոտներով Ցերուսաղեմ կերթամ, Հեղնա՛ր, Քրիստոսի գերեզմանեն թողութուն կխնդրեմ իմ ու քու երած չենելիքի հըմար...

Ապա արագ-արագ վոտներից հանելով կոշիկներն ու գուլպանները, նա յետ դարձավ, վորպեսզի դուրս գա և անմիջապես իր ճանապարհն ուղղի դեպի սրբազան քաղաքի անյերևակայելի հեռուն... Բայց Ցերա-

նայեց մի վայրկյան, ապա վստահ քայլերով իջավ ափ-ափաղան...

Ինչպես բոլորի հանդեպ՝ ջուրն անմիջապես կտըրվեց...

— Հեղնա՛ր,— բացականչեց Վարոսը:

Հրապարակով սարսուռ անցավ:

— Ցե՛ս եմ, ազիզ,—պոռթկաց ծանր ճիչը Վարոսի չանթահար յեղած կրծքից:—Ձե՞ս ճանչե ընձի...

Ցամաքած աղբյուրի խողովակից ընկավ վերջին կաթիլը: Վարոսը տարտամ կերպով ճակատը չոյեց և անխոստ հայացքով նայեց ջուրջը... Կարծես նոր մի-ատմ ըմբռնեց այն, որ կատարվեց անհավանականը, որ ատոված ինքն իր բացորոշ հրաշքով մերժեց սիրո իրավունքը և հաստատեց ընտանիքի սրբությունը...

— Ցա՛,— չընջաց նա ահից ցնցվելով:— Ջուրը ցամքավ...

Անհաչիվ դեմքեր, առանց վորևե արտահայտության՝ նայում էին նրան: Վարոսն իր չվար հայացքով կարծես ոգնություն էր հայցում նրանցից, ատանալով միայն անտարբերություն: Նրան ապշեցնում էր այն, վոր վոչ վոք վոչնչի չէր ձեռնարկում, վոչ վոք դեանից քար չէր բարձրացնում՝ չանատակ անելու իրեն: Անշուշտ այդ ավելի լավ կլիներ, քան այդ բութ անշարժությունը:

Վարոսը նորից նայեց աղբյուրին, անհատատ քայլով մոտեցավ, ձեռքը դրեց վայրկյան խողովակի վրա և սկսեց աննպատակ չոյել: Ապա հանկարծ,—թե բոլորի և թե իր համար անսպասելի կերպով,—ընկավ ծունկն ի վար և գոռաց.

— Մեղա՛ քեզի, տե՛ր, մեղա՛ քեզի, Հեղնա՛ր...

Կարծես մի մեծ մարակ չվոցով խփեց հավաքվածների վրա, անցավ:

— Մեղա՛ քեզի, տե՛ր,— կրկնեց Վարոսը և ձեռքը տանելով դեպի ոճիքը, պատռեց, վար քաշեց վերնաշապիկն ու ներքնաշապիկը:—Մեղա՛ քեզի քու սխալված հողածնիդ: Ցես ենպես գիտեի, թե դուն սիրուն իրավունք կուտաս, մեղա՛ քեզի, ասպա՛ծ...

Նա չոքչոք մոտեցավ ավազանի պռունգին, նրա ճակատը համարյա հպվեց աղբյուրաքղվի քարին և նա շարունակեց.

— Մեղա՛ քեզի, Հեղնա՛ր, յես պատճառ եղա, որ դուն հոդով-մարմնով կորիր... Մեղա՛ քեզի, ազի՛զ, որ մարմնիդ ես պղտի ջրի տակին և, հոգիդ են մենծ կրակի վրա...

Ցեվ վոտքի կանգնելով՝ կուրծքը բաց, առանց դլխարկի, նա յետ նետվեց ցամաք խողովակից.

— Թողութո՛ւն քեզի, Հեղնար, որ իմ դժոխքային սերս ընդունեցիր, թողութո՛ւն քեզի, ազիզ, որ մե դիչերիս եկար ու մարդասպանության գործն ընձի սորվեցուցիր...

Ապա յերկյուղածորեն համբուրելով ցամաք ջրի վայրկյան մեռադը, նա կերկերաց.

— Ցես բոլրիկ վոտներով Ցերուսաղեմ կերթամ, Հեղնա՛ր, Քրիստոսի դերեզմանեն թողութուն կխնդրեմ իմ ու քու երած չենելիքի համար...

Ապա արագ-արագ վոտներից հանելով կոշիկներն ու գուլպանները, նա յետ դարձավ, վորպեսզի դուրս գա և անմիջապես իր ճանապարհն ուղղի դեպի սրբազան քաղաքի անյերևակայելի հեռուն... Բայց Ցերա-

նոսի մի ջնեկ յեղբայր Գեղամը, արյունով և ապա ողով թաթախված դանակը ձեռքին, կտրեց նրա առաջը.

— կեցի... Քու Ցերուսաղեմդ ենքան ել հեռու չե...

Վարոսը կանգ առավ և առանց դիմադրելու, բայց և առանց հպարտության՝ իր մերկ կուրծքը դեմ արավ վրիժառուին: Ուժգին թափով վար իջեցնելու համար՝ Գեղամը դանակը վեր բարձրացրեց: Բայց նույն րոպեյին, հայրական մի ձեռք, յետևից բռնեց նրա թևը...

— Մի՛ եննե, ողո՛ւլ,—իր խաղաղ ձայնով խրատեց ուստան.—Թող երթա: Աստու քաղաքն Երվըցոզլի ճամբեն չեն բռնե...

Ցեվ ապա ճանաչելով յերիտասարդի ձեռքում բռնած դանակը, նա սխուր ժպտաց և կարծես ափսոսանքով՝ դլուխն որորեց.

— Ինչի չե՞մ ըսե, ողո՛ւլ, որ եդ դանակին իրան ամմեն չարութունը դարտըկել և, եդոր մեջ մեննակ բարին և մնացե: Եդ դանկով մարդ չի սըպանվի...

Ապա դառնալով դեպի Վարոսը, անխոս, առանց հնչյուն անելամ արձակելու՝ ձեռքով արեց.—դնա...

Ցեվ Վարոսը դնաց:

Ցերբ նրա կորաքամակ, կարծես ծերացած, դըլխարաց ու բորբիկ, կխամերիկ ու փոչոտ կերպարանքն անհետացավ, ուստան խաչակնքվեց, դանդաղ քայլերով իջավ ավազան, մոտեցավ խողովակին և բոլորի աչքի առաջ խմեց հրաշք-աղբյուրի ջուրը... Խմեց, հանեց չափխան, յետ տարավ չուխայի փեչը, վերցրեց դոտուց կախված և իր ներքևի ծայրով համարյա դետնին քավոդ բաղդադի թաշկինակը, իր պայծառ ճակատի վրայից սրբեց քրտինքի մարգարիտները և մի անդամ ևս նայելով հոսող անապակ ջրին՝ նույն դանդաղ քայլերով դուրս յեկավ ու դնաց...

Բոլորը նայեցին նրա յետևից և տեսան, թե ինչպես խաղաղ ու վեհ՝ հեռանում եր բարձրահասակ նեղիբան, աղբյուրների հուչակավոր վարպետը...

Ցեվ յերբ նրա դնալուց հետո բոլորը միանդամից նորից չուռ յեկան դեպի աղբյուրը՝ հրաչքը վերացել եր լսպառ և ջուրը ցամաքել եր ընդմիշտ...

8

Ցեկավ քրեական ու բժշկական քննություն, և տեսնելով բոլորովին անջուր մի աղբյուր, պատահած դեպքն արձանագրեց իրրև անհասկանալի պատճառների դրդված թյուրատեսություն:

9

Ցեվ մնաց մի սովորություն: Փողոցներում, թե տներում, քեֆի թե աշխատանքի ժամանակ, աղբյուրների հուչակավոր վարպետին բարևելուց հետո, դյումրեցիները մի պահ նայում եյին նրա յետևից և մրմնջում.

— Պայծառ մնաս, ուստա Մկրտիչ...

ՎԵՐՋԱԲԱՆ

1

Այն լանջի վրա, ուր առաջ քաղաքի Թուրքական թաղամասն էր ընկած, այժմ վոչինչ չկար: Թեև ներքևում առաջվա նման վուված էին բոստանները, ապա լայն ու հեռու տարածված էր քաղաքը, թեև վերևում առաջվա նման ձգված էր ընդարձակ դաշտը, իսկ նրա պռունդին՝ կապուտով մշուշված Ալագյազը, թեև հենց լանջի մոտից, նորից սկսվում էր հունական թաղամասը,—թեև ամեն ինչ թվում էր կարծես հավիտենապես իր տեղում հաստատված, բայց Թուրքական թաղամասն այլևս գոյություն չուներ: Սրճարկ բլրալանջի վրա, վորի մեծ մասը գրավել էր մի ընդարձակ հարթ հրապարակ, բուսել էին խոտեր ու ծաղիկներ: Պայծառ ցերեկով այնտեղ զնացողի աչքին նախ և առաջ խփվում էր այն սպիտակությունը, վորն առեղծվել էր ոչոչ ծաղիկների սպիտակ թերթերից: Ծուխ կանողնել էին ոչոչները իրենց դեղին, ուռուցիկ գլխիկներով և սպիտակ, հորիզոնական թերթիկներով: Թվում էր, թե այդ համատարած սպիտակությունը մի տխուր հիշատակ է՝ վուված անդարձ հեռացածների անդառնալիորեն ջնջված բնակատեղի վրա:

Սակայն հետո, յերբ անցորդը կամ այցելուն վարժվում էր առաջին տպավորությանը՝ սկսվում էին նկատվել նաև մանրամասնությունները.— հրապարակի չուրջը, ուր հողն ավելի քարքարոտ էր, ոչոչները տեղի էին տվել դեղին անթառամներին: Նրանց բաղմաթիվ մանր ծաղիկներից կազմված տափակ գլխիկները խիտ բռնել էին տարածությունը, սակայն նայելիս դժվար էր լինում վորոշել.—մեռա՞ծ էին այդ անթառամները, թե՞ կենդանի, վորովհետև նրանք միշտ դեղին էին, նրանց կոթերը միշտ դունաթափ կանաչ, համարյա գորշ, և նրանցից միշտ բուրում էր վչրվածծաղի հոտ: Անթառամների հետ մխաեղ՝ բուսնել էր նաև անանուխը, վորն իր գորշ յերանգով և տերևների ձևով այնքան էր նմանվում անթառամի թիլիկին, վոր կարծես նույնը լիներ՝ առանց ծաղկի: Բայց նրանից բուրում էր մի ուրիշ հոտ, վորը միևնույն ժամանակ համ էր հիշեցնում:

Ուշադիր նայելիս վոչ միայն հրապարակի չուրջը, այլև բուն հրապարակում, կարելի յեր տեսնել բույսեր, վորոնք առաջ չեյին նկատվում: Ոչոչների սպիտակ ծածկոցի տակ, գետնին ընդհուպ՝ ծեփ փռվել էր ճնճղուկաչարը, վորն այդպես էր անվանվում ուտելի լինելու պատճառով: Դա մի վոտքիկ կանաչ էր՝ հողից անմիջապես դուրս յեկած միքանի թարմ-կանաչ, ձվածիր տերևներով: Ճնճղուկաչարի հետ միասին՝ բուսել էր նաև գառան խնձորը, վորի գնդաձև գլխիկները ա-

մեն կողմից չրջապատված էին դունատ-վարդագույն կամ դունատ-կապույտ մանրիկ ծաղիկներով: Արևն իր հանդարտ պայծառությամբ տարածվել էր բլրալանջի ու նրա հրապարակի վրա: Ցեվ չէթե նույնիսկ արևի համատարած լույսի տակ անկարելի էր նկատել հին բնակատեղի վորևե հետքը, ապա այդ բանը պարտադիր էր մի բույսի, վոր կոչվում էր սատանի չափաղաղ,—սատանայի ապրանք: Բույսը բաղկացած էր մի կամ չերկու հակադարձան տերևից, վորը փռված էր լինում հողի վրա: Թվում էր, թե քամին մի վիթխարի ծառից պոկել էր նրա դեռ առողջ ու կանաչ տերևները և թափել դետնին: Ցերբ անցորդը կամ այցելուն կռանար և չետ տաներ սատանայի ապրանքի լայն ու մեծ տերևը, նրա տակ կնկատեր հին թաղամասի վորևե հանդչող հետքը.—կամ լինչ վոր պատի լիովին չքանդված հիմք, կամ վորևե մայթից դեռ մնացած սալաքար, կամ պարզապես փչրված ավազի մի բլկոր...

Սատանայի ապրանքների չուրջը, անխուսափելիորեն, բուսնում էին չեղան լեղու կոչվող տերևները, վորոնք կարծես այդ մեծ տերևների մանրացված տեսակը լինեին՝ սակայն վողորկ չերեսով ու ջղուտ: Ասվում էր, թե չեղան լեղուն բուժիչ հատկություն ուներ՝ չերբ այն կապում էին վերքի վրա: Բայց թաղամասի ավերվելուց ի վեր՝ նրանք չէին լինել սատանայի ապրանքների տակ թաղնված և վոչ մի հետք...

Հողի տակից տեղ-տեղ դուրս ցցված ժայռերի հարավային կողմերում՝ ուր միշտ արև էր՝ բուսել էին ուրիչ բույսեր, իսկ հյուսիսային կողմերում՝ ուր միշտ սառն էր՝ բուսել էին ուրիչ բույսեր: Արևի տակ կանգնել էր բարձր ավելուկը՝ կարմիր ցողու-

նով՝ վոր չեղեգնի չեր նման, և կանաչ տերևներով՝ վոր բոնի կպցված էին նման: Ցողունի ծայրին արդեն հասել էին ժանդի գույն ունեցող ականները: Ավելուկների հետ կանգնել էին սուր փչերով ծածկված տատասկները և աղըջրանք կոչվող բույսը, վորն ուներ չան ականջների նման կախ, դեղնավուն-սպիտակ ծաղիկներ՝ խոր բաժակներով ու լայն ծաղկաթերթերով և թունավոր էր համարվում: Իսկ սառների մեջ, դետնին ընդհուպ, բուսել էր ոձի ծաղիկն իր զարմանալի թարմ-դեղին դլխիկով: Ոձի նմանվում էր նրա կոթը, վոր վողորկ էր, ձիլ ու անամեջ, և չերբ կոտրվում էր, դուրս էր տալիս մի սպիտակ կաթիլ.—չերևի ոձի կաթը: Սակայն սառների ու խոնավության իսկական բույսը չրակոտեմն էր, վոր բուսնում էր թաց տեղերում և ուտելի չեր համարվում: Նա ուներ խորը կտրատված տերևներ և հասունանալիս՝ չատ մանր, սպիտակ ծաղիկներ: Սառների և խոնավության իսկական բույս էր նաև բալականին բարձր այն թուփը, վորն ուներ ոտար անուններ, սակայն թե՛ ոտար լեզուներով, թե՛ հայերեն՝ հիմար բույս էր նշանակում: Նա ուտելի չեր, սակայն ասվում էր, վոր հիմարներն են ուտում այդ բույսը, կամ ուտողները հիմարանում են: Նա մուգ, թարմ-կանաչ դույն ուներ, միչտ սառն էր և չրով հագեցած: Բավական էր այն պոկել արմատից, վորպեսզի ընդհատ ցցված կոթերն իսկույն թալկանային և վերածվելին կանաչ փալասի:

Բլրալանջի այն տեղերում, ուր այդ բույսերից և վոչ մեկը չէիր, գետինը ծածկված էր չամրասնց մանր վանաչով.—կարծես մամուռով կամ կարծես ներկված լիներ: Ախտեղ, հատ ու կենտ, բուսնում էր

մեկան սասնածաղիկն իր չյուղային բարակ կոթով, մաղային բարակ ճյուղավորումներով և չափազանց մանր, սպիտակ ծաղիկներով, վորոնք դնդաձև շաղ էին յեկել նրա վրա: Բույսը հեռվից մշուշի, ամպագնդի կամ սասնափրփուրի տպավորություն էր թողնում: Ցերբ մարդիկ լվացվում էին նրա ծաղիկներով՝ ծաղիկները վրփուր էին տալիս:

Սակայն վորքան էլ բազմազան լինեին խոտերն ու ծաղիկները բլրալանջի և նրա տափակ հրապարակի վրա, այնուամենայնիվ այնտեղ տիրապետողն ոչխարների համատարած սպիտակությունն էր՝ փռված լուռ ու խաղաղ: Հրապարակի վրա, ամեն կողմից ծփում էր նրա սպիտակությունը, վորը գնում էր չորս կողմից, հասնում հրապարակի կենտրոնը և այնտեղ աղատ թողնում մի քառակուսի փոքրիկ տարածություն: Քառակուսու չուրջն արդեն բռնել էին ուրիշ ծաղիկները, իսկ մեջտեղում կանգնած էր ցամաքած Հեղնար-աղբյուրը...

***

Ցերբ Գալուստը բարձրացավ բլրալանջ՝ ցրվեցին նրա աչքի կապակները, թե նա դուրս չկարողանա պըրծնել իր մոր անվան աղբյուրը: Շրջապատի ամայության մեջ աղբյուրի պատառ փոքրիկ գլխարարը մի կառուցվածքն էր և այն աչքի էր ընկնում դեռ հեռվից: Հաճախ բլրալանջով դեպի քաղաք իջնող սայլերից գյուղացիք նկատում էին աղբյուրը և վազում ջուր խմելու: Սակայն տեսնելով այն ցամաքած, նրանք նայում էին հիասթափությամբ, իսկ յերբ կարդալ գիտեին և ընթերցում էին գլխագիրը՝ ապա նաև տրաքուսանքով, և յետ դառնալով, վազում էին արդեն

բռատանների մեջտեղի ճանապարհն իջած իրենց տայլերի յետևից:

Գալուստն ուրախացավ աղբյուրը հեշտությամբ գտնելու համար, բայց և խիստ վարանեց, կանգ առավ: Դուցե ավելի լավ կլիներ այն գտնել մի քիչ ավելի ուշ, յերբ նա կարողանար տիրապետել իր վրդոված հոգուն: Ձե՞ վոր այնտեղ կանգնած եր իր հիշողության պատկերներից վազուց ի վեր ընկված մոր ճնշավոր դերեզմանը...

Գալուստն առաջացավ զանգվածաբար: Անցավ ոչխարների միջով՝ աչքերը մշտ դեպի այնտեղ,—աղբյուրը: Ցերբ հասավ ոչխարներից բավ քառակուսուն՝ նորից կանգ առավ և նայեց:

Աղբյուրի մի կողմում բռնել եին կարմիր լալաները: Պայծառ, տաք՝ վառվում եր նրանցից յուրաքանչյուրի փոքրիկ բաժակն արևի տակ՝ իբրև բացված վերք,—անբուժելի, մխացող: Իսկ ամբողջ բույրը միասին՝ կարծես արյուն լիներ,—վազուց թափված, բայց դեռ թարմ:

Աղբյուրի մյուս կողմում, նույնպես մի մեծ բույրով՝ կանգնել եին վոսկեծաղիկները: Նրանց զարմանալի պայծառ, փոքրիկ բաժակներն անսահման նման եին լալաներին,—կարծես նրանք լալաները լինեին, վոր վոսկեծաղիկ եին դարձել, կամ արյունը լիներ, վոր վոսկեարկվել եր արևի:

Ամպամած չրթներին, իրենց յերկար բաղեղներն իբրև եին հյուսել ու ցանցել չաղրը-ծաղիկները, վորոնց բաժակներն իրար, վրանաձև եին և անմեղության պես սպիտակ ու դունատ-վարդագույն: Բաղեղները չորս կողմից կախվել եին ամպամած պատերն ի

վար, քառակուսի ավազանի մեջ, ուր մանրիկ քարեր կային թաղվածած և վրան անկյուններում կար յոթ մաքուր աղբյուրների անխուսափելի վկան,—չոր, դուռնաթափ հողափոշին:

Գարեջ տանդուղքի մի քանի աստիճանները, որոնք իջնում էին ավազան՝ անվթար էին մնացել, սակայն նրանց ճեղքերից դուրս էին ավել խոտեր ու կանաչներ՝ կարծես ուշխատելով իրարից հեռացնել վարպետի ձեռքով չարված քարերը:

***

Գալուստն իջավ ավազան և մի րոպե տարակուսած կանգնեց՝ չդիտենալով՝ ինչից սկսել: Ապա մոտեցավ աղբյուրաղբխին, բռնեց փայլուն, կարճ խողովակը, ասուղեց, չի՞ պատռվում արդյոք այն, չունի՞ արդյոք վրան դաղտնիք:

Խողովակը չէր պատռվում: Գլխաքարը նույնպես անշարժ էր:

Գալուստը կռացավ դեպի հատակը:

— Եղ ի՞նչ կենես, ողուլ...

Անապատելիորեն մի ջամատող ձայնից Գալուստը վշաքաղվեց և նայեց վերև:

Ավազանի պռունգին կանգնած էր հաջի Վարոսը:

— Եղ ի՞նչ կենես, Գալուստ ջան:

— Եկել եմ մորս դերեզմանին տեսության,—ասաց Գալուստը Գյումրու հին բարբառով և հանցանքի մեջ բռնված մի ժպտհուրթյամբ՝ նստեց ավազանի պռունգին: Հաջին նույնպես նստեց: Գալուստը նայեց նրան: Նա գիտեր հայու և իր մոր պատմությունը: Նաև

և, ձեռքը դնելով վշտից հավիտենապես կքած նրա թիկունքին՝ հարցրեց.

— Ըալը դո՞ւն ինչ կենես եատեղ:

— Ցե՞ս: Ցես ամեն որ կուզամ, կաշեմ, աղոթք կենեմ, յետ կերթամ... Բառասընհինգ տարեկան մարդ եմ՝ քսանհինգս մեղքի մեջ անցավ, հինգս՝ Ցերուսաղեմ երթալ-գալու ճամբին, մնացած տասնըհինգ տարին յես աղոթքով եմ անցուցե մեղավոր Հեղնարի հոգու հըմար: Ասպած ձենս վիմանա՞ թե չե՞,— չիտեմ, Ախր յես ավելի մեղավոր եմ...

Գալուստը ցավակցությամբ նայեց հաջի Վարոսին: Նայեց նրա մաղերին, որ չնայած դեռ վոչ ծեր հասակին՝ բոլորովին սպիտակ էին: Նայեց աչքերին, ուր չկար վոչ յեռանդ, վոչ փայլ:

— Հաջի, մերս մի՞տքդ ե,—հարցրեց նա:

— Ինչդ որ աչքիս առաջը կայնած եղնի,—չչնջաց հաջին խուլ ձայնով:

— Ի՞նչ տեսակ կնիկ եր մերս, հաջի...

Հաջին ձայն չհանեց: Նա մտածկոտ կախեց գլուխը և նայեց ցամաք խողովակին: Իսկ հետո, յերբ խոսեց, նրա խոսքերը Գալուստը պատասխանը չէին, այլ իր սեփական մտքերի.

— Սուրբ կնիկ եր, ողուլ... Սերը մեղք կհաչվեր, սիրուց կտանջվեր, վերջը սիրու մեղքեն ու տանջանքեն էլ մեռավ... Հեղնարն ի՞նչ,—մեր ժամանակն եր սուրբ ժամանակ... Վո՞վ կրնար մեղանչե... Աչե...

Ցեվ մատնացույց անելով աղբյուրի գլխագիրը, հաջին, ով գիտե քանիերորդ անգամ իր կյանքում, կարդաց:

— Հըմը հիմի, ողուլ, սեր ու մեղք իրար են

խառնըվե՛ք: Վոնչ ընտանիքի պատիվ և մնացե՛ք, վոնչ տղամարդու իրավունք: Եղ ենորեն և, որ հրաչք չկա, որ աստված մարդոց դործին ել չի խառնըվի:

Ասլա մի քիչ լռելուց հետո, ավելացրեց.

— Մարդը թերահավատ և դարձե՛: Ում կպատմեմ Հեղնար-ախպուրի մասին՝ չի ավատա: Կինդա: Կխընդա ու կմեղանչե: Մ'ննձանաց խոսք ե.— մե աչքը հազար անկաչ ածե: Ըսել ե՝ ինչքան կուզես անկաչը լից,— չի եղնի. աչքը պիտի լցվի, աչքը պիտի տեսնի, աչքը պիտի ատուգե...

— Ըսլը որ դան Հեղնար-ախպուրը քանդե՞ն, հաջի,— հանկարծ հարցրեց Գալուստը:—Մարդու հետաքըրքրվելն ամեն բանե վեր ե: Վո՞վ դիտե...

Հաջին դունատվեց, դողացող ձեռքը դրեց ուտատյի վորդու ծնկանը և չչնջաց.

— Ձես ինքս եղ բաներն չատ կվախենամ: Ըչտը ամմեն որ եատեղ գալուս նպատակն են ե, որ տեսնիմ՝ խո չե՞ն քանդե: Կսըպանեմ քանդողին, ասլածվկա, կմորթեմ տեղն ու տեղը: Ջանի յես սաղ եմ, Հեղնարի գելեզմանն անխախտ պիտի մնա...

Գալուստն արագ նայեց նրան: Հաջու մեռած աչքերն ատացել եյին կենդանություն, փայլում եյին կատաղի փայլով: Սակայն այդ տևեց միայն մի վայրկյան, աչքերը նորից պղտորվեցին, ջրակալվեցին, անշընչացան: Նա վեր կացավ:

— Կերթա՞ս, հաջի,—հարցրեց Գալուստը:

— Ըսլը դուն չի՞ս գա,—զարմացավ հաջին:

— Զե, հաջի: Ձես կուզեմ մե քիչըմ ժամանակ մենանակ մնամ իմ աղիզ մորս դերեզմընի քովը...

Հաջին յերկյուղածությամբ տեղի ավեց Գալուստի վորդիական զգացմունքներին և դանդաղաքայլ ու կորաքամակ՝ հեռացավ զըրալանջով: Գալուստը մի քիչ տեղ ուղեկցեց նրան: Ցերբ վերջապես նա անհետացավ լանջի վայրեջքում, Գալուստը վերադարձավ, նորից իջավ ավազան, թևերը վեր քաշեց և սկսեց աշխատել: Գործիքներ բերած չլինելու պատճառով, նա ամեն ինչ ձեռքով եր կատարում: Այդ դժվար եր և ժամանակ եր խլում, բայց վերջապես նա մեկ-մեկ հանեց ծանր սալաքարերը, չարեց ավազանի պռունդին: Նա չարժվում եր մեծ զգուշությամբ՝ նախապես ատուգելով վոտքերը դնելու տեղերը, վորպեսզի վոչինչ չփչացնի բացվող գաղտնիքից:

Ցերբ ավազանի ամբողջ հատակը սալաքարերից մերկացավ, Գալուստն սկսեց մեծ ուշադրությամբ զննել այն: Ավազանի ամբողջ հատակը ծածկված եր արդեն ժանգոտված յերկաթի մի պարզ կառուցվածքով: Ցուրաքանչյուր սալաքարի տակ կար մի ղեկ, վորի ծայրը դնում եր աղբյուրի պվխաքարի տակ և մխանում մյուս ղեկերի ծայրերի հետ: Բավական եր վոտք դնել սալաքարերից վորևե մեկի վրա, վորպեսզի ղեկը տեղմվեր և իր ծայրով փակեր աղբյուրի խողովակը:

Այդ եր հրաչքը...

Այժմ Գալուստը փորձեց պարզել, թե ի՞նչպես եր հաջողացրել ուտատա Մկրտիչը՝ քսան տարի առաջ լինել ավազան ու ջուր խմել: Ցեվ յերկար փնտրելու հարկ չեղավ: Գալուստը նկատեց, վոր յերեք սանդուխքներից յիրենից մարդ հաջողացնի իր յերկու վոտքերը միաժամանակ դնել յերկու տարբեր քարերի վրա, ա-

պա նրանց ղեկերի ծայրերն աղբյուրագլխի տակ իրար կսեղմվեն և նրանցից վոչ մեկը չի կարողանա շարժվել վեր՝ Ջրի անցքը փակելու համար: Այնուհետև կբերեի յեր վոտահ քայլերով առաջանալ դեպի աղբյուրի խողովակը և Ջուր խմել: Իսկ Ջրի վերընականորեն ընդհատվելն առաջացել եր այն բանից, վոր ուստան աննկատելի կերպով վոտքով պատացրել եր Ջրի անկման տեղի ծակ քարը:—այդ քարի տակ դնովոդ յերկաթաթերթը չուռ եր յեկել և Ջրի անցքը կալնել: Յերբ Գալուստը քարը նորից պատացրեց, քանի տարվա ցամաք աղբյուրից նորից վար թափվեց անապակ Ջուրը:

Նույն րոպեին, ավազանի պռունդից լսվեց մի բարձր, խռպոտ ճիչ.

— Յա՛...

Գալուստի սիրտը կարծես կանգ առավ:

Այնտեղ նորից կանգնած եր հալին և անակնկալ տեսարանից չռված աչքերով՝ անթարթ նայում եր մերթ Ժանգոտ յերկաթնուրին, մերթ վազող Ջրին:

— Յա՛,—կրկնեց նա և ցատկեց ավազան:—Ես ի՞նչ ե...

Առանց պատասխանելու, Գալուստը վոտքը դրեց յերկաթնուրից մեկի վրա, հետո թողեց, միանգամից սեղմեց յերկու յերկաթնուր, հետո այդ ել թողեց և ժռտեցավ Ջրին:

Բայց հալին առանց այդ ել, արդեն ամեն ինչ հասկացել եր:

— Լսել ե՝ ե՞ս եր հրաշքը,—մրմնջաց նա,—չարունակելով անթարթ նայել: Ապա, կարծես նոր միայն նկատելով ամեն ինչ՝ նորից բացականչեց.— յա՛...

Ջուրը չարունակում եր հոսել խաղաղ և անընդ-

հատ: Գալուստը, Ջրի մոտ կանգնած, մտածում եր ուստա Մկրտչի այդ աղբյուրի մասին, վորը չեր մըտնում նրա քառասուն պայծառ աղբյուրների շարքը և չեր ել կարող մտնել, վորովհետև այնքա՛ն տարբեր, այնքա՛ն ուրիշ եր դա...

Հալչի Վարոան ոճիքը քաշեց: Թվում եր, թե նրա աչքերը վոչինչ չեյին տեսնում:

— Սաղ քաղաքն ավատաց,—մրմնջաց նա:—Սաղ քաղաքը մեղքրեց ընձի ու Հեղնարին: Սերը պապանձվավ... Ընտանիքի որենքը սուրբ դարձավ... Գյումրին...

Հալչու հետզհետե մարվող ձայնն անլսելի դարձավ և Գալուստը չկարողացավ լսմանալ նրա խոսքերի չարունակությունը: Յերբ նայեց նրան, նրա շրթունքները դեռ չարժվում եյին անբարբառ: Բայց հանկարծ նա դադարեց մրմնջալուց, արագ թեքվեց դեպի Ջուրը, նայեց,—կարծես մի նոր բան տեսնելով: Հետո զույգ ձեռքերով բռնեց գլուխը և բղավեց.

— Յա՛... Սաղը կյանքս ընչի՞ անցավ...

2

Անտովոր կերպով համրընթաց՝ դնում եյին յերկու կառքերը դեպի Արփիչայ: Կարծես լալիս եյին դանդաղ անվները, կարծես լալիս եյին ձիերի քայլերը: Մի նվազ, լացի պես խորն ու մղկտացող, հորդում եր կառքից և դնում արձագանքելու հեռու-հեռվում: Որը վար եր յեկել, արևը հասել եր յերկնքի բարձր կետին, բայց կառքերը դեռ նոր եյին լքնում դեպի նվիրական դետի հովիտը: Յերբ եյին հասնելու Ջրափ, ո՞վ գիտեր...

Կառքերից մեկում նստած եր ուստա Մկրտչի սի-

րելի դառը-դուռնայի խումբը, նաև նա Ավետիքը, վորի կյանքն անցել եր կամուրջներ կառուցելով: Նա դառը թախիծով դրել եր թևը կառքի կողին, դրել եր յերեսը թևի վրա և ունկնդրում եր:

Մյուս կառքում վոչ վոք չկար:

***

Կառքերը վերադարձան քաղաք, իսկ Ավետիքը սիրտը քաշ արեց մի հով ուռենու տակերում: Ջուրը հոսում եր սիրտի մոտով, թրջելով նրա արևոտ ծայրը:

Դառը-դուռնաչիների նստելու համար նա դառավ բերեց յերեք քար: Նրանց առջև դրեց ուտելիք, ողի և բաժակներ: Մի քիչ այն կողմ՝ վռեց սիրտը: Ուստա Մկրտչին հատկացրեց ամենալավ տեղը՝ սիրտի դլխին, ծառի բնի տակ: Շարեց յոթ բաժակ, ողի լցրեց: Ընկերների բաժակների մոտ դրեց խորոված և այլ խորտիկների ամենալավ պատառները: Ինքը նստեց սիրտի մի կողմում՝ լուռ, դլխահակ: Դլխահակ լսեց դառը-դուռնայի լայող յեղանակը, ապա յերբ նվագի վերջին հնչյունները մարեցին ծառերի զով սաղարթներում, նա վերցրեց իր բաժակը, խփեց ուստայի բաժակին և ասաց.

— Ես վերջի անգամն եմ՝ առաջի կենացը կենացդ եղնի, ազիզ... Կյանքդ ննջան յերկան եղնի, ինչքան որ,—ավռաս,—մահն և յերկան...

Նորից բաժակը խփեց ուստայի բաժակին՝ լամեց: Հետո հերթով վերցրեց ուստայի ողին, Ոնեսի ողին, կարոյի ողին, Աղաստու ողին, Բաղրատի ողին, Սարդսի ողին՝ չպրտեց նվիրական գետը: Ջուրն ողին տարավ:

Հետո, յերբ յերկրորդ անգամ լցրեց բաժակները՝ նախատինքով դիմեց ընկերներին.

— Ե, մեննակ յե՞ս պիտի ծառայութիւն ննեմ: Բախի լցեք: Ձեռներդ խո չե՞ ջարդե: Ի՞նչ եղավ ձեզի...

***

Արևն իջավ:

Յերբ Ավետիքը նայեց վեր՝ դեպի աննկատելիորեն բարձրացող դաշտը,—նրա բարձրում ձղված բլուրի կտրվածքում յերևացին վերադարձող յերկու կառքերը:

Ավետիքը բաժակների մեջ լցրեց ամենավերջին ողին:

— Ես վերջի անգամն եմ՝ վերջի կենացը կենացդ եղնի, ազիզ...

Ցնվ խոնարհվ իր ողին, բոլորի վրը բաժակները հավաքեց, նետեց Արփաչայ:

Կառքերը մոտեցան: Դառը-դուռնաչիները վեր կացան, նստեցին կառք: Ներանք նվագում եյին ամենատխուր յեղանակը.—այնպիսի տխուր յեղանակ, վոր թվում եր, թե նվիրական գետով արցունք եր հոսում:

Ավետիքը բարձրացավ մյուս կառքը: կանգնեց կառքի մեջ, ձայն տվեց.

— Ջնեք, երթամ անցնիմ Ջրանգբի կարմունջի վրայեն...

***

Արփաչայում լողանալուց վերադարձող յերեխաները ցավակցական դեմքերով լուռ հետևում եյին մի

վոտաբոբիկ ու գլխաբաց մարդու, վոր ոլորվելով պնոում եր մի քանի քայլ, ապա չեչոտակի կանգ առնում, զուլդ ձեռքերով բռնում գլուխը և բացականչում.

— Ցա՛... Ըսըը կյանքա ընչի՞ անցավ...

1933–1935

Ցերևան

—

Պատ. խմբ. Տ. Խոջունի
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբադրիչ Ո. Գասարջյան

Инв. № 36494

ՀՀ Ազգային գրադարան
NL0328823

22114
2-12694а

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.
ԿԱԶՄԸ 50 ԿՈՊ.

891.99
Ա-91

М. АРМЕН

ЭГНАР АХПЮР

ГИЗ ССР Армении, Эривань, 1936 г.